Էջմիածին



1964

ՌՆԺԴ

ԻԱ ՏԱՐԻ

Հոկտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ժ

1964

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Ցիկագոյի հայոց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման տոթիվ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Պահե՛լ Երուսաղեմի օդաշուրման նշմարիտ ոգին	5
Հաղորդագրություն	10
Վենափառ Հայրապետի գահակալության ինն երորդ տարեդարձի հանդիսությունները Մայր Աթոռում	11
Հաղորդագրություն Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Նդիշե արքեպիսկոպոս Տերտերյանի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելության մասին	18
Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Նդիշե սրբազան պատրիարքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	19
Հաղորդագրություն Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտոր Ժոզե դե Ազեբեդո Պերդիգաոնի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելության մասին	26
Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտոր Ժոզե դե Ազեբեդո Պերդիգաոնը Մայր Աթոռում	27
Պաշտոնական ընդունելություն	31
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	32
Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանի 1964—1965 ուսումնական տարվա վերաբացումը	36
Գ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ— Շարականների սեռը միջնադարյան հայ բանաստեղծության մեջ	38
ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ— Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը	44
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ— Թանգատի վանքը կամ Ղարավանքը և նրա վիմագիր արձանագրությունները	52
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	61



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1964 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԾԹՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՁԻԿԱԳՈՅԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՎ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՁԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՀՈԳԵՒՈՐ ՍՊԱՍԱՒՈՐԱՑ ԵՒ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՁԻԿԱԳՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Աստուածակառոյց Սուրբ Էջմիածնէն ջերմագին ուրախութեամբ կ'ողջունենք Համայնքիդ Ս. Գրիգոր Լուսաւորիչ նորակառոյց Եկեղեցւոյ սուրբ օծումը, որ տեղի կ'ունենայ յաւի Տեառն 1964 Հոկտեմբեր 4-ին:

Մենք, թէև շատ հեռու ձեր երկրի ափերէն, Մեր ամբողջ սրտով այսօր ձեզի հետ ենք և ձեր մէջ, բերելու համար ձեր նորաշէն Եկեղեցիին և ձեզի ամէնուդ Մեր հայրապետական օրհնութիւնը:

Թող յաւիտեան անսասան մնայ ձեր աղօթքի այս տունը և միշտ շողայ առատ լոյսի մէջ: Անոր Սուրբ Սեղանէն թող բաշխուին աստուածային շնորհներ և օրհնութիւններ՝ ձեզի բոլորիդ, ձեր կաւակներուն և անոնց կաւակներուն:

Թող յաւէտ վառ մնայ Ս. Գրիգոր Լուսաւորչի կանթեղը ձեր տուներէն և ձեր սրտերէն ներս, որպէսզի առաւել պայծառ ճառագայթէ Քրիստոսի Աւետարանի լոյսը ամերիկեան բարի և հիւրընկալ հողին վրայ:

Թող ամերիկահայ ժողովուրդը միշտ սիրով միաբան, հաւատարիմ մնայ մեր նախնեաց լոյս հաւատքին, մեր Մայր Եկեղեցիին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ձեր աղօթքի տունին օծման այս պատմական պահուն, Մեր օրհնութեան այս կոնդակով, սիրեցեալ եկեղեցաշէն կաւակներ Մեր, կծեվ բոլորդ կը շնորհաւորենք և սրտանց կը գնահատենք աստուածահաճոյ խանդն ու աշխատանքը համայնքիդ հոգևոր դասուն և ծխական խորհուրդին, ընդ ատենապետութեամբ Տիար Հայկ Փիտեանի:

Կեցցէ՛ Չիկագոյի հայ բարեպաշտ ժողովուրդը:

Կեցցէ՛ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին:

Արդ, սիրելի՛ք Մեր, «Եղերուք նմանողք Աստուծոյ, իբրև որդիք սիրելիք, և գնացէք սիրով որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ», և «հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի» (Եփես. Ե 1—2 և 21):

ԵՒՍԵԲԻԱՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 10-ն սեպտեմբերի
1964 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԴ,
ի մայրավանս Արբոյ Էջմիածնի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՀԵ՛Լ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՈՂՋԱԳՈՒՐՄԱՆ ՃՇՄԱՐԻՏ ՈԳԻՆ

Ճիշտ մի տարի առաջ, 1963 թվականի հոկտեմբերի 26-ին, Երուսաղեմում, Սրբոց Հակոբայանց մայրավանքի նվիրական կամարների տակ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի պատմական եղբայրական ողջագուրմամբ և գրկախառն ուխտով փարատվում էր այն ծանր տագնապը, որը ճնշում էր հայ հոգիների վրա 1956 թվականի փետրվարից:

Երուսաղեմի ողջագուրումը բացառիկ և կարևոր իրադարձություն էր Հայ Եկեղեցու կյանքում, որն ընդունվում էր բովանդակ հայ ժողովրդի կողմից սրտագին գոհունակությամբ, երախտագիտությամբ և անխառն հրճվանքով, որպես ուրախալի մի դեպք, սրբազան մի դաշինք, որը հուսալի հեռանկարներ էր բացում ազգային-եկեղեցական տագնապի բարվոք լուծման ճանապարհին, համերաշխության ոգին ու համագործակցության շինարար ընթացքը վերականգնելու տեսակետից:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ գլուխ բերված Երուսաղեմի ողջագուրումը արդարև Տ. Տ. Վազգեն Վեհափառ Հայրապետի, որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Պետի և Գլխի, եկեղեցաշեն, ազգանվեր մտորումների և խաղաղասիրական խոհերի կենդանի արտահայտությունն էր:

«Եւ մեզ պաշտօնն հաշտութեան» (Բ Կորնթ. Ե 18), **«Քանզի ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած»** (Ա Կորնթ. Է 15):

«Մեր ողջագուրումը և հաշտությունը կնկատենք»,— լավատեսությամբ շեշտում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Երուսաղեմում, հոկտեմբերի 28-ի հրաժեշտի սեղանին,— **աստվածային շնորհ մը, որուն արդյունքները և պտուղները հետզհետե պիտի կարողանանք ճաշակել և վայելել... Մենք վստահ ենք, որ հիմնականը կատարվեցավ սակայն: Եթե կա փոխադարձ սեր և վստահություն և քարի կամեցողություն, մնացածը ինքնին պիտի գա և այդ ոգին հետզհետե իր շինարար և բարերար դերը պիտի կատարե Հայ Եկեղեցվո կյանքին մեջ»:**

Երուսաղեմի ողջագուրման հաջորդող ամիսներին, Եգիպտոսում, Հնդկաստանում և Մայր Աթոռում մինչև այսօր, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը թե՛ գործով և թե՛ բանիվ աշխատել է **«արթուն կերպով հսկել»**, որ հոկտեմբեր 26-ի ոգին **«արմատանա մեր եկեղեցական և ազգային կյանքեն ներս և դառնա կենսաբեր և պտղառատ»,**— ինչպես գրում է Վեհափառ Հայրապետը:

Երուսաղեմի ողջագուրմամբ Հայ Եկեղեցու ներքին տագնապը փարատած տեսնելու ուրախությունը սակայն երկար չտևեց:

Մայր Աթոռին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և մեր ժողովուրդին սպասում էին դեռևս ծանր փորձություններ, ճնշող նոր հուսախաբություններ:

Երուսաղեմի եկեղեցաշեն ողջագուրման ոգու կենսագործման ճանապարհի վրա երևան եկան

դժվարություններ. եղան ոչ բարեկամական արտահայտություններ, կատարվեցին նորից մի շարք ոչ կանոնական գործեր, որոնք ոչ միայն խանգարում էին անձկանոք սպասված եկեղեցական միության և հաշտության գործը, այլ նաև ժխտումն իսկ էին հոկտեմբեր 26-ի ողջագուրման ոգու, և «գլուխ-գլխի կպարնվի Երուսաղեմի Մեր ողջագուրումի ոգիին հետ և նման գործելակերպ նոր դուռ կբանա երկպառակության և խռովության»,— գրում է Վեհափառ Հայրապետը Իր 14 մարտ թվակիր նամակում, ուղղված Տանն Կիլիկիո Կաթողիկոսին:

Այնուամենայնիվ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, միշտ լավատես, ստեղծված այդ դժվարությունները հարթելու համար, վերջին մի քանի ամիսների ընթացքում Տ. Խորեն Ա Կաթողիկոսին ուղղած Իր մի շարք նամակներով, աշխատում էր վերացնել ստեղծված այդ դժվարություններն ու թյուրիմացությունները, ի պահպանումն ու համրապնդումն հոկտեմբեր 26-ի ողջագուրման ճշմարիտ ոգու:

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի օգոստոս—սեպտեմբեր միացյալ համարում հրապարակվել են Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի միջև փոխանակված գրությունները:

Հրատարակված այդ նամակները կարևոր պաշտոնական փաստաթղթեր են, որոնք հստակորեն ցույց են տալիս Կիլիկյան Աթոռի բռնած դիրքը և Մայր Աթոռի մտահոգությունները, հոկտեմբեր 26-ից հետո պատահած դեպքերի վերլուծության լույսի տակ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մարտ 14, հուլիս 5 և օգոստոս 27 թվակիր նամակները սիրո և միության նոր կոչեր են, սրտագին հրավերներ միաժամանակ, Հայ Եկեղեցու հոգևոր իշխանության սուրբ բարձունքից, Տ. Խորեն Ա Կաթողիկոսին հասցեագրված, որ «ամբողջ և անխռով» պահվի ու պահպանվի հոկտեմբեր 26-ի ողջագուրման ճշմարիտ ոգին, որպես հիմք նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կանոնական հարաբերությունների և ապագա սիրալիր համագործակցության:

Երուսաղեմում, հոկտեմբեր 26-ի ողջագուրման այդ խանդավառ բայց կարճ օրերին, բնական էր, որ չէին կարող գործնականապես լուծվել վիճելի բոլոր հարցերը:

Ողջագուրումը հուսալի սկիզբն էր, նախապայմանը հաշտության, և ոչ թե ինքնին հաշտություն կամ բանակցություն: Ողջագուրման պետք է հաջորդեին բանակցությունն ու հաշտարար աշխատանք:

«Ճիշտ է, Երուսաղեմի Մեր ողջագուրումը առանց պայմանի եղավ, սակայն պարզ է, որ այդ ողջագուրումը կոչված էր ինքը պայման հանդիսանալու մեր եկեղեցական կյանքի միասնության և խաղաղության, և Մայր Աթոռիս և Կիլիկյան Աթոռի միջև օրինական, եղբայրական հարաբերությունների վերականգնման, այսինքն իրական հաշտության»,— գրում էր Վեհափառ Հայրապետը Տ. Խորեն Ա Կաթողիկոսին ուղղած Իր 14 մարտ թվակիր նամակում:

Այս մտածումների լույսի տակ էլ, Երուսաղեմում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը հույս էին հայտնում, որ մոտիկ ապագայում, թղթակցությամբ, փոխադարձ հասկացողությամբ և մեր եկեղեցական կանոնների և ավանդությանց համաձայն, բոլոր վիճելի հարցերը իրենց կանոնական և տրամաբանական լուծումները կգտնեն և ճշմարիտ համագործակցություն, եղբայրական սեր և միություն կվերահաստատվեն Հայ Եկեղեցու ծոցում, մեր ժողովրդի և Եկեղեցու գերագույն շահերի ըմբռնմամբ:

Այս մասին Տ. Խորեն Ա Կաթողիկոսը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին գրած Իր ապրիլ 14 թվակիր նամակով հաստատում էր. «Ձերմորեն պիտի խնդրեինք Ձեզմե, որ, ինչպես խոսեցանք Երուսաղեմի մեջ, որևէ թյուրիմացության կամ տարակարծության պարագային, թղթակցությամբ հարթեինք հարցերը Մեր միջև և նորանոր դժվարություններ չստեղծվեին իպուր տեղ սփյուռքահայ մեր կյանքեն ներս»:

Երուսաղեմի ողջագուրումից անցել է ճիշտ մի տարի, իսկ ո՛չ մի փոփոխություն տեղի չի ունեցել Անթիլիասի եկեղեցական ղեկավարության մտայնության, գործելու կերպին մեջ: Այդ պատճառով ո՛չ մի վիճելի, կանոնական հարց դրականորեն չի լուծվել, ո՛չ մի կարևոր տարակարծություն չի հարթվել: Ավելին, Անթիլիասի Գահակալը և եկեղեցական իշխանությունները արեցին բանավոր և գրավոր մի շարք ծանրակշիռ այնպիսի հայտարարություններ և գործեր, որոնք ժխտումն իսկ էին ողջագուրման ոգու, և որոնց ի տես և ի լուր, «Մեր սիրտը պաղ երկաթի մը

հպումը զգաց, և պահ մը բարոյական սարսուռի ալիք մը անցավ Մեր Հոգիին մեջեն,—գրում էր վշտով Ամենայն Հայոց Հայրապետը իր 14 մարտ թվակիր նամակում:

Ողջագուրումից հետո առաջին և մեծ հուսախաբությունը ապրեց Վեհափառ Հայրապետը 1963 թվականի դեկտեմբերին, կարդալով Տ. Խորեն Կաթողիկոսի հայտարարությունը «Ամերիկայի ձայն» ռադիոյի գործակալության թղթակցին, և երբ Մայր Աթոռում 1964 թվականի հունվարին ստացվեց Անթիլիասի պաշտոնաթերթ «Հասկ» ամսագրի 1963 թվականի հոկտեմբեր—դեկտեմբեր միացյալ համարը, ուր տպագրվել էին Տ. Խորեն Ա Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը՝ գրի առնված Երուսաղեմի հանդիպումից հետո, որտեղ ակնարկություն իսկ չկար հոկտեմբեր 26-ի ողջագուրման մասին, և այլ հոդվածներ՝ նվիրված Երուսաղեմի ողջագուրման, որոնցում Կիլիկյան Աթոռը յուրահատուկ ձևով ըմբռնում և մեկնաբանում էր Երուսաղեմի հանդիպումը, ամբաստանում էր Մայր Աթոռը՝ Սփյուռքի հայության ազգային-եկեղեցական կյանքին և մտահոգություններին միջամուխ լինելու... մեղադրանքով:

Այդ հայտարարությունները և այդ գործերը եկան փաստելու, թե արդարև ոչինչ չի փոխվել Անթիլիասի հին մտայնության և գործելու կերպի ու ձևի մեջ՝ ողջագուրումից հետո էլ, և վկայելու, թե ողջագուրման ոգի, եղբայրական համբույր, համերաշխություն և սեր Անթիլիասի համար նշանակում են «հաշտվել» 1956 թվականից հետո ստեղծված կացության հետ և առավել խորացնել այն:

Զաղջր խոսքերը, ձևական և զգացական արտահայտությունները ոչ մեկ արժեք չեն ներկայացնում, երբ գործերը ճիշտ հակառակն են ապացուցում և հանդիսավորապես տրված խոստումները չեն հարգվում:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Երուսաղեմում, աստվածային ներշնչման մի պահի, հավատով և հույսով հղացավ ողջագուրման միտքը:

«Դիվանագիտական բանակցություն վարելու ոգիով չէր շարժած Ամենայն Հայոց Հայրապետը՝ Խորեն Ա-ի հետ ունեցած հանդիպման միջոցին», և «դիմացը հակառակորդ մը, օտար մը ունենալու ոգիով երբեք չէր մոտեցած բանակցություններու ընթացքին» («Բյուրակն», 15 մայիս):

Նորին Ս. Օծության նախաձեռնությամբ կատարված այդ ողջագուրումով, վերջ գտավ Կիլիկյան Աթոռի հանդեպ կանոնական ընդդիմությունը. Կիլիկյան Աթոռն իր օրինական դիրքը վերագտավ Հայ Եկեղեցու նվիրապետության ծոցում, վայելելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական ողջունումը, պաշտպանությունն ու գործակցությունը:

Երուսաղեմի պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, «Սիոն» ամսագրի 1963 թվականի հոկտեմբեր—դեկտեմբեր միացյալ համարի խմբագրականում, գրի առնված Երուսաղեմի ողջագուրման տպավորության տակ, նշում էր. «Իրագործումը պետք չէ նկատվի կողմնակի շահերու աճպարար ցուցադրություն մը լոկ, տեսակ մը քաղաքական ձեռնածություն, որոնց հանդիսատես կըլլանք ամեն օր: Կուզենք հավատալ, թե տեղի ունեցածը սրբազան դաշինք մըն էր, հավատքով ու սիրով լեցուն, նման երանելի մեր մեծ հայրապետներու դարավոր փորձին, որոնք գիտցած են միշտ ներկայի մշուշներեն և տրտմություններեն անդին տեսնել մեկի հատուկ ճշմարտությունը, և ոտնակոխելով ամեն կարգի արգելքներ, նայած են հասարակաց բարիքի այդ լուսաստղին, բոլորապինդ ու վճռական»:

Դժբախտաբար, Անթիլիասում նստած մարդիկ նույնն են երեկ և այսօր, նույն ոգին է, որ շարժման մեջ է դնում քողարկված ծրագիրը՝ Սփյուռքը բաժանելու իր Մայր Եկեղեցուց՝ Մայր Աթոռից: Եվ ցավ է արձանագրել, որ քանի Անթիլիասում կան նույն ոգին, նույն մտայնությունն ու գործելու եղանակները, անհասկացողությունները վերջ չեն գտնի, միասնություն և համագործակցություն չեն կարող իրականություն դառնալ:

Երբ հայ ժողովուրդը նախապատրաստվում է 1965 թվականին համազգային կերպով ոգեկոչելու և մեծարելու խնկելի հիշատակը Ապրիլյան եղեռնի մեր բյուրավոր նահատակների, Անթիլիասը, այս պատմական պահին, չպետք է որդեգրի այս ընթացքը, որը բացահայտորեն ժխտումն է Երուսաղեմի ողջագուրման ոգու և նոր խրամատներ է բացում Սփյուռքի հայության կյանքում:

Ցավալի է, շատ ցավալի, հաստատել այս տխուր իրողությունը:

Գոնե Ապրիլյան եղեռնի 50-ամյակի ոգեկոչումը, մեր բյուրավոր նահատակների նվիրական հիշատակը, նրանց հայրենանվեր ոգին ու հավատը լինեին ցանկալի առիթը՝ Հայ Եկեղեցու ծոցում ազգային-եկեղեցական բաղձալի միասնականությունը վերահաստատելու ճանապարհի վրա:

Մանավանդ Մարսիլիայի խնդիրը փորձաքարը հանդիսացավ Կիլիկյան Աթոռի մտայնության:

Ինչ կանոնապես շահել էր Երուսաղեմում Անթիլիասը, բարոյապես կորցրեց Մարսիլիայի պարագային:

«Նժարի մեջ դրված է այժմ Անթիլիասի Կաթողիկոսարանի բարոյական հեղինակության և վստահելիության խնդիրը» («Բյուրակն», 15 մայիս):

Այսպես են գնահատում մեր ժողովուրդը և Սփյուռքի հայ մամուլը Մարսիլիայի ոտնձգությունը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, եկեղեցական տագնապի լուծման համար, Երուսաղեմում կատարեց բարոյական առավելագույն զոհողությունը:

Ճիշտ էր Երուսաղեմի ողջագուրումը, տեղին և արդար, որպես եկեղեցաշեն գործ, որին սպասում էր բովանդակ հայ ժողովուրդը: Ոչ մի դեպքում չպետք է կղզալ ողջագուրման համար: Մայր Աթոռը և Վեհափառ Հայրապետը «անշարժ կմնան Երուսաղեմի ողջագուրումի ոգիի վեմին վրա»: Այդ պատճառով, Ամենայն Հայոց Հայրապետը ամեն միջոց ի գործ է դնում, փորձում, պայքարում, որպեսզի պահպանվի այդ շինարար, այդ փրկարար ոգին ոչ միայն խոսքով, այլ մանավանդ կենդանի գործով:

Հաշտության հուսալից տկիվբը դրվել է Երուսաղեմի ողջագուրմամբ: Դեռևս սակայն կան վիճելի բաղում հարցեր, որոնք լուծման կկարոտին: Եվ ահա, Նորին Ս. Օծությունը, որպես Պետ և Գլուխ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, իր 14 մարտ, 5 հուլիս և 27 օգոստոս թվակիր նամակներում, որպես բնական հետևություն Երուսաղեմի ողջագուրման, առաջ է քաշել և Կիլիկյան Աթոռին և նրա Գահակալին է ներկայացրել ութը հիմնական հարցեր, որոնք սերտ կապ ունեն մեր եկեղեցական վերջին տագնապի հետ և առնչվում են մեր ազգային-եկեղեցական միասնության և մեր ներքին կյանքի խաղաղության հետ, հարցեր, որոնց պետք է պատասխանի Խորեն Կաթողիկոսը բացարտորեն, առանց դիվանագիտության, հստակ և մեկին, մեր եկեղեցական կանոնների և ավանդությունների լույսի տակ, եթե նույնպես անկեղծ է Անթիլիասի ցանկությունը՝ եկեղեցական տագնապը լուծված տեսնելու բնագավառում:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին գրած իր ապրիլ 14 և օգոստոս 5 թվակիր նամակներում, Տ. Խորեն Կաթողիկոսը հանգամանորեն և ըստ էության չի պատասխանել Նորին Ս. Օծության մարտ 14 և հունիս 5 թվակիր նամակներին, Անթիլիասի Գահակալին ներկայացրած հիմնական հարցերին:

Տ. Խորեն Կաթողիկոսն իր վերջին նամակում խոսում է ընդհանրապես «հայ կյանքի ներկա պայմաններուն մեջ», Կիլիկյան Աթոռի նոր, յուրահատուկ ձևով ըմբռնված «առաքելության» մասին: Թե ի՞նչ «հայ կյանքի ներկա պայմաններ են» դրանք, ոչինչ հայտնի չէ, և զանգատվում է, որ հարգվեն Կիլիկյան Աթոռի իրավասությանց սահմանները և գործունեության ապատությունը:

Ոչ ոք մինչև այժմ չի սպառնացել և չի սպառնում Կիլիկյան Աթոռի հեղինակության, իրավասություններին և գործելու ապատության: Երևակայական այդ երկյուղը ոչ մի հիմք չունի: Ոչ ոք ոտնձգություն չի կատարել Կիլիկյան Աթոռի իրավասությանց սահմանների մեջ: Ոչ ոք չի սպառնացել և չի սպառնում Կիլիկյան Աթոռի գոյության և վարչական ու կազմակերպչական ինքնավար գործունեության:

Բայց հակառակն է ճիշտը: Անթիլիասի Աթոռն է որ ոտնձգություններ, ոչ օրինական միջամտություններ է կատարում Մայր Աթոռին ենթակա թեմերում: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի վերջին երեք նամակները կոնկրետ օրինակներով ցույց են տալիս կատարված այդ անօրինությունները, ոտնձգությունները՝ Մայր Աթոռի իրավասությանց կալվածից ներս:

Մայր Աթոռը և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ինչպես փաստերն են ապացուցում, աշխատում են բարձրացնել Անթիլիասի Աթոռի հմայքն ու հեղինակությունը այն առողջ մտածումով, որ որքան զորավոր լինեն Հայ Եկեղեցու նվիրապետական կազմի մեջ մտնող մասնավոր Աթոռները՝ «մասունքն ի հանուրն

տեսանին, բայց ոչ հանուրն ի մասունս» (Փիլիպպոս Աղբակեցի)՝ նույնքան կորավոր կլինի ամբողջը, Հայ Եկեղեցու նվիրապետական լրիվ կազմը և նրա Գլուխը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Կիլիկյան Աթոռը տեղական ինքնավարության ինքնությունքի վրա հաստատված մասնավոր Աթոռ է Հայ Եկեղեցու նվիրապետության ծոցում, իրեն հատուկ իրավասությանց սահմաններով, սահմաններ, որոնք արդեն իսկ ճշտորոշվել են մեր եկեղեցական գիտակցության և ժողովրդի զգացումունքների մեջ, և մենք չէ որ այսօր մեր օրերին պիտի փոխենք այդ սահմանները և այդ ըմբռնումները:

Մայր Աթոռը և Վեհափառ Հայրապետը «ճիշտ այդ է որ կը պահանջեն» (օգոստոս 27) Ս. Խորեն Կաթողիկոսից և Կիլիկյան Աթոռից, այսինքն՝ «պատմականորեն, կանոնականապես և դարերու ավանդությամբ նվիրագործված» իրավասությանց սահմանների հարգում:

Ս. Խորեն Կաթողիկոսի օգոստոս 5 թվակիր նամակում խոսվում է նաև «Կիլիկյան Աթոռի անկախության, նվիրապետական բարձրագույն երկու Ս. Աթոռներու հավասարպատիվ» լինելու նորելուկ տեսակետի մասին, մի հանգամանք, որը երբեք չի համապատասխանում պատմական փաստերին, մեր եկեղեցական կանոնների ոգուն և մեր ժողովրդի ըմբռնումներին ու գիտակցության:

Դեռևս իր ժամանակին Օրմանյան սրբազանը նման փորձ և մտայնություն իրավացիորեն գնահատում էր որպես «կիլիկեցիներու հավակնոտ մեծամտության մերթ ընդ մերթ երևան եկող հայտարարություն, որ հերքվելու իսկ պետք չունի, կի պատմական պարագաները շատ որոշ են այդ մասին» («Ազգապատում», Բ, էջ 2447):

Ճիշտ մեկ տարի է բոլորվել Երուսաղեմի ողջագուրումից, և այդ ժամանակահատվածը ցույց տվեց, որ Մայր Աթոռի և մեր նվիրապետական մյուս Աթոռների համար ամենակարևոր հարցը պատմական և կանոնական սերտ համագործակցության ամրապնդումն է նվիրապետական Աթոռների միջև: Ահա՛ օրվա հրամայականը, հոգուտ Հայ Եկեղեցու և ի շահ հայ ժողովրդի:

Կանոնական և հստակ հնչում է նորից Ս. Էջմիածնի բարձունքից, հայրենի աշխարհից, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սիրո հորդորը, կոչը.

«Սիրելի՛ և շնորհակարդ Եղբայր Մեր, եկեք աչքի լույսի պես պահպանենք այդ հրաշագործ ոգին, թույլ չտանք, որ Աստուծո այդ շնորհը հեռանա մեզմե և մեր Եկեղեցիեն: Այլապես մեր բոլոր հույսերը կրնան շիջիլ, թողլով կմեզ և արտերկրի հայ ժողովուրդը խավարի և կույր կիրքերու ալեկոծումներու մեջ: Երբեք, երբեք պիտի չկամենանք Մենք վերադարձը նման տխուր օրերու և ամուլ պայքարներու» (14 մարտ):

«Մենք կուզենք տակավին վերջին հույս մը սնուցանել, թե պիտի վերադառնաք Երուսաղեմի Մեր ողջագուրումի ճշմարիտ ոգին, ոչ միայն բանիվ, այլ նաև գործով, միասնական ճիգերով վերահաստատելու համար մեր եկեղեցական կյանքին մեջ օրինականությունը, անկեղծ եղբայրությունը և շինարար գործակցությունը, առաջնորդված մեր Ս. Եկեղեցվո բազմադարյան կանոններով, ավանդություններով և ըմբռնումներով, և մեր ժողովուրդի իրավ ու տևական շահերով: Մտածենք ապագայի մասին: Մտածենք, թե ի՞նչպես պիտի դատե հայ ժողովուրդը մեր այսօրվան գործերը, հարյուր տարի հետո» (27 օգոստոս):

«Թագաւոր երկնաւոր, զԵկեղեցի քո անշարժ պահնա, և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան»:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետը՝ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա, սեպտեմբեր 24 թվակիր էջ գրությամբ դիմել է Կաթողիկե Եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբություն Տ. Տ. Պավղոս Զ Պապին, Համայն Ռուսիոց Պատրիարք Ն. Սրբություն Տ. Տ. Ալեքսիին, Քենտրբերիի Արքեպիսկոպոս Նորին Գերաշնորհություն դոկտ. Մայքլ Ռեմսիին և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար հայր դոկտ. Վիսեր դ՝ Հուֆտին, հրավիրելով քրիստոնեական քույր եկեղեցիները, որպեսզի առաջիկա տարի ապրիլի 24-ին մասնակցեն Հայ Եկեղեցու և ժողովրդի մեծ սուգին, աղոթելով մոտ երկու միլիոն հայերի հոգվոց համար, որոնք նահատակվեցին Արևմտյան Հայաստանում, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
26 սեպտեմբերի 1964 թ.



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում

Հոկտեմբերի 4-ին, կիրակի, աղջիս Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձն է։

Այս բերկրալի առիթով, Մայր Տաճարում Երուսաղեմի ամենապատիվ սրբազան պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը մատուցում է հանդիսավոր սուրբ պատարագ։

Աշնանային գեղեցիկ և չերմ արևը ոսկեզօծել է Արարատյան ողջ աշխարհը։

Ուխտավորների բազմությունները լցրել են Մայր Տաճարն ու շրջակայքը։

Տոնական ու հանդիսավոր հնչում են Մայր Տաճարի զանգերը։

Ժամը 11-ին, Վեհարանում ղեկավարված, եկեղեցական թափորով, ամպհովանու տակ, սրբազան պատրիարք հայրը առաջնորդվում է հանդիսավորապես Մայր Տաճար։

Աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել ուխտավորներ ԱՄՆ-ից, Լիբանանից, Ֆրանսիայից և պաշտոնական հյուրեր, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ։

Ավագ բեմի առաջ, ատյանում, սուրբ պատարագի արարողության ներկա են նաև Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժորժ դե Ազերեդո Պերտիգանը իր տիկնոջ հետ, տիկին Ռիտա Եսայանը, պր. Ռոբերտ Կյուլպենկյանը իր տիկնոջ հետ և պր. Եդվարդ Ութուջյանը։

Սուրբ պատարագին ներկա է նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը։

Սկսվում է սուրբ պատարագը։

Սուրբ Սեղանին սպասարկում են վարդապետներ, քահանա հայրեր և սարկավագների խումբը։

Սուրբ պատարագի Կոմիտասյան քառաձայն երգեցողությունը փայլուն հաջողությամբ կատարում է Մայր Տաճարի երգեցիկ խումբը։

Ժամը 12-ին, եկեղեցական թափորով, հանդիսավորապես Մայր Տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը և բազմում իր Գահի վրա։

Սուրբ պատարագը շարունակվում է նույն վեհությամբ մինչև «Հայր մեր»։

Քարոզի պահն է։ Խորին ներշնչումով և ապրումով, խոսում է պատարագիչ սրբազան հայրը.

«Այս սրբազան բեմեն իմ խոսքը Զեպի ըսելե առաջ, շնորհակալության սրտագին պարտք ունիմ Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որ Իր քաղցր հրավերով, անգամ մը ևս պատեհություն ընծայեց ինձ հոս գալ տեսնելու վերանորոգված պատկերը Ս. Էջմիածնին, որ նորափետուր ճերմակ աղավնիի մը պես թառած հայրենիքի կուրծքին, Իր քաղցր նայվածքով կնայի ամենուս։

Սրտագին պարտք նույնպես մեր հայրենի Սովետական Հայաստանի իմաստուն և շինարար ղեկավարներուն՝ իրենց ընծայած թույլ-

Պատրիարք սրբազան Հայրը
քարոզում է Մայր Տաճարում

տրվությանը համար, որպեսզի անգամ մը ևս իբրև հայ և եկեղեցական պատեհությունն ունենալի այցելելու մեր հայրենիքը և տեսնելու անցյալի փոշիներեն և ավերակներեն վերականգնած նորամանուկ մեր Հայաստանը, որ իբրև ոսկե օղակ մը մեծ և հառաջադեմ ժողովուրդներու շղթային, իր գեղեցկությամբ և իր փառքով կփայլի: Իրապես սրտառուչ է, երբ անցյալ փառքին քով նոր փառքն է որ կուգա և կշինե իր սրտառուչ պատկերը մեր հոգիներուն առջև:

Էջմիածնի ժպիտը և հայրենի ժպիտը երբոր քով-քովի կուգան, լուսավորելու համար մեր ժողովուրդին սիրտը և հոգին, ասկե ավելի հանկուցիչ և գեղեցիկ զգացում և պատկեր կարելի չէ երևակայել:

Եվ այս պահուս հայրենասեր և հայրենակարոտ մարդու մը շրթներեն ուրիշ մաղթանք չի բխիր, բայց նույնիսկ մեր ժողովուրդի դարավոր սրտի կանչը՝ «Հոգիդ ողջ ըլլա, հայ ժողովուրդ»:

Երբ հոգիդ ողջ է, դուն որքան ալ կտորկտոր ըլլաս օտար երկիրներու և օտար հովերու նետված, դուն կշինես քու գեղեցիկ մարմինդ, քու հոգիիդ պես գեղեցիկ, ըստ նմանության այն իդեալներուն, իղձերուն և պատկերին, որ քուկդ եղավ երեկ, և որ քուկդ է այսօր և քուկդ պետք է ըլլա հավիտյան»:

Ապա ամենապատիվ պատրիարք սրբազան հայրը անցնում է իր բուն քարոզին.

«Հանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:

«Եւ մորենին այն վառեր բայց ոչ այրեր»:

Ոչ միայն Իսրայելի, այլ գուցե բովանդակ մարդկային պատմության մեջ չկա դեմք մը, որ հավասարի Մովսեսին:

Ան էր, որ իր ժողովուրդի ամենադժնդակ և ճակատագրական վայրկյաններուն, կանչվեցավ վարելու անոր ճակատագիրը կրոնական, բարոյական և վարչական մարկերուն վրա և անոր տվավ իր հոգիին կնիքը, իր մտքին կերպարանքը: Որքան ճիշտ է այն խոսքը, թե ով որ մեծ գործի մը կկանչվի, պետք է որ Աստուծմե կանչված ըլլա և ոչ թե իր անձին փափագներեն մղված՝ ստանձնե այդ պաշտոնը:

Եվ այս պարագան սքանչելի կերպով կճշմարտվի Մովսեսի կյանքին մեջ:

Ինքը, անհամեմատորեն հայրենասեր և առաքինի մարդ, միշտ տեսակ մը վախով մոտեցած էր իր ժողովուրդի փրկության, անոր ազատագրման գործին, հակառակ որ բոլոր նայվածքները իրեն ուղղված էին ու բոլոր սրտերը իրեն սևեռած: Տեսակ մը վարանքով նայած էր միշտ այդ գործին, մինչև այն վայրկյանը, երբ իր աչքերուն և իր հոգիին առջև կատարվեցավ Աստուծո կամքին հայտնությունը:

Եվ օր մը, երբ իր աներոջ հոտերը կպահեր, իր սրտին պես ամայի հեռավոր սարերուն վրա, հեռուն, անտառին ծայրը, ուր հորիզոնին վարագույրը կծգվեր, տեսավ կրակ մը, որ կբոցավառեր: Մոտեցավ և տեսավ, որ մորենի մըն էր, որ կվառեր բայց չէր այրեր: Եվ կարծեց լսել ձայն մը, որ կըսեր իրեն. «Մովսես, ինչո՞ւ կվախնաս ժողովուրդիդ առաջնորդ ըլլալե, ինչո՞ւ կվախնաս ժողովուրդիդ ճակատագիրը ձեռքիդ մեջ առնելե, կկարծես որ անոնք կուրանա՞ն իրենց Աստվածը, իրենց հայրենիքը: Ո՛չ: Նայի՛ր այս մորենիին, քու ժողովուրդիդ պատկերն է ան. ան պիտի չարչարվի, պիտի արյունի, պիտի տառապի, պիտի այրի, բայց պիտի չմոխրանա»:

Եվ Մովսես, կարծես խորանի մը առջև, երկրպագեց այդ կրակե սրբության և անկե հետո իր ամբողջ էությամբ կապված մնաց իր ժողովուրդին:

Եվ սակայն Հին Կտակարանը չունի ավելի սրտառուչ պատկեր, քան Մովսեսի կյանքը:

Տարիներով լծվիլ իր ժողովուրդի դատին և փրկության, տառապիլ ու չարչարվիլ, ինչ որ

բաժինն է բոլոր հանրային մարդերու, գալ հասնիլ մինչև իր երապին սեմը՝ Ավետյաց երկիրը, և սակայն արգիլվիլ հոն մտնելե:

Հարյուրամյա ծերունին, այժմ Նաբավ լեռան բարձունքին կեցած, արցունքով և տրտմությամբ կնայի Ավետյաց երկրին, որ կտարածվի իր աչքերուն առջև, Գաղատեն մինչև Դան: Իր աչքին առջևն է Երիքով իր արմավենիի պարտեզներով, Նեբթաղիմ իր հարուստ հողերով, և Հուդայի երկիրը իր բարձունքներով: Միայն Հորդանան գետը կբաժնե զինք իր երապեն: Ան անապատի երկար գիշերներուն մտածած է այդ բոլորի մասին, մտածած է այն աշխարհի մասին, ուր Աբրահամ և Հակոբ իրենց վրանները լարեցին, և որոնց գերեզմանները կսպասեին Իսրայելին: Եվ սակայն իրեն արգիլված է Ավետյաց երկիրը մտնել, և հարյուրամյա ծերունին կգա կքիլը իր ոսկորներուն: Ցավ կա իր մարմնին մեջ և ցավ իր հոգիին խորը: Մահը պատանքի մը պես կուգա և կգոցե իր աչքերը: Եվ աշխարհի մեջ չկա ուժ մը, որ կարենա բանալ իր երապին խաբված մարդուն աչքերը գոց:

Երբ կկենանք Աստվածաշնչի այս պատկերին առջև Մովսեսով խորհրդանշված, մեր մտածումը կերթա մեր աստվածարյալ հայրապետներուն, մեր իշխաններուն, մեր ժողովուրդի վարիչներուն, որոնք այնքան սեռն և սերտ կգացումով կապվեցան իրենց ժողովուրդին և կայն առաջնորդեցին արյուններու և ավերներու մեջեն, դեպի բաղձացված ապատությունը, դեպի բաղձացված հայրենիքը:

Անտարակույս անոնք ալ հեռավոր մշուշներու մեջ տեսան տեսիլքը իրենց ժողովուրդին, տեսան այրող, բայց չմարող մորենին իրենց ժողովուրդը խորհրդանշող տեսիլքին, և ադով լեցված, ադով ոգևորված, նվիրվեցան հրենց ժողովուրդին:

Ճիշտ է, թե փոքր ժողովուրդ մը եղած ենք, սիրելի՛ եղբայրներ և քույրեր, սակայն մեծ կգացումներու հրայրքը երբեք չէ պակսած մեկի: Ավելի ճիշտ և արդար նկատած ենք տառապիլ բարոյական մտապատկերներուն առջև, քան թե ընդարմանալ նյութական գոհեկացումներու մեջ:

Անոնք որ գիտեն մեր եկեղեցական և ազգային պատմությունը, անոնք միայն կրնան ըմբռնել, թե ի՛նչ ըսել է տեսիլքով և տառապանքով գոյավորված արժեքներու հրաշքը:

Հայ Եկեղեցին, մեր փրկության տապանն ըլլալե հետո, եղած է մեր գերպանց ուժը, բայց մանավանդ լուսաստղը, որ հրաշալի կանթեղի մը պես կախված մեր երկրի երկնակամարեն, իր լույսն է բաշխած դարերով մեր ժողովուրդին: Եվ մեր ժողովուրդեն անոնք, որոնց նայվածքը իրենցմե անդին կրցած է անցնիլ, զգացած են այդ լույսին ուժն ու հրաշքը:

Այդ լույսին առաջին ջահակիրները եղած են, մեր ազգային չափանիշով, նախ Լուսավորչի տունը՝ մինչև Սահակ և Մեսրոպ, հետո Նարեկացին, Շնորհալին և փաղանգը մեր ժողովուրդի գործիչներուն և վարիչներուն:

Հայ Եկեղեցին ուրիշ բան չէ, բայց եթե հայ գիրը, հայ գրականությունը, հայ երաժշտությունը, հայ ճարտարապետությունը, մեկ խոսքով՝ գումարը մեր հոգիի և մտքի արգասիքներուն, կաթողիկեն մեր իղձերուն և երապներուն:

Որո՞ւն համար գաղտնիք է, թե Ավետարանը հայ գիր և մագաղաթ ըլլալե առաջ, հայ սիրտ է մեր կուրծքերուն տակ, թե մեր տաճարները քարե կառույցներ ըլլալե առաջ, տապաններ են մեր մարտիրոսներու, սուրբերու և նահատակներու մարմինները տաղավարող:

Եվ եթե մենք կրցած ենք դարերու ընթացքին շարունակել մեր պատմական կյանքը, այդ կպարտինք հույլին, փաղանգին այն մեծ մարդերու, որոնք առաջնորդած են մեր ժողովուրդը և Աստուծո պատկերը դրոշմած անոր հոգիին մեջ, ոմանք իրենց խոսքով, ուրիշներ իրենց գրչով և շատեր իրենց արյունով:

Այդ տիտանյան մարդերը ոչ միայն իրենց մեջ առած են մեր ամբողջ անցյալը, իբրև սրբություն և հիշատակ, այլ նաև ունեցած են ապագայի ներշնչումը: Հիշատակ և ներշնչում, այսինքն անցյալի հուշքը և ապագայի հրայրքը, երբ քով-քովի կուգան, կկազմեն երկու թևերը գործիչին, ինչպես նաև հավաքականություններու և ազգերու:

Այսօր, սիրելի՛ եղբայրներ և քույրեր, Լուսավորչի Գահուն վրա կբազմի մեր ժամանակի ամենեն խորիմաստ և քաղցրացած սիրտը, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Վեհափառ Հայրապետը Ամենայն Հայոց, որուն գահակալության իններորդ տարեդարձն է որ կտոնենք: Անտարակույս, թե դժվար է մարդերու ներկայության անոնց դրվատիքը ընել, որքան ալ որ ան մեր պարտքը և իրենց իրավունքը եղած ըլլա: Եվ սակայն անոնք, որ կճանչեան Նորին Ս. Օծությունը իրենց զգացումներու անկեղծության մեջ և իր մտքի և հոգիի շնորհներով կրնան վկայել, թե Իր օրով է, որ կվերանորոգվի ու կպայծառանա մեր Եկեղեցին իր նյութական, բարոյական և հոգեկան մարզերուն վրա, սքանչացում պատճառելով բոլորիս:

Նորին Ս. Օծությունը, իմաստուն և գործունյա անձնավորություն ըլլալե առաջ, տեսիլքի մարդ է: Տեսիլքը Իր մեջ ամեն օր ապրող իրականություն է: Անոնք որ կուրկ են տեսիլքե և իդեալե, անոնք ոչինչ կրնան ընել, անոնք կնմանին կոտոտած ճրագներու, որոնք կմխան, առանց կարենալու իրենց լույսը արձակել հոգիներուն:

Տեսիլքի մարդերն են, որ կրնան իրագործել իրենց մտածումը, վասնզի այսօրվան երապը, այսօրվան տեսիլքը վաղվան իրականությունն

է: Անտարակույս, որ մեր փառավոր Եկեղեցին իրականություն դարձնելու առաջ, գեղեցիկ մտածում մը, գեղեցիկ տեսիլք մըն էր Լուսավորչին մտքին մեջ, թե Սողոմոնի գեղեցիկ Տաճարը, տակավին քարե կառույց չեղած, երազ մըն էր փյունիկեցի ճարտարապետի մտքին մեջ, Սովսեսի արձանը երազ մըն էր Միքել Անջելոյի մտքին մեջ, և այս գեղեցիկ տիեզերքը տեսիլք մը՝ Աստուծո մտքին մեջ:

Տեսիլքը կայծն է հոգիին. առանց այդ կայծին, չկա լուսավորություն, և առանց հոգիի ու մտքի լուսավորության, չկա իրականություն:

Մարդեր կան կյանքի մեջ, որոնք ժամանակի մարդեր են, և ուրիշներ, որոնք ճշմարտության մարդեր են:

Անոնք, որ ժամանակի մարդեր են, այսինքն անոնք, որոնք միայն առօրյայով կկբաղին ու կապրին, անոնք շատ անգամ իրենց չափազանցության մեջ կդառնան ծանծաղամիտ և տարտամ: Իսկ անոնք, որ միայն. ճշմարտության մարդեր են, անոնք ալ իրենց վերացումին և տեսիլքին մեջ կդառնան անաշխարհային: Մեծ և գործունյա մարդեր անոնք են, որոնք թե՛ ժամանակի և թե՛ ճշմարտության մարդեր են:

Եվ պետք է ըսել, առանց չափազանցության, որ Նորին Ս. Օծությունը թե՛ ժամանակի և թե՛ ճշմարտության մարդն է, և այդ է պատճառը անշուշտ, որ Իր ինը տարիները եղան հոգացումի և վերաշինության տարիներ, փառքով պսակելով թե՛ Ս. Էջմիածինը և թե՛ մեր Եկեղեցին:

Նորին Ս. Օծության ջանքերով վերանորոգվեցավ այս գեղեցիկ Տաճարը, պայծառացավ Վեհարանը իր հարակից շենքերով և կորուստե փրկվեցան մեր պատմական հիշատակարանները և մեր ճարտարապետության սրբազան նմուշները մեր հայրենի հողին վրա:

Անշուշտ նախ Իր ջանքերով էր որ եղան այս բոլորը. ադոր եկավ միանալու նաև մեր հայրենի կառավարության բարյացակամ ուշադրությունն ու վերաբերմունքը, ինչպես արտասահմանի մեր հարազատներու դրամական օժանդակությունը, որոնց գլուխը կկենա հավետ անմոռաց Գալուստ Սարգիս Կյուլպենկյանը:

Ինձի կմնա, Ձեր բոլորին հետ միասին, ի սրտե աղոթել և մաղթել, որ Տերը շեն և անսասան պահե մեր հայրենի երկիրը, Սրբություն Սրբոց Ս. Էջմիածինը և Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառը, ինչպես նաև մեր Եկեղեցիին և հայրենիքին համար աշխատող բոլոր շինարար ձեռքերուն պարգևե ուժ և կարողություն, որպեսզի անոնք իրենց գործերով կարենան ընել այն, ինչ որ հաճո է մարդոց, բայց մանավանդ ինչ որ հաճո է Աստուծո, «որում վայել է փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

Հավարտ սուրբ պատարագի, Ավագ Սեղանի առաջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Հայրապետական մաղթանք:

Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձի հանդիսությունը Վեհարանում

Հայրապետական մաղթանքից հետո, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքները, եկեղեցական թափորով, ամպհովանու տակ, առաջնորդվում են Վեհարանի գահասրահը, ժողովրդական խանդավառ և սրտաբուխ արտահայտություններ և բարեմաղթություններ ներքո։

Եկեղեցական թափորը, «Որ զխորհուրդս և զՈր զշնորհս» շարականները երգելով, հասնում է Վեհարանի շքամուտքը և բարձրանալով երկրորդ հարկ, կանգ է առնում Նոր Վեհարանի գահասրահում։

Վեհափառ Հայրապետը բազմում է Իր Գահի վրա, շրջապատված եկեղեցական ողջ դասով, մինչ հյուրերը, ուխտավորները, պաշտոնական անձինք, տեղ են գրավում գահասրահում և ընդունելության շքեղ դահլիճում։

Հանուն Մայր Աթոռի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի, առաջինը Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը շնորհավորում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձը չերմ բարեմաղթություններով, որդիական անկեղծ զգացմունքներով և երախտագիտությամբ։

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաֆյանը այս հանդիսավոր առիթով, ծափերի տակ, հանուն Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իր կողմից, ողջունում և շնորհավորում է Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձը.

«Վեհափառ Տեր.

Թույլ տվեք սրտագին շնորհավորելու Ձեզ Ձեր գահակալության 9-րդ տարեդարձի այս հանդիսավոր առիթով, Հայկական Սովետական Հանրապետության կառավարությանն առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ կողմից։

Հայ ժողովուրդը, իր հարազատ սովետական կառավարության առաջնորդությամբ, իր բազուկների՝ պատմության քննությունը բռնած, ուժով և ճակատի արդար քրտինքով կառուցում է իր լուսավոր ներկան և է՛լ ավելի շենշող գալիքը։ Սարսափելի չեն նրան խոչն ու խութը, ամուր, անչափ ամուր է այժմ իր ոտքերի տակի հողը։ Եվ քար քարի վրա դնելով, մուրճը մուրճի հետևից զարնելով, բարձրացնում է նա իր երջանկության անպարտելի շենքը, իր վաղքի Արարատը։ Ի՞նչ է ուզում մեր ժողովուրդը իր նպատակները ամբողջո-

Դոկտ. Ժոզե դե Ասերեդո Պերտիզանը գահասրահում շնորհավորում է Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձը

վին լրացնելու, իր ստեղծագործ միաքը ավելի փոթորկելու, բազուկների բացվածքը լայն տարածելու համար։ Հայրենիքի յուրաքանչյուր քաղաքացի այս հարցին մեկ և միակ պատասխան կտա՝ խաղաղություն, տեսական ու մշտական խաղաղություն։

Խաղաղության տոչոր են աշխարհիս բոլոր ժողովուրդները, բոլոր աշխատավոր մարդիկ։

Հենց այս կապակցությամբ էլ թույլ տվեք նշել, որ հայ ժողովուրդը, Հայաստանի կառավարությունը բարձր են գնահատում Ձեր անխոնջ գործունեությունը հանուն խաղաղության ամբողջ աշխարհում։ Խաղաղության սովետական կոմիտեի պատվոգիրը, որին Դուք արժանացաք այս ամռան, Ձեր քրտնաջան աշխատանքի գնահատման փաստն էր։ Ընդունեցեք, խնդրեմ, իմ շնորհավորությունները նաև այդ առթիվ։

Իրերի դժբախտ բերումով մեր ժողովրդի բազմաթիվ բեկորները ցրվել են աշխարհով մեկ։ Գոյամարտ է մղվում սովետական հայրենիքի սահմաններից այն կողմ՝ հանուն ազգապահպանության։ Եվ, եթե Մայր Հայրենիքի, անսասանելի Սովետական Հայաստանի գոյության փաստը գլխավոր կռվանն է Սփյուռքում հայապահպանության հարցում, ապա, Մայր Աթոռը վճռական գործոններից մեկն է նույն այդ պայքարի հաջողության մեջ։ Շնորհիվ Մայր Աթոռի և անձամբ Ձեր անհատնում ջանքերի, էլ ավելի է սերտացել Սփյուռքում գտնվող մեր քույրերի և եղբայրների կապը Մայր Հայրենիքի և Ս. Էջմիածնի հետ։ Այնքան ամուր է այսօր այդ կապը, այնքան ջերմ և անհուն է սփյուռքահայության սերը իրենց հայրերի և պապերի հայրենիքի նկատմամբ, որ ոչ մի ուժ չի կարող այն խորտակել։ Սա մեր ամբողջ ժողովրդի խոշոր նվաճումն է և իրավամբ մեծ է Ձեր անձնական վաստակը այդ նվաճումի մեջ։

Նշելով Ձեր գահակալության 9-րդ տարեդարձը, կուզենայի մաղթել Ձեզ քաջառողջություն և կորով, որպեսզի դեռևս առիթ ունենանք ինն անգամ ինը տարեդարձներ տոնակատարելուց։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձի ուրախ առիթով խոսք է առնում նաև Գալուստ Կյուլ-

պենկյան հիմնարկութեան նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը, որն ասում է.

«Այսօր տոնական օր է հայ ժողովրդի համար, երբ Նորից նշվում է Նորին Ս. Օծութիւն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալութեան տարեդարձը։

Այսօր Էջմիածնի Մայր Տաճարում ես ներկա եղա հանդիսավոր սուրբ պատարագին։ Մեր բոլորի միակ և ճշմարիտ Աստվածը՝ Քրիստոս նույնպես ներկա էր սուրբ պատարագին։

Նորին Ս. Օծութիւնը, որի գահակալութեան տարեդարձն է տոնվում այսօր հանդիսավորապես, բոլոր ժամանակների մեծ կաթողիկոսների արժանավոր հաջորդն է։

Նորին Ս. Օծութիւնը Իր առջև ունի կատարելիք մի մեծ գործ, Եկեղեցու և հայ ժողովրդի բարիքի համար ամբողջ աշխարհում, գործ, որն արդեն իսկ սկսվել է բարեբախտաբար Հայաստանի Հանրապետության մեջ, երկրի իշխանությանց բարյացակամ հովանավորության ներքո։

Թող Աստված երկար կյանք և առողջություն պարգևի Ամենայն Հայոց Հայրապետին, այս սուրբ և ազգային առաքելությունը ի կատար ածելու համար։ Դրա համար բավական է, որ մենք հասկանայինք Քրիստոսի ուսմունքը, որը մեզ սովորեցնում է՝ «Տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»։

Վերջացնելով իմ խոսքը, ջերմորեն խնդրում եմ Աստուծուց՝ Նորին Ս. Օծութեան շնորհել բարօրություն և առողջություն։

Հանդիսության վերջում ոտքի է կանգնում Վեհափառ Հայրապետը և խորապես հուզված, շնորհակալության և գոհունակության սրտագին խոսք է ասում ամենապատիվ սրբազան պատրիարք հոր, հայրենի կառավարության ներկայացուցիչ, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանին, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանին և Սահակ արքեպիսկոպոսին։

Հանդիսության ընթացքում, Իր գահակալության 9-րդ տարեդարձի առթիվ, ազգիս Վեհափառ Հայրապետը, որպես հիշատակ, Երուսաղեմի ամենապատիվ սրբազան պատրիարք հորը նվիրում է եպիսկոպոսական թանկագին մի մատանի, հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանին, հոգեշնորհ Տ. Կյուրեղ վարդապետ Գարիկյանին, Մայր Աթոռի միաբաններ հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Թերթերյանին, հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանին՝ լանջախաչ, որպես հայրապետական բարձր գնահատություն։ Տ. Շահե և Տ. Կյուրեղ վարդապետներին՝ Երուսաղեմի Ս. Հարության Տաճարի նորոգության համար նրանց կատարած հանգանակության հաջող աշխատանքների և Տ. Արսեն ու Տ. Նարեկ վարդապետներին՝ Մայր Աթոռում նրանց կատարած ազնիվ և օգտակար ծառայությունների համար։

Ընդհանուր ծափերի մեջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ադամանդակուռ շքանշանով զարդարում է կուրծքը ֆրանսահայ սիրված և հարգված ճարտարապետ պր. Եդվարդ Ութուջյանի՝ Գալուստ Կյուլպենկյան կտակի կատարման գործում նրա մատուցած անմոռանալի և շնորհակալ աշխատանքներին որպես տրիտուր։

Վեհարանի գահասրահում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունը վերջանում է Նորին Ս. Օծության օրհնությամբ և «Պահպանիչ»-ով։

Վերջում բոլոր ներկաները աչահամբույրով շնորհավորում են Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձը։

Պաշտոնական ընդունելություն

Ժամը 4-ին, Վեհարանի սեղանատանը, Գերագույն Հոգևոր խորհուրդը, Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձի առթիվ, կազմակերպում է պաշտոնական ընդունելություն, որին մասնակցում են ավելի քան 70 հրավիրյալներ։

Հրավիրյալների թվում էին ամենապատիվ սրբազան պատրիարք հայրը, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը իր հարգելի տիկնոջ հետ, տիկին Ռիտա Եսայանը, տեր և տիկին Ռոբերտ Կյուլպենկյանները և պր. Եդվարդ Ութուջյանը։

Ընդունելության ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը, սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ պր. Համազասպյանը, արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերության նախագահ տիկին Թերսաբ Գրիգորյանը, վարպետը՝ Մարտիրոս Սարյանը, գրող Կոստան Զարյանը, շնորհալի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը, դիրիժոր Օհան Դուրյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամներ և այլ հրավիրյալներ, որոնց թվում ԱՄՆ-ից պր. Հ. Խաչմանյանը և պր. Հ. Նազարյանը։

Պատվո սեղանի շուրջ տեղ են գրավել Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովե-

տին առնթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը, վարպետը՝ Մարտիրոս Սարյանը և տիկին Ռիտա Սարյանը։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։

Հայրենի երկրի բազմազան բարիքներով զարդարված սեղանների շուրջ ստեղծվում է հայկական ջերմ, սրտագին մթնոլորտ։

Սեղանը դեկավարում է որպես թամադա Տ. Եղիշե սրբազան պատրիարք հայրը։

Հանդիսավոր մթնոլորտում և խանդավառ իրադրության մեջ թամադան առաջին բաժակը բարձրացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, հավերժության և նրա արժանընտիր Գահակալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց և արևշատության համար։

Ամբողջ դահլիճով մեկ, հոտնկայս, հնչում է «Էջ Միածին ի Հօրէ» շարականը։

Վեհափառ Հայրապետը երկրորդ բաժակը առաջարկում է խմել, երախտագիտական ու շնորհակալական զգացումներով, հայրենի բարեխնամ կառավարության կենացը։

Դահլիճով մեկ հնչում է Ալեքսանդր Հարությունյանի «Կանտատա»-ն։

Թամադա սրբազանը երրորդ բաժակը բարձրացնում է օրվա հյուրերի՝ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահի և նրա տիկնոջ, տիկին Ռիտա Սարյանի, տեր և տիկին Ռոբերտ Կյուլպենկյանների և պր. Եդվարդ Ութուջյանի կենացը։

Վեհափառ Հայրապետը բաժակ է բարձրացնում Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարք հոր կենացը՝ Երուսաղեմի Առաքելական Ս. Աթոռի հաստատության, պայծառության մաղթանքներով։

Սրբազան պատրիարք հայրը, հանձին ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ, հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, աշխարհահռչակ նկարիչ Մարտիրոս Սարյանի, բաժակ է բարձրացնում ներկա գիտնականների, արվեստագետների, բանաստեղծների և դասախոսների կենացը։

Ընդունելության ժամանակ ներկաներից շատերը, շնորհավորելով Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձը, հանդես են գալիս ողջույնի ջերմ խոսքերով, որոնց թվում Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը, պր. Ռոբերտ Կյուլպենկյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, պրոֆեսորներ Առաքել Առաքելյանը, Արարատ Ղարիբյանը, ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը, հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը, որը բոլոր ճառերը թարգմանում է և ֆրանսերենի։

Տաղանդավոր կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը նվագեց իր վերջին ստեղծագործություններից երկուսը և արժանացավ բուռն ծափերի։

Սեղանների շուրջ ժամերն անցնում էին արագ, բայց հաճելի և բովանդակալից։

Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձին նվիրված ընդունելությունը վերջանում է նորին Ս. Օծության գոհարանական աղոթքով։

№ 2

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով, սեպտեմբերի 26-ին, շաբաթ օր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը:

Սրբազան պատրիարքին ուղեկցում էր Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի դիվանապետ հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը:

Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում եղբայրական սիրով դիմավորեց սրբազան պատրիարքին և ջերմորեն ողջունեց նորին ամենապատվության սույն պատմական այցելությունը:

Ապգիս Վեհափառ Հայրապետը և Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքը Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ վերանորոգեցին իրենց միասնության ուխտը և միատեղ աղոթեցին Հայ Եկեղեցու հաստատության և աշխարհի խաղաղության համար:

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ դոկտ.-պրոֆ. Ն. Հարությունյանը սեպտեմբերի 30-ին, չորեքշաբթի, ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքին: Ընդունելության ընթացքում տեղի ունեցավ բարեկամական սիրալիր զրույց:

Նորին ամենապատվությունը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Մայր Տաճարում հոկտեմբերի 4-ին, Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձի առթիվ:

Սրբազան պատրիարքը այցելեց Մայր Տաճարը, Հոգևոր Ճեմարանը, տպարանը, Ս. Հռիփսիմեի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդի, Ս. Խոր Վիրապի, Սևանի, Մուղնու Ս. Գևորգ, Հառիճա և Մարմաշենի վանքերը, Սաղմոսավանքը, Հովհաննավանքը, ինչպես նաև Երևանի, Թալիշի և Լենինականի եկեղեցիները:

Սրբազան պատրիարքը ուխտի գնաց Օշական՝ Ս. Մեսրոպի դամբարանը, այցելեց Մեսրոպ Մաշտոցի անվան Երևանի Մատենադարանը և պատմական թանգարանը:

Նորին ամենապատվությունը հոկտեմբերի 12-ին հրաժեշտ առավ Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

Հոկտեմբերի 12-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը մեկնեցին Մոսկվա իրենց շքախմբերով:

Հոկտեմբերի 14-ին, Մոսկվայում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքը այցելեցին Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին և ներկա եղան Զագորսկի աստվածաբանական ճեմարանի 150-ամյակի հանդիսությանց:

Սրբազան պատրիարք հայրը հոկտեմբերի 15-ին մեկնեց Երուսաղեմ, իր Աթոռը:

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
22 հոկտեմբերի 1964 թ.

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ Տ. ԵՂԻՇԵ ԱՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԵՐԵՎԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ժամանում

Սեպտեմբերի 26-ին, շաբաթ, երեկոյան ժամը 6-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքը։

Նորին Սրբության ուղեկցում էր Երուսաղեմի հայոց Պատրիարքության դիվանապետ հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը։

Երևանի օդանավակայանում, հանուն Վեհափառ Հայրապետի, թարի գալստյան սրտագին խոսքերով, սրբազան պատրիարք հոր պաշտոնապես և ջերմորեն դիմավորեց Գերագույն Հոգևոր խորհրդի ատենապետ և Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Սրբազան պատրիարք հորը դիմավորեցին նաև Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները, Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյանը, Թաքվի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը, Արարատյան թեմի հայրապետական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան ծայրագույն վարդապետ Տերյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող հոգեշնորհ Տ. Կյուրեղ վարդապետ Գարիկյանը, Մայր Աթոռի միաբաններ հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը, հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը, սարկավագների խումբը, Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամները, քահանայից դասը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և հավատացյալների հոծ բազմությունն։

Երուսաղեմի հայոց ամենապատիվ պատրիարք հորը դիմավորեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը։

Ժամը 6-ին ինքնաթիռն իջնում է օդանավակայան։ Կամրջակի վրա երևում է սրբազան պատրիարք հայրը, որին բոլոր ներկաները ողջունում են ջերմ ծափահարություններով։

Այնուհետև պատրիարք սրբազանը առաջնորդվում է Մայր Աթոռ։

Երեկո է արդեն, Արարատյան դաշտի ոսկի ու չքնաղ աշնան օրերից մեկը։ Շքերթն ուղղվում է Մայր Աթոռ։

Տոնական և ուրախ հնչում են Մայր Տաճարի զանգերը։

Մայրավանքի արևելյան դարբասի առաջ, եկեղեցական թափորով և ամպհովանու տակ, Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարք հայրը «Հրաշափառ»-ով մուտք է գործում Մայր Տաճար։

Հայ եկեղեցու տարեգրության մեջ առաջին անգամն է, որ Երուսաղեմի հայոց պատրիարքը ուխտով և պաշտոնական այցով գալիս է Մայր Աթոռ, թեև Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը 1951 և 1956 թվականներին եղել է Մայր Աթոռում։

Տոնականորեն զարդարված Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առաջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը եղբայրական սրտագին ողջագուրումով և ջերմորեն բարի գալուստ է մաղթում սրբազան պատրիարք հոր։

Պահը հուզիչ է և կրկնակի թելադրական։ Իշման Ս. Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքը, ի համբույր սրբության, վերանորոգում են իրենց եղբայրության ուխտը ու միատեղ աղոթում Հայ եկեղեցու հաստատության և աշխարհի խաղաղության համար։

Վեհափառ Հայրապետը ողջույնի ջերմ ու սրտագին խոսք է ասում.

«Ողջո՛ւյն Երուսաղեմի հայոց ամենապատիվ պատրիարքին։

Բարի գալո՛ւստ Մայր Աթոռ, Մեր սիրեցյալ եղբայր Եղիշե սրբազան արքեպիսկոպոսին։

Առաջին իսկ պահուն, երբ Եղիշե սրբազանն իր ոտքը դրավ այս Ս. Տաճարի շեմին, հեռվեն մեր նայվածքները իրարու հանդիպեցան և հարապատ ու քաղցր ժպիտով Մենք ողջագուրվեցանք Փրկչի Իշման այս նվիրական Սեղանի առջև, ուր, տարիներ առաջ, մենք երկուքս ծունկի եկած, վերանորոգեցինք մեր ծառայության ուխտը և արժանի եղանք ընդունելու աստվածային շնորհներ, ձեռամբ երջանկահիշատակ Գևորգ Ջ Հայրապետի։

Այս հանդիսավոր և պատմական պահուն, Մենք անկեղծ հրճվանքով կողջունենք զՁեզ, իբրև գահակալը մեր Եկեղեցվո նվիրապետական Աթոռներեն իսկապես Առաքելական և Սուրբ Աթոռին հերուսաղեմ, Աթոռ, որ միջազգային և մեր ազգային կյանքի մեջ կհանդիսանա քրիստոնեական հավատքի սյուներեն մին և որ, ինչպես անցյալի մեջ բազում դարեր շարունակ, նաև այսօր և ապագային, կոչված է շարունակելու իր սուրբ առաքելությունը, հոգևոր իմաստով մնալով միշտ գործակիցը և մարտակիցը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։

Ուրեմն Ձեր գալուստը բարի, սիրեցյալ Եղբայր Մեր։ Եվ վստահ եղեք, թե այս պահուն երջանիկ ենք ոչ միայն Մենք և Մայր Աթոռիս միաբանությունը և Գերագույն Հոգևոր Խորհուրդը, այլ ամբողջ մեր Հայաստանի հավատացյալ ժողովուրդը։ Դուք սիրելին եք բոլորին և հարգանքն ու անկեղծ գնահատանքը կվայելեք ամենուն, թե՛ իբրև պատրիարք հայ Երուսաղեմի, թե՛ իբրև տաղանդով լեցուն բանաստեղծ և գրական գործիչ, և թե՛ իբրև հարապատ ու անկաշառ կավակը հայոց Մայր Հոդին։

Թող Աստված օրհնե այս պահը և մեզի մնա օգնական, որպեսզի մենք բոլորս կարողանանք մեր առաքելությունը շարունակել մեր ժողովուրդի կյանքին մեջ, հաստատ և ծաղկյալ, անխոով ու անբաժան պահելու համար մեր Ս. Եկեղեցին, մեր նուիրապետական Աթոռները, խաղաղ ու միասնական գործակցությամբ։

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն Ձեզի, ամենապատիվ Եղբայր Մեր ի Քրիստոս»։

Ամենապատիվ սրբազան պատրիարք հայրն իր պատասխան խոսքում ասում է.

«Վեհափառ Տեր և սիրված Հայրապետ Ամենայն Հայոց.

Նախ՝ սրտագին շնորհակալություն Ձերդ Ս. Օծության այնքան գեղեցիկ և քաղցր խոսքերուն համար, մեր այս այցելության առիթով։

Երջանիկ կկգամ ինքզինքս իրապես, որ անգամ մը ևս բախտը կունենամ այցելելու Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք, նորոգելու այն ուխտը, որ ամեն հայու և մանավանդ հայ եկեղեցականի նվիրական պարտքն է, ադով հագեցնելու իր պանդուխտի կարոտը և արևելու իր հոգին՝ օտարության մշուշներեն և խոնավություններեն տամկացած։

Երջանիկ եմ նույնպես, Վեհափա՛ռ Տեր, որ առիթը տվիք ինձի, Ձեր հրավերով գալու և անձամբ Ձերդ Ս. Օծության հայտնելու իմ և Սրբոց Հակոբյանց կինվորյալ միաբանության սերն ու երախտիքը, Ս. Հարության Տաճարի նորոգության համար եղած հանգանակության Ձեր բերած անկշռելի նպաստին համար։ Առանց Ձերդ Վեհափառության քաղցր հետաքրքրության և փույթին, առանց Ձեր սրբատառ կոնդակներուն և սրտագին կոչերուն, բայց մանավանդ ընդհանուր գործի Ձեր վերատեսչության և Ս. Հարության Տաճարի հանգանակության կեդրոնական հանձնախումբի Ձեր բարձր նախագահության, անկարելի պիտի ըլլար մեկի համար գոյացնել պահանջված գումարը, որ այսօր, շնորհիվ Ձերդ Վեհափառության ջանքերուն, իրագործված կարելի է նկատել։

Երկրորդ՝ շնորհակալություն և երախտագիտություն Ձեր այն շնորհաբեր այցելության համար, կոր տարի մը առաջ տվիք Ս. Երկրին և հայոց Պատրիարքարանին, Ձեր Երուսաղեմ այցելության առիթով։ Ոչ միայն Ս. Երկրի տարեգրության, այլ բովանդակ Սփյուռքի համար այդ այցելությունը պիտի մնա անմոռանալի, անոր կապված մեկ ավելի հեռահայաց և քաղցր նպատակներուն և սպասումներուն համար անտարակույս։

Այս առիթով կբերեմ նույնպես Ս. Հակոբյանց միաբանության և Հորդանանի մեր ժողովուրդի ակնածանքն ու սերը, բոլորի կողմե համբուրելով Ձեր Ս. Աջը»։

Կիրակամուտք

Մայր Տաճարում այնուհետև պաշտվում է կիրակամտից հոգեպարար ժամերգությունը։

Ժամերգության ներկա են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Երուսաղեմի հայոց

սրբազան պատրիարք հայրը և Մայր Աթոռի ողջ միաբանությունը։

Հոգեհանգիստ երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի գերեզմանի վրա

Սեպտեմբեր 26-ի առավոտյան տոնն էր Ս. Գևորգ քաջամարտիկ զորավարի։

Ամեն տարի սույն տոնին, հոգեհանգստյան պաշտոն է կատարվում լուսահոգի Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի շիրմի վրա։

Երեկոյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետի հանդիսագրությամբ, լուսահոգի հայրապետի շիրմի վրա կատարվում է հոգեհանգստյան պաշտոն։

Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը, 1951 թվականի հունիսին, երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի ձեռամբ ստացան եպիսկոպոսական ձեռնադրություն, որպես լուսահոգի հայրապետի վերջին ձեռնասուն եպիսկոպոսները։

Խաղաղ ու անդորր հանգչում է մեծ Կաթողիկոսի աճյունը։ Նրա գործը արժանավորապես շարունակում է Նրա աշակերտն ու հաջորդը՝ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, իսկ մյուս ձեռնասունը գահակալն է Երուսաղեմի հայոց Պատրիարքական Աթոռի։

Հայրերից հետո, այժմ արժանավոր որդիները։

Հավարտ երեկոյան ժամերգության, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը, շուրջառազգեստ, եկեղեցական թափորով և «Գթա Տէր» շարականի երգակցությամբ, Մայր Տաճարից առաջնորդվում են դեպի լուսահոգի Կաթողիկոսի շիրիմը, որտեղ կատարվում է հոգեհանգստյան պաշտոն Մայր Աթոռի միաբանների և ուսանողության մասնակցությամբ։ Սրբազան պատրիարք հայրն արտասանում է «Քրիստոս Որդի Աստուծոյ» աղոթքը։

Այնուհետև, արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետը և պատրիարք սրբազան հայրը, թափորով և ամպհովանու տակ, առաջնորդվում են Վեհարան, ուր բոլոր ներկաները աջահամբույրով բարի գալուստ են մաղթում սրբազան պատրիարք հոր։

Ժամը 8.30-ին, Վեհարանի սեղանատանը, կազմակերպվել էր բարի գալստյան ընդունելություն սրբազան պատրիարք հոր պատվին։

Ընդունելության ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, ներքին թեմերի առաջնորդները, Մայր Աթոռի միաբանությունը, հարգելի Տիրամայրը և այլ հյուրեր։

Գիշերվա ժամը 10-ին, սրբազան պատրիարք հայրը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, մեկնում է Երևան, հայրապետական վիլլան, ուր մնալու է նորին սրբազանությունը Տ. Շահե վարդապետի հետ, Մայր Աթոռ և Մայր Հայրենիք կատարած իր ուխտավորության օրերին։

Ճաշկերույթ ի պատիվ սրբազան պատրիարք հոր

Սեպտեմբերի 27-ին, կիրակի, «Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի»։

Այսօր հատկապես սասունցիների և մշեցիների ուխտավորության եռուն օրն է։ Մայր Տաճարը, մայրավանքի շրջափակը երեկվանից լիքն են ուխտավորների բազմությամբ։

Ժամը 11-ին Մայր Տաճարում սկսվում է սուրբ պատարագը։ Պատարագիչն է հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Ժամը 12-ին, Մայր Տաճարի զանգերի ավետավոր հնչյունների տակ, Վեհափառ Հայրապետն ու սրբազան պատրիարք հայրը հանդիսավորապես առաջնորդվում են Մայր Տաճար, եկեղեցական թափորով և ժողովրդական խանդավառ բարեմաղթությունների ներքո։

Սուրբ պատարագի Կոմիտասյան քառաձայն երգեցողությունը կատարում է Մայր Աթոռի երգչախումբը։

Հավարտ սուրբ պատարագի, նույն հանդիսավորությամբ և հավատացյալների խանդավառ արտահայտությունների տակ, Վեհափառ Հայրապետն ու պատրիարք սրբազանը, օրհնելով բազմությանը, առաջնորդվում են Վեհարան։

Ժամը 3-ին, Վեհարանի սեղանատանը, Մայր Աթոռի միաբանությունը ուրախություն է ունենում սեղանակից լինելու Վեհափառ Հայրապետին և սրբազան պատրիարք հոր։

Ընդունելության ներկա են նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի անդամները, հրավիրյալներ, որոնց թվում հայտնի գրող Կոստան Զարյանը, պրոֆ. Գ. Մեղնիկյանը և ուրիշներ։

Ընդունելության ներկա է նաև Երուսաղեմի երիտասարդ միաբան հոգեշնորհ Տ. Արիս արեղա Շիրվանյանը, որը նույն օրը ժամանել է Մայր Աթոռ Բեյրութից։

Սեղանն օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Այնուհետև ստեղծվում է վանական ջերմ մթնոլորտ։ Առաջին բաժակն առաջարկվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, հավերժության և նրա արժանավոր Գահակալի կյանքի արևշատության համար։ Ուրախ և հանդիսավոր հնչում է «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը։

Նորին Ս. Օծությունը բաժակ է բարձրացնում Երուսաղեմի ամենապատիվ սրբազան պատրիարք հոր կենացը, մի անգամ ևս ողջունելով նրա գալուստը «յուխտ և յերկրպա-

գութիան Մայր Աթոռ Ս. Էջմիածին և հայրենի աշխարհ։

Այնուհետև սրբազան պատրիարք հոր ներկայությունը Մայր Աթոռ ողջունում են Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ գերաշնորհ Տ. Աստղիկ եպիսկոպոս Ղազարյանը, ճարտարապետ Միքայել Մազմանյանը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը, պրոֆ. Գ. Մեղինկյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը։

Սեղանների շուրջ ստեղծված հոգևոր ուրախությունն ու խանդավառությունը ավելացնում են վարդապետների երգերն ու խմբերգերը։

Վերջում խոսք է առնում սրբազան պատրիարք հայրը և զգացված, շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ ջերմ դիմավորության և իր պատվին տրված այս ընդունելության համար։

Այցելություններ

Սեպտեմբերի 28-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, սրբազան պատրիարք հայրը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսի և հոգեշնորհ Տ. Շահե և Տ. Կյուրեղ վարդապետների ու հոգեշնորհ Տ. Արիս աբեղա Շիրվանյանի ընկերակցությամբ, այցելում է Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանը, ուր ընդունվում է հարգալիր մեծարանքով դիրեկտոր գոիտ.-պրոֆ. Լ. Խաչիկյանի կողմից։

Մատենադարանը, որպես ճարտարապետական կառույց և մանավանդ որպես հայ ձեռագրերի անկրկնելի գանձարան, խորին, անջնջելի տպավորություն է թողնում Երուսաղեմի հայոց բանաստեղծ պատրիարքի և նրա շքախմբի անդամների վրա։

Պատրիարք սրբազանը իր հիացմունքն է արտահայտում հայ ձեռագրերի հանդեպ ցույց տրված հատուկ հոգածության, գուրգուրանքի և հայ մշակույթի գանձերի պահպանման, ուսումնասիրության բնագավառում մատենադարանում կատարված գիտական լուրջ հետազոտությունների համար։

Ժամը 1-ին, սրբազան պատրիարք հայրը, Տ. Կոմիտաս եպիսկոպոսի և Տ. Շահե վարդապետի ընկերակցությամբ, այցելում է Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծահարգ պր. Կ. Դալլաքյանին։

Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարք հոր և Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի միջև տեղի է ունենում սիրալիր զրույց ջերմ մթնոլորտում։

Հետմիջօրեի ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, հայրապետական վիլլայում, փոխադարձ այցելություն է տալիս սրբազան պատրիարք հոր։

Վիլլայում, ճաշից հետո, Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարք հոր միջև տեղի է ունենում խորհրդակցություն և զրույց եկեղեցական, կրոնական մի շարք հարցերի շուրջ։

Սեպտեմբերի 29-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 11.30-ին, սրբազան պատրիարք հայրը, Տ. Շահե վարդապետի ընկերակցությամբ, այցելում է Հոգևոր Ճեմարան։

Նորին Սրբազնությունը Ճեմարանի գլխավոր մուտքի առաջ ջերմորեն դիմավորվում է տեսչական և դասախոսական կազմի կողմից և առաջնորդվում տեսչարան; ուր մտերմիկ զրույց է ունենում դասախոսների հետ։

Դասախոս Ա. Հատիտյանը հանգամանորեն բացատրություններ է տալիս Ճեմարանի ուսումնական ծրագրի, դասախոսական կազմի, ուսանողության թվի և առօրյա կյանքի մասին։

Տեսչարանում հյուրասիրվելուց հետո, սրբազան պատրիարք հայրը առաջնորդվում է Ճեմարանի հանդիսասրահը, ուր ընդունվում է ուսանողության ցնծագին ծափերով։

«Որք զարդարեցին» շարականի երգեցողությունից հետո, լսարանական բաժնի ուսանող Գրիգոր Բունիաթյանը, ի դիմաց Ճեմարանի ուսանողության, ընթերցում է հետևյալ բարի գալստյան ուղերձը.

«Ամենապատիվ սրբազան պատրիարք հայր.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը այս պահուս հոգեկան բերկրանքով և սրտագին երախտագիտությամբ բարի գալուստ է մաղթում Ձեզ այս նվիրական կամարների տակ, ուր հավաքվել ենք Սփյուռքի տարբեր երկրներից և Մայր Հայրենիքի զանազան գավառներից, բանալու մեր սիրտն ու միտքը մեր եկեղեցական և ազգային սրբություններին, կամ, ինչպես Կորյունն է գրել նման բերկրալի առիթով՝ «ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ», որոնց գանձարանն է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

Օրհնեցեք մեզ, սրբազան հայր, որպեսզի նախախնամողն Աստված աճեցնի և պտղաբեր դարձնի մեր մտքի անդաստանների վրա սերմանված հավատի, առաքինության, եկեղեցանվեր ծառայության և հայրենասիրության բարի սերմերը, «զընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր»։

Մենք սրբությամբ կպահենք մեր սրտերում Ձեր այսօրվա այցելության և օրհնության քաղցր հիշատակը։

Որդիաբար կխնդրենք, որ Ս. Երուսաղեմ
ներ վերադարձին, բարեհաճիք ճեմարանա-
ականներիս եղբայրական ողջույնները հաղոր-
դել ժառանգավորաց վարժարանի մեր եղ-
բայրներին, որոնք պատրաստվում են նույն
նվիրական նպատակի համար, Ձեր շնչի տակ,
մինչպես այստեղ մենք, ազգիս շատ սիրելի
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նայ-
ուածքի և ձեռքի ներքո։

Թույլ տվեք մատչել ի համբույր Ձեր Ս.
Աջին, մաղթելով Ձեզ երկար և բարօր կյանք
հոգևոր Ճեմարանի իմ եղբայր ուսանողների
անունից։

Բարո՞վ եք եկել, սրբազան հայր, այս նվի-
ական հարկը, հազա՞ր բարիս։

Սրբազան պատրիարք հայրը, խորապես
զգացված, խոսք է առնում և շեշտում ճշմար-
տություն և անձնավորություն հասկացողու-
թյունների փոխադարձ նշանակությունն ու
կապը հայ հոգևորականի կյանքում և հորդո-
րում է ուսանողության իրենց հոգին և միտքը
նախ լայնորեն բանալ ճշմարտության և ապա
ինել Ավետարանի ճշմարտության և մեր ազ-
գային սրբությունների պատգամաբերը հայ
կյանքում։

Սրբազան պատրիարք հոր խրատականը
ուսվում է խորունկ ուշադրությամբ և հուզու-
մով։

«Էջ Միածին» ի Հօրէ» շարականի երգեցո-
ղությունից հետո, սրբազան պատրիարք
Հայրը օրհնում է Հոգևոր Ճեմարանը, դասա-
խոսական կազմին և ուսանողության, ապա
հրաժեշտ է առնում Ճեմարանից լավագույն
տպավորություններով։

Այնուհետև սրբազան պատրիարք հայրը
այցելում է Մայր Աթոռի տպարանը։

Սրբազան պատրիարք հոր ընկերակցում
են «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հա-
տիտյանը և տպարանի տեսուչ Խաչիկ Սամ-
վելյանը։

Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքը
հանգամանորեն ծանոթանում է տպարանի
մեքենաների աշխատանքների և այլ տպա-
դրական գործերի հետ, իր անկեղծ գոհունա-
կությունը հայտնում կատարված վերանորոգ-
չական աշխատանքների և Մայր Աթոռի նոր
տպարանի բացման առթիվ։

Տպարանի դիրեկտոր Ս. Սամվելյանը
սրբազան պատրիարք հոր է նվիրում վերջերս
տպարանից հրատակված հայ գրողների գրքե-
րը՝ Թումանյան, Հովհաննիսյան, Տիգրան
Կամսարական, հայ ժողովրդական հեքիաթ-
ներ և այլն։

Ճաշից հետո, Վեհարանում, Վեհափառ
Հայրապետի և սրբազան պատրիարք հոր միջև
տեղի է ունենում առանձին զրույց։

Երեկոյան, սրբազան պատրիարք հայրը, իր
շքախմբով, ներկա է լինում Երևանում Հայ-
ֆիլհարմոնիայի Համերգային մեծ դահլիճում
Հայկական ժողովրդական երգի և պարի ան-
սամբլի համերգին։

Այցելություն Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ մեծահարգ պր. Նագուշ Հարությունյանին

Սեպտեմբերի 30-ին, շաբաթշաբթի, առա-
վոտյան ժամը 11-ին, Տ. Տ. Վազգեն Ա Ամե-
նայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Երու-
սաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե
սրբազան պատրիարքը, Երևանում, Գերա-
գույն սովետի դահլիճում, այցելում են Հայ-
կական ՍՍՌ Գերագույն սովետի նախագա-
հության նախագահ մեծահարգ պր. Նագուշ
Հարությունյանին։

Պաշտոնական այս այցելության ժամա-
նակ, Վեհափառ Հայրապետին և սրբազան
պատրիարք հորն ուղեկցում էին Տ. Ասողիկ և
Տ. Կոմիտաս եպիսկոպոսները, Տ. Շահե, Տ.
Կյուրեղ վարդապետները և Տ. Արիս աբեղա
Շիրվանյանը։

Ընդունելության ներկա էին նաև Հայկա-
կան ՍՍՌ Գերագույն սովետի նախագահու-
թյան նախագահի տեղակալներ Հ. Մարգար-
յանը, Վ. Նալբանդյանը և նախագահության
քարտուղար Ա. Գալստյանը, Հայկական ՍՍՌ
Մինիստրների սովետին առընթեր Հայ եկե-
ղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ.
Դալլաքյանը։

Վեհափառ Հայրապետի, Երուսաղեմի հա-
յոց սրբազան պատրիարքի և Հայաստանի
Հանրապետության նախագահի միջև տեղի է
ունենում սիրալիր զրույց, ջերմ մթնոլորտում։

Ուխտագնացություններ

Սեպտեմբերի 30-ին, շաբաթշաբթի, ժամը
1-ին, սրբազան պատրիարք հայրը ուխտի է
գնում Խոր Վիրապի վանքը։

Նորին սրբազնության ընկերակցում են Տ.
Կոմիտաս եպիսկոպոսը, Տ. Շահե և Տ. Կյու-
ռեղ վարդապետներն ու Տ. Արիս աբեղան։

Ժամը 3-ին, Արարատյան հայրապետա-
կան թեմը, փոխանորդ Տ. Վահան ծայրագույն
վարդապետի գլխավորությամբ, Ամենայն
Հայոց Վեհափառ Հայրապետի և Երուսաղեմի
հայոց սրբազան պատրիարքի պատվին կազ-
մակերպում է ընդունելություն, Երևանի ա-
ռաջնորդարանում։

Ընդունելության ներկա են լինում նաև Տ.
Ասողիկ և Տ. Կոմիտաս եպիսկոպոսները, Տ.
Շահե և Տ. Կյուրեղ վարդապետները, Տ. Արիս
աբեղան, թեմական խորհրդի անդամներ,

քահանայից դասի ներկայացուցիչներ և այլ հրավիրյալներ։

Ընդունելությունն անցնում է ջերմ, խանդավառ մթնոլորտում։

Հոկտեմբերի 1-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 11-ին, սրբազան պատրիարք հայրը ուխտի է գնում Օշական, Ս. Մեսրոպ Մաշտոցի լույս գերեզմանին, շրթներին աղոթք ու աղերս.

«Այսօր նորեն
Ես՝ մին հետին մտածումիդ
Զավակներեն,
Հիշատակիդ առչև կեցած՝
Կպաղատիմ անհունորեն,
Որ հոգիովդ մեզ հետ ըլաս,
Պարտքի, զոհի և գիտության
Սուրբ ճամբայեն մեզի ուղղորդ,
Մահեն ալ վեր, մահեն ալ վերջ»։

(Եղիվարդ, «Սուրբ Մեսրոպ», Երուսաղեմ, 1962, էջ 112)։

Բանաստեղծ սրբազան պատրիարք հայրը, ծերագիր, իր ուխտը կատարելուց հետո «Օշականի աննինջ մեղյալ»-ի սուրբ շիրմի վրա, ծանոթանում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ Օշականի եկեղեցում և Մեծ Հսկողի դամբարանում կատարված վերանորոգություններին, որոնք երախտագիտությամբ և հիացումով են լցնում ամենապատիվ Տ. Եղիշե սրբազանի սիրտը։

Վերադարձի ճանապարհի վրա, սրբազան պատրիարք հայրը հուզումով կանգ է առնում Օշական գյուղի մուտքի առաջ, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ երախտագետ հայ ժողովրդի կողմից կանգնեցված հուշարձան կոթողի առաջ։

Այնուհետև սրբազան պատրիարք հայրը այցելում է Աշտարակի Կարմրավոր եկեղեցին, կառուցված Ե դարում։

Հոկտեմբերի 2-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 11-ին, սրբազան պատրիարք հայրը ուխտի է գնում Ս. Գեղարդի վանքը։

Վերադարձի ճանապարհի վրա նորին սրբազնությունը այցելում է Գառնիի պատմական ավերակները։

Հոկտեմբերի 5-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, սրբազան պատրիարք հայրը այցելում է Բյուրական և Արագածի տեսարժան վայրերն ու պատմական հուշարձանները։

Հոկտեմբերի 6-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 11-ին, սրբազան պատրիարք հայրը ուխտի է գնում Սևանի պատմական վանքերը։

Հոկտեմբերի 7-ին, չորեքշաբթի, երեկոյան ժամը 8-ին, Երևանում, սովետահայ գրողների տանը, սրբազան պատրիարք հայրը հանդիպում է ունենում մի խումբ գրողների և գրականագետների հետ, որոնց թվում է. Խուդյանի, Գեղամ Սարյանի, Վազգեն Նորենցի, Մարո Մարգարյանի, Անահիտ Սահինյանի, Հ. Հովհաննիսյանի, Գուրգեն Հովնանի, Սողոմոն Տարոնցու և ուրիշների հետ։

Հանդիպումն անցնում է ջերմ և սրտագին մթնոլորտում։

Զրույցի ընթացքում շոշափվում են առավելապես Մայր Հայրենիքի և Սփյուռքի միջև գրական կապերի հարցերը։

Հոկտեմբերի 8-ին, հինգշաբթի, սրբազան պատրիարք հայրը այցելում է Աշտարակի շրջանի Մուղնու Ս. Գևորգ եկեղեցին, ապա Սաղմոսավանք և Հովհաննավանք։

Հոկտեմբերի 9-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 8-ին, սրբազան պատրիարք հայրը իր շքախմբով մեկնում է Լենինական։

Նորին սրբազնությունն իր ճանապարհի վրա այցելում է Թալիշի Ս. Գրիգոր Լուսավորչի անվան պատմական եկեղեցին, Արագածի փեշերի վրա, Արթիկում՝ պատմական Հայաստանի հնագույն և նշանավոր վանքերից Հառիճան։

Այնուհետև սրբազան պատրիարք հայրը այցելում է Լենինականի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցին, ուր Շիրակի թեմի առաջնորդ Տ. Մաշտոց եպիսկոպոսը բարի գալուստ է մաղթում Երուսաղեմի սրբազան պատրիարք հոր, որը պատասխանում է ողջույնի խոսքերին և շնորհակալություն է հայտնում ջերմ ընդունելության համար։

Կեսօրից հետո, նորին սրբազնությունը ծանոթանում է քաղաքի տեսարժան վայրերին և այցելում Մարմաշենի վանքը։

Ժամը 11-ին, Շիրակի թեմի առաջնորդ սրբազանը և թեմական խորհուրդը, ի պատիվ սրբազան պատրիարք հոր, ընդունելություն են կազմակերպում։

Հրաժեշտի ընդունելություն

Հոկտեմբերի 11-ին, կիրակի, ժամը 11-ին, Մայր Տաճարում սուրբ պատարագ է մատուցում Վիեննայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Մեսրոպ ծայրագույն վարդապետ Գրիգորյանը և քարոզում՝ «Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղինս բնաբանով։

Ժամը 3-ին, Վեհարանի սեղանատանը, Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքի պատվին, կազմակերպվում է հրաժեշտի ընդունելություն, որին ներկա են լինում Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի, վերստուգիչ հանձնաժողովի անդամներ և այլ հրավիրյալներ։

Ընդունելության ներկա է լինում նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առն-

Ցեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը, որը և բաժակ է բարձրացնում սրբազան պատրիարք հոր կենաց, ողջերթի սրտագին արտայայտություններով։

Հանուն Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իր կողմից, խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը ողջունում և սարի ճանապարհ է մաղթում սրբազան պատրիարք հոր։

Ներկաներից շատերը՝ այդ թվում Տ. Սահակ, Տ. Ասողիկ սրբազանները, Տ. Մեսրոպ վարդապետ Գրիգորյանը, Տ. Կյուրեղ վարդապետը, Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, Տ. Արիս վարդապետը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ ճարտարապետ Միքայել Մազմանյանը և գրականագետ Գրիգոր Հակոբյանը, վերստուգիչ հանձնաժողովի անդամ և Հոգևոր Ճեմարանի դասախոս Գրիգոր Գյուլլանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը ջերմ, հայրենաշունչ ելույթներով ողջունում են սրբազան պատրիարք հոր և բարի ճանապարհ ցանկանում։

Ընդունելության վերջում խոսք է առնում սրբազան պատրիարք հայրը՝ իր որդիական խորունկ երախտագիտությունը հայտնելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին Մայր Աթոռ Ս. Էջմիածին կրկին անգամ ուխտի գալու եղբայրական հրավերի համար և ի դեմս Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանի հայրենի կառավարության՝ իր այցելության առթիվ ընծայված դյուրությունների, ջերմ ընդունելության և ուշադրության համար։

Նորին սրբազնությունը իր խոսքը վերջացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կենաց արնշատության և հայրենի աշխարհի ու կառավարության, հայ ժողովրդի բարօրության սրտառուչ բարեմաղթություններով։

Ընդունելությունը վերջանում է խմբովին երգված «Էջ Միածին ի Հոր» շարականով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

Հոկտեմբերի 12-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը մեկնում են Մոսկվա, ընկերակցությամբ Տ. Ասողիկ եպիսկոպոսի, Տ. Շահե և Տ. Արսեն վարդապետների ու Մայր Աթոռի ճարտարապետ Ա. Գալիկյանի։

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին և սրբազան պատրիարքին ճանապարհում են Մայր Աթոռի միաբանները, Գերագույն Հոգևոր խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամներ, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և այլ անձինք։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և սրբազան պատրիարք հոր ճանապարհում է նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը։

Հոկտեմբերի 14-ին, չորեքշաբթի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը, շքախմբով, այցելում են Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին և մասնակցում են Զագորսկի աստվածաբանական ճեմարանի 150-ամյակին նվիրված հանդիսություններին։

Եկեղեցական երեք պետերի միջև տեղի է ունենում եղբայրական ջերմ զրույց, մտերիմ մթնոլորտում։

Հոկտեմբերի 15-ին, հինգշաբթի, սրբազան պատրիարք հայրը հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից և մեկնում Փարիզ։

Նորին սրբազնությանն ուղեկցում է հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը։

Մոսկվայի Շերեմետևոյի միջազգային օդանավակայանում սրբազան պատրիարք հոր ճանապարհում են Տ. Ասողիկ եպիսկոպոսը, Տ. Արսեն վարդապետը, Տ. Հովհաննես քահանա Դանիելյանը, ինչպես նաև Մոսկվայի Ռուսաց Պատրիարքարանի ներկայացուցիչներ, Մոսկվայի հայոց եկեղեցական խորհրդի անդամներ և այլ պաշտոնական անձինք։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏՈՐ ԺՈՍԵ ԴԵ ԱՍԵՐԵԴՈ ՊԵՐՏԻԳԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով, հոկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց պաշտոնական այցով Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոսե դե Ասերեդո Պերտիգանը, իր հարգելի տիկնոջ հետ:

Մեծարգո նախագահին ընկերակցում էին հանգուցյալ բարերար Գալուստ Կյուլպենկյանի դուստրը՝ ապնվափայլ տիկին Ռիտա Եսայանը, Կյուլպենկյան հիմնարկության հայկական մասնաճյուղի վարիչ և բարերարի եղբորորդի պր. Ռոբերտ Կյուլպենկյանը իր հարգելի տիկնոջ հետ և ֆրանսահայ հայտնի ճարտարապետ պր. Եդվարդ Ութուջյանը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Վեհարանում սիրով և ջերմորեն ողջունեց Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահի և նրա շքախմբի անդամների այցելությունը Մայր Աթոռ:

Հոկտեմբերի 3-ին, շաբաթ օր, երեկոյան ժամը 6-ին, հյուրերը Մայր Տաճարում ներկա եղան Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ բարերար Գալուստ Կյուլպենկյանի հիշատակին կատարված հոգեհանգստյան հանդիսավոր արարողության:

Հոկտեմբերի 4-ին, հյուրերը Մայր Տաճարում ներկա եղան Նորին Ս. Օծության գահակալության 9-րդ տարեդարձի առթիվ կատարված հանդիսավոր սուրբ պատարագին և ապա Վեհարանում կազմակերպված այլ հանդիսությանց:

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահը և նրա շքախմբի անդամները այցելեցին Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, Հոգևոր Ճեմարանը, տպարանը, Ս. Հռիփսիմեի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդի և Սևանի պատմական վանքերը: Հյուրերը այցելեցին նաև Օշականում Ս. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցին և Մեծ Սրբի դամբարանը, Երևանում Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանը:

Հոկտեմբերի 6-ին, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Ա. Քոչինյանը ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահին և շքախմբի անդամներին:

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոսե դե Ասերեդո Պերտիգանը և նրա շքախումբը հոկտեմբերի 7-ին հրաժեշտ առին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
8 հոկտեմբերի 1964 թ.

ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏՈՐ ԺՈԶԵ ԴԵ ԱԶԵՐԵԴՈ ՊԵՐՏԻԳԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին, ճինգշաբթի, երեկոյան ժամը 8-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով, պաշտոնական այցով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը՝ իր հարգելի տիկնոջ հետ։

Մեծարգո նախագահին ընկերակցում էին հանգուցյալ բարերար Գալուստ Կյուլպենկյանի դուստրը՝ ազնվափայլ տիկին Ռիտա Նասյանը, Կյուլպենկյան հիմնարկության հայկական մասնաճյուղի վարիչ և բարերարի եղբորորդի պր. Ռոբերտ Կյուլպենկյանը իր հարգելի տիկնոջ հետ, և ֆրանսահայ հայտնի ճարտարապետ պր. Եդվարդ Ութուջյանը։

Հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Երևանի օդանավակայանում մեծարգո հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և Մայր Տաճարի փոխլուսարարապետ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։

Հարգարժան հյուրերին օդանավակայանում դիմավորելու էր եկել նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի անդամ մեծարգո պր. Մ. Բաբլոյանը։

Հյուրերը առաջնորդվեցին Երևանի «Արմենիա» հյուրանոցը։

Հոկտեմբերի 2-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 11-ին, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը իր շքախմբով այցելեց Մայր Աթոռ։

Հարգելի հյուրերը Մայր Տաճարում իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Վեհարանում այցելեցին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որը ջերմորեն և գոհունակությամբ ողջունեց հյուրերի գալուստը Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

Ընդունելության ներկա էր նաև Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, որը նույնպես սրտագին ողջունեց հյուրերին։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, սրբազան պատրիարք հոր և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահի ու շքախմբի անդամների միջև տեղի ունեցավ ջերմ, սրտագին զրույց, մտերմական մթնոլորտում։

Այնուհետև հյուրերը այցելեցին նորից Մայր Տաճար, եղան եկեղեցական արվեստի թանգարանում, Հոգևոր Ճեմարանում և Մայր Աթոռի տպարանում։

Հետմիջօրեի ժամը 3-ին, Վեհարանում, հյուրերի պատվին տրվեց ճաշկերույթ, որն անցավ ջերմ, ընտանեկան մթնոլորտում։

Երեկոյան, հյուրերը պետական օպերայում ներկա եղան «Կարմեն» օպերայի ներկայացման։

Հոգեհանգիստ Գալուստ Կյուլպենկյանի հիշատակին

Հոկտեմբերի 3-ին, շաբաթ, առավոտյան ժամը 10-ին, հյուրերը այցելեցին Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանը, այնուհետև ծանոթացան քաղաքի տեսարժան վայրերին։

Ժամը 12-ին, հյուրերը ուխտի գնացին Օշական, Ս. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցին ու Մեծ Սրբի դամբարանը, ուր ծանոթացան եկեղեցում կատարվող նկարչական աշխատանքներին։

Երեկոյան ժամը 6-ին, կիրակամտի արարողություններից հետո, Մայր Տաճարում, Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց հոգեհանգստյան հատուկ պաշտոն Մայր Աթոռի բարերար հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի հիշատակին։

Ե՛վ կիրակամտի արարողության և՛ հոգեհանգստյան պաշտոնի կատարմանը ներկա էին ամենապատիվ պատրիարք հայրը, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները, վանքի պաշտոնեությունը և հավատացյալների բազմությունն։

Հանդիսության ներկա էին նաև Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը տիկնոջ հետ, տիկին Ռիտա Նասյանը, պր. Ռոբերտ Կյուլպենկյանը տիկնոջ հետ և պր. Եդվարդ Ուքուչյանը։

Արարողության ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը։

Հոգեհանգստյան արարողության սկզբում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, «Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն» (Մատթ. Ե 7) բնաբանով Իր քարոզում ոգեկոչեց հիշատակը ազգիս և Մայր Աթոռիս բարերար հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի։

Վեհափառ Հայրապետի քարոզը տեղում ֆրանսերենի էր թարգմանում հոգեշնորհ Տ. Նահե վարդապետ Աճեմյանը։

Մայր Տաճարի երգեցիկ խումբը հանդիսավորությամբ կատարեց «Գթա, Տէր», «Ո՛ր յանէից» հոգեհանգստյան շարականները։

Երգեցիկ խմբի մենակատար օրիորդ Սվետլանա Զաքարյանը խոր հուզմամբ երգեց «Ցորժամն»։ Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը ընթերցեց Հանգստյան Ավետարանը իսկ Վեհափառ Հայրապետը արտասանեց «Քրիստոս Որդի Աստուծոյ» աղոթքը։

Արարողության ավարտին, Վեհարանում կազմակերպվել էր ընդունելություն ի հիշատակ Գալուստ Կյուլպենկյանի։

Երեկոյան ժամը 8-ին հյուրերը, Երևանում Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, ներկա եղան երգի և պարի պետական անսամբլի ելույթին։

Հոկտեմբերի 5-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, հյուրերը այցելեցին Սևան։

Երեկոյան ժամը 8-ին հյուրերը ներկա եղան Սվետլանա Զաքարյանի համերգին Արվեստագետների տանը։

Այցելություն Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Ա. Քոչինյանին

Հոկտեմբերի 6-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Երևանում, Կառավարական տանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ պր. Ա. Քոչինյանն ընդունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանին՝ տիկնոջ հետ, տիկին Ռիտա Նասյանին, տեր և տիկին Ռոբերտ Կյուլպենկյաններին. Բ ճարտարապետ պր. Եդվարդ Ուքուչյանին։

Պաշտոնական այս այցելության ժամանակ Վեհափառ Հայրապետին և հյուրերին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Աստղիկ եպիսկոպոս Ղազարյանը և գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։

Ամենայն Հայոց Հայրապետի, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահի և նրա շքախմբի անդամների ու Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի պր. նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, սիրալիր մթնոլորտում։

Զրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը։

Հրաժեշտի ընդունելություն

Հոկտեմբերի 6-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 11-ին, հյուրերը այցելում են Ս. Գեղարդի վանքը և Գառնիի պատմական ավերակները։

Երեկոյան ժամը 6-ին, Վեհարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը զրույց է ունենում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանի, հիմնարկության հայկական

Վեհափառ Հայրապետը Ամենայն Հայոց Կաթողիկոսական Տեղապահ Գարեգին Արքեպիսկոպոսի հետ Մեծարգոյ Նորին Գերութիւնը Սուրբ Էջմիածնի Տաճարում։ Ներքևից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը։

մասնաճյուղի վարիչ պր. Ռոբերտ Կյուլպենկյանի, տիկին Ռիտա Եսայանի և պր. Եդվարդ Ուքուշյանի հետ։

Ժամը 8-ին, Վեհարանում, հյուրերը դիտում են «Էջմիածին» կինոնկարը։

Ժամը 9-ին հյուրերի պատվին տրվում է հրաժեշտի ճաշկերույթ։

Ընդունելության ներկա են սրբազան պատրիարք հայրը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգեշնորհ Տ. Շահե, Տ. Մեսրոպ, Տ. Կյուրեղ վարդապետները և հոգեշնորհ Տ. Արիս աբեղա Երիվանյանը։

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահի և նրա շքախմբի անդամների պատվին տրված հրաժեշտի ընդունելությունն անցնում է խանդավառ, ջերմ մթնոլորտում։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և պր. նախագահը ճառեր են փոխանակում։

Ընդունելությունը վերջանում է խմբովին երգված Տերունական աղոթքով։

Հոկտեմբերի 7-ին, շաբաթի, առավոտյան ժամը 8-ին, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը, իր շքախմբի անդամների հետ, լավագույն տպավորություններով և անմոռանալի հուշերով, հրաժեշտ է առնում Մայր Աթոռից և Ամենայն Հայոց Հայրապետից։

Երևանի օդանավակայանում, հանուն նորին Ս. Օծության, մեծարգո հյուրերին ճանապարհում են գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և դիվանապետ պր. Հայկ Առաքելյանը։

Հյուրերին ճանապարհում է նաև Արտասահմանի հետ մշակութային կապի ընկերության նախագահ տիկին Բերսաբե Գրիգորյանը։

Բարի ճանապա՜րհ Մայր Աթոռի հարգարժան հյուրերին։



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 5-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 5-ին, Երևանի «Արմենիա» հյուրանոցի ընդունելության սրահում, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհուրդը ընդունելություն է կազմակերպում Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձի, Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանի ու նրա շքախմբի անդամների պատվին։

Ընդունելության ներկա են Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը տիկնոջ հետ, տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը տիկնոջ հետ և խորհրդի անդամները։

Հրավիրյալների թվում են Հայկական ՍՍՌ լուսավորության մինիստր Շ. Սիմոնյանը, Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստր Ռ. Խաչատրյանը, Արտաքսահմանի հետ մշակութային կապի ընկերության նախագահ տիկին Բ. Գրիգորյանը, սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը, ճարտարապետ Մ. Մազմանյանը, բանաստեղծներ Սիլվա Կապուտիկյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Սողոմոն Տարոնցին, գրող Ս. Խանզատյանը և ուրիշներ։

Ընդունելության ներկա են նաև Տ. Սահակ, Տ. Ասողիկ, Տ. Կոմիտաս սրբազանները, Տ. Շահե, Տ. Կյուրեղ, Տ. Վահան, Տ. Մեսրոպ (Գրիգորյան), Տ. Արսեն, Տ. Մեսրոպ (Պալյան) վարդապետները, Տ. Արիս աբեղան, Մայր Աթոռի դիվանապետ Հ. Առաքելյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը։

Պատվո սեղանի շուրջ տեղ են գրավել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը, դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը, մինիստրներ Շ. Սիմոնյանը, Ռ. Խաչատրյանը և Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, որը և ղեկավարում է սեղանը։

Ելույթ են ունենում Վեհափառ Հայրապետը, պատրիարք սրբազան հայրը, դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը, տիկին Բ. Գրիգորյանը, Վ. Համազասպյանը, Սիլվա Կապուտիկյանը, Հ. Հովհաննիսյանը, Լ. Խաչիկյանը, Մ. Մազմանյանը, Ս. Խանզատյանը և ուրիշներ։

Ընդունելությունն անցնում է բացառիկ շքեղ, հայրենասիրական մթնոլորտում։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 2-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Թերթերյանը։*

***

Օգոստոսի 9-ին, կիրակի, *Մայր Աթոռ ուխտի եկան վաստակավոր բանասեր Հարությունն Քուրդյանը և ամերիկահայ տաղանդավոր գրագետ Զտվեն Սյուրմելյանը։ Հարգելի հյուրերը եղան Մայր Տաճարում, եկեղեցական արվեստի գանձատանը և Նոր Վեհարանում։*

***

Օգոստոսի 9-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը։*

***

Օգոստոսի 12-ին, չորեքշաբթի, *Մայր Աթոռի միաբանությունը միօրյա պտույտի մեկնեց դեպի Աշտարակի շրջանի պատմական վանքերն ու հուշարձանները։ Միաբանները եղան Մուղնու Ս. Գևորգ, Օհաննավանք, Սաղմոսավանք, ինչպես նաև Փարպի և Կարբի գյուղերի պատմական եկեղեցիներում։*

***

Օգոստոսի 15-ին, կիրակի, *Կիսլովոդսկի առողջարանում մեկ ամիս հանգստանալուց հետո, Մայր Աթոռ վերադարձավ ազգիս Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի և գավազանակիր հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Թերթերյանի։*

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանությունը և վանքի պաշտոնեությունը։

Նորին Ս. Օծության դիմավորեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։

Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Մայր Տաճար, ուր աղոթելուց հետո, օրհնեց միաբանությանը և բոլոր ներկաներին։

***

Օգոստոսի 16-ին, կիրակի, *«Վերափոխումն Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում հանդիսավորությամբ կատարվեցին Ս. Աստվածածնի վերափոխման տոնին նվիրված հանդիսությունները։*

Օրվա պատարագիչն էր Վրաստանի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց խաղողօրհնության կարգը։

Սուրբ պատարագին և հանդիսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Օգոստոսի 17-ին, երկուշաբթի, *«Ցիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը։*

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»։

Նույն օրը Մայր Տաճար ուխտի եկան մի խումբ ֆրանսահայ և լիբանանահայ ուխտավորներ։

Մայր Տաճարում իրենց ուխտը կատարելուց հետո, Վեհարանում ուխտավորները ստացան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնությունը։

***

Օգոստոսի 19-ին, չորեքշաբթի, *Մայր Տաճար այցելեց Սովետական Միության հետ կուլտուրական կապի իրանական ընկերու-*

թյան պատգամավորությունը, գլխավորությամբ ընկերության փոխ-նախագահ Համիդ Մայահի։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց հարգելի հյուրերին։

***

Օգոստոսի 21-ին, ուրբաթ, *Մայր Աթոռ ուխտի եկան Մայր Հայրենիքում գտնվող սփյուռքահայ ուսուցիչները։*

Սփյուռքահայ ուսուցիչները եղան Մայր Տաճարում, եկեղեցական արվեստի գանձարանում և ապա ընդունվեցին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից։ Նորին Ս. Օծության և սփյուռքահայ ուսուցիչների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց հայ մշակույթի և ազգային հայրենասիրական դաստիարակության հարցերի շուրջ։

***

Օգոստոսի 23-ին, կիրակի, *Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Օգոստոսի 24-ին, երկուշաբթի, *լրացավ Մայր Աթոռի երիցագույն միաբան, Մայր Տաճարի յուսարարապետ և Գերագույն Հոգևոր խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակը։*

Երևկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց այս ուրախ առթիվ Իրեն սեղանակից դարձնել հոբելյար սրբազանին և միաբանության անդամներին։

Ընդունելության ներկա եղավ նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Սուրեն Հովհաննիսյանը։

Հոբելյար սրբազանին ողջունեցին և սրտագին բարեմաղթություններ կատարեցին Վեհափառ Հայրապետը, պր. Ս. Հովհաննիսյանը, գերաշնորհ Տ. Աստղիկ եպիսկոպոս Ղազարյանը, հոգեշնորհ Տ. Գևորգ արեղա Սեբայդարյանը, արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը, բարեշնորհ Հրայր սարկավագ Գարավերդյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Ա. Հատիտյանը։

Ընդունելության ժամանակ սրբազանին հանձնվեցին հուշանվերներ։

Վերջում շնորհակալության և երախտագիտության խոսք ասաց հոբելյար սրբազանը։

Գերաշնորհ Տ. Սահակ սրբազանի ծննդյան 85-ամյակի և քահանայության 60-ամյակի հոբելյանական նշումից հետո, Նորին Սրբազնությունը, համաձայն իր ցանկության, հանգստյան է կոչվել։

***

Օգոստոսի 24-ին, երկուշաբթի, *Մայր Աթոռ ուխտի եկան ֆրանսահայ և լիբանանահայ մի խումբ ուխտավորներ, որոնց թվում ֆրանսահայ հայտնի նկարիչ Ս. Ժերանյանը իր համեստափայլ տիկնոջ հետ, ինչպես նաև Փարիզում հրատարակվող «Աշխարհ» շաբաթաթերթի արտոնատեր պր. Կ. Ունճյանը։*

***

Օգոստոսի 27-ին, ճինգշաբթի, *Մայր Տաճար ուխտի եկան Ֆրանսիայից, Սիրիայից և Լիբանանից հայրենիք եկած և իրենց ամառային արձակուրդը հայրենի տարբեր պիոներական ճամբարներում անցկացնող մի խումբ հայ աշակերտներ և աշակերտուհիներ։*

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել սփյուռքահայ աշակերտների խմբին։ Աշակերտները Վեհափառ Հայրապետի ներկայության հանդես եկան արտասանություններով, խմբերգերով և հոգևկան մեծ բավականություն պատճառեցին Վեհափառ Հայրապետին։

Վերջում, խանդավառ և հայրենասիրական մթնոլորտում, Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին և հաղորդություն մաղթեց նրանց ուսման մեջ։

***

Օգոստոսի 29-ին, կիրակի, *Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Օգոստոսի 30-ին, երկուշաբթի, *Մայր Աթոռի միաբանությունը իր օրն անցկացրեց Այդր լեռի գեղատեսիլ ափերին։*

***

Սեպտեմբերի 1-ին, երեքշաբթի, *Մայր Աթոռի միաբաններ բարեշնորհ Կայծակ սարկավագ Մահտեսյանը և բարեշնորհ Հրայր սարկավագ Գարավերդյանը, ավարտելով Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի լսարանական բաժինը, վերադարձան Բեյրութ, իրենց ծնողների մոտ։*

***

Սեպտեմբերի 5-ին, ուրբաթ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Մեծի Տանն Կիլիկիո միաբանության անդամ և Հալեպի թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Ջեպեյանը և Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբանության անդամ հոգեշնորհ Տ. Կյուրեղ վարդապետ Գաբիկյանը։

Երևանի օդանավակայանում հյուրերին դիմավորեցին, հանուն Վեհափառ Հայրապետի, գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և բարեշնորհ Հակոբ սարկավագ Պարոնյանը։

Գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս և հոգեշնորհ Տ. Կյուրեղ վարդապետ Մայր Տաճարում իրենց ուխտն ու երկրպագությունը կատարելուց հետո, ընդունվեցին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից Վեհարանում, որտեղ կմնան իրենց ուխտավորության օրերին։

Գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոսի այցը Մայր Աթոռ որևէ պաշտոնական հանգամանք չուներ։

***

Սեպտեմբերի 6-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը «Հաւատամք և ի մի միայն յընդհանրական և յառաքելական Սուրբ Եկեղեցիս» ընթերցանով։ Իր քարոզի վերջում հայր սուրբը, հանուն Մայր Աթոռի միաբանության, ողջունեց գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Ջեպեյանի և հոգեշնորհ Տ. Կյուրեղ վարդապետ Գաբիկյանի ներկայությունը, եղբայրացնելով, որ «Զի բարի, զի վայելուչ զի բնակեսցեն եղբարք ի մասինս։ Հայր սուրբը իր ողջույնի խոսքը վերջացրեց սրտագին բարեմաղթություններով Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների միջև միության, եղբայրական սերտ համագործակցության և սիրո կապի զորացման և ամրապնդման համար։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Սեպտեմբերի 7-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոսի և միաբանության անդամների, Երևանում այցելեց հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը։ Վեհափառ Հայրապետը և նրան ընկերակցող խումբը ծանոթացան թանգարանի բոլոր բաժիններին։

Նորին Ս. Օծությունն իր տպավորությունները արձանագրեց այցելուների հուշամատյանում։

***

Սեպտեմբերի 9-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետն այցելեց Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցին, մոտիկից ծանոթանալու եկեղեցուց ներս կատարված վերջին նկարչական աշխատանքներին։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Կյուրեղ վարդապետ Գաբիկյանը, որոնք և իրենց ուխտը կատարեցին Մեծ Սրբի շիրիմի վրա։

***

Սեպտեմբերի 10-ին, ճինգշաբթի, Վեհափառ Հայրապետը ուխտի գնաց Ս. Գեղարդա վանքը, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Տ. Սահակ, Տ. Ղևոնդ և Տ. Ասողիկ սրբազանները, Տ. Կյուրեղ, Տ. Մուշեղ, Տ. Մեսրոպ և Տ. Արսեն վարդապետները։

Վեհափառ Հայրապետի պատվին տրվեց ճաշկերույթ վանքի փոխ-վանահայր արժանապատիվ Տ. Վաղարշակ քահանայի կողմից։

Նորին Ս. Օծությունը, գնահատելով արժանապատիվ Տ. Վաղարշակ քահանայի 20-ամյա օգտակար ծառայությունը Հայ Եկեղեցուն և ի մասնավորի Ս. Գեղարդա վանքին, Տ. հորը շնորհեց լանջախաչ։

Արժանապատիվ Տ. Վաղարշակ քահանան չերմ երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին այս բարձր գնահատանքի համար։

***

Սեպտեմբերի 11-ին, ուրբաթ, գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Ջեպեյանը, ընկերակցությամբ Մայր Աթոռի միաբաններ գերաշնորհ Տ. Ասողիկ և գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոսների և հոգեշնորհ Տ. Կյուրեղ վարդապետ Գաբիկյանի, այցելեց Սևանի լիճը, կղզին և վանքերը, ինչպես նաև Դիլիջան և Մաղկաձորի վանքերը։

***

Սեպտեմբերի 12-ին, շաբաթ, Խոր Վիրապի վանքը ուխտի գնացին գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Ջեպեյանը, գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, հոգեշնորհ Տ. Կյուրեղ վարդապետ Գաբիկյանը և հո-

գեղշնորհ Տ. Վահան ծայրագույն վարդապետ Տերյանը։

Ուխտավոր հայերը այցելեցին նաև Դվինի ավերակները։

***

Սեպտեմբերի 13-ին, կիրակի, Խաչվերաց։ Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Հալեպի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Չեպեյանը և քարոզեց խալի խորհրդի մասին։

Իր քարոզում պատարագիչ սրբազանը հաղորդեց նաև Մեծի Տանն Կիլիկիո Տ. Խորեն Ա Կաթողիկոսի եղբայրական ողջույնները Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսին և Մայր Աթոռի միաբանության անդամներին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Կեսօրից հետո, ժամը 3-ին, Վեհարանում, Տ. Ղևոնդ արքեպիսկոպոսի պատվին տրվեց ճաշկերույթ, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները և այլ հյուրեր։

Ընդունելության ժամանակ գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոսին ողջունեցին Վեհափառ Հայրապետը, պրոֆ. Առաքել Առաքելյանը, ճարտարապետ Միքայել Մազմանյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիրը։

Վերջում շնորհակալության և երախտագիտության խոսք ասաց Տ. Ղևոնդ արքեպիսկոպոսը։

Երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը նախագահեց Խալվերացի մեծ անդաստանի թափորին։

***

Սեպտեմբերի 14-ին, երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն «Վասն համօրէն ննջեցելոց»։

***

Սեպտեմբերի 14-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահության դահլիճում ներկա եղավ Հնդկաստանի հանրապետության նախագահ դոկտ. Ս. Ռադհակրիշնանի պատվին կազմակերպված կառավարական ընդունելության։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը։

***

Սեպտեմբերի 15-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 5-ին, Մայր Տաճար այցելեցին ուխտավորաբար Մայր Հայրենիքում գտնվող հալեպահայ մի խումբ ուխտավորներ։

Մայր Տաճարում և Փրկչի Իջման Ս. Սեղանի առջև իրենց ուխտը կատարելուց հետո, ուխտավորները ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։

***

Սեպտեմբերի 17-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 9-ին, Մոսկվա մեկնեց Հալեպի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Չեպեյանը, որը մոտ երկու շաբաթ ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում։

Երևանի օդանավակայանում գերաշնորհ սրբազան հոր ճանապարհեցին գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Թերբերյանը։

***

Սեպտեմբերի 20-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Կյուրեղ վարդապետ Գարիկյանը։

Քարոզիչ հայր սուրբը իր երախտագիտություններ հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք ուխտի գալու առթիվ և ոգեկոչեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Երուսաղեմի հայոց Պատրիարքական Աթոռի միջև գոյություն ունեցող պատմական հիշատակները։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1964—1965 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերիր 21-ին, երկուշաբթի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը իր դռները նորից բացեց մեր ժողովրդի հոգևոր ծառայության նվիրված հին և նոր ընդունված ուսանողների առաջ։

Սեպտեմբերի 14-ին, երկուշաբթի, սկսվեցին Հոգևոր Ճեմարանի ընդունելության քննությունները։

Ընդունելության քննություններից հետո, ուսանողների նոր խումբը ներկայացվեց Վեհափառ Հայրապետին, նրա հայրական օրհնությունն ստանալու համար։

Նորին Ս. Օծության գլխավորությամբ և Գերագույն Հոգևոր Խորհրդի մանրակրկիտ ուսումնասիրությամբ, վերանայվեց և վավերացվեց 1964—1965 ուսումնական տարվա ծրագիրը։

Սեպտեմբերի 21-ին, հանդիսավոր իրադրության մեջ, կատարվեց Հոգևոր Ճեմարանի պաշտոնական բացումը։

Առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության անդամներով, ժամանեց Ճեմարանի հանդիսությանց սրահը, ուր սպասում էին դասախոսական կազմը և ուսանողությունը։

Վեհափառ Հայրապետը դիմավորվեց խանդավառ ծափերով։

Սկսվում է Հոգևոր Ճեմարանի բացման հանդիսավոր արարողությունը։

Ճեմարանի երգեցիկ-խումբը կատարում է «Աշակերտք Քրիստոսիս» շարականը, հոգեշնորհ Տ. Սեսրոպ վարդապետ Պալյանն ընթերցում է Մատթեոսի Ավետարանից Սերմնացանի առակը։

Լսարանական բաժնի ուսանող Գրիգոր Բունիաթյանը կարդում է նարեկացու «Աղերս առ Ս. Հոգին» հատվածը (Բան ԼԴ)։

«Որք զարդարեցին» շարականի երգեցողությունից հետո, դասախոսական կազմի և ուսանողության անունից երախտագիտության խոսք է ասում Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը, 1964—1965 ուսումնական տարվա բացման առթիվ։

Ապա, հանդիսավոր լռության մեջ, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, Իր հայրական հորդորը տալու ճեմարանականներին։

Նորին Ս. Օծությունը, Իր խոսքն ուղղելով Հոգևոր Ճեմարանի ուսանողության ուսումնական նոր տարվա առթիվ, շեշտում է աշխատասիրության, կարգապահության կարևորությունը ճեմարանականի կյանքում և հայրաբար թելադրում է խորունկ սեր, ծառայության և նվիրման ոգի ունենալ դեպի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և մեր վերածնված Մայր Հայրենիքը։

Այնուհետև Վեհափառ Հայրապետն օրհնում է դասախոսական կազմին, ուսանողությանը, մաղթելով նորանոր հաջողություններ։

Վեհափառ Հայրապետն իր խրատականը կենդանացնում է բուռն ծափահարությունների ներքո։

«Պահպանիչ»-ից հետո, դասախոսական կազմը և ամբողջ ուսանողությունը մոտենում են Վեհափառ Հայրապետին, ի համբույր նրա Ս. Աջույն։

Ժամը 1-ին, Վեհարանում, տեղի է ունենում նորին Ս. Օծության նախագահության տակ, 1964—1965 ուսումնական տարվա առաջին մանկավարժական խորհրդակցությունը։

Վեհափառ Հայրապետը, ողջունելով դասախոսական կազմին, այնուհետև օգտակար և շինարար թելադրություններ է անում ուսուցման մեթոդի և ուսումնա-դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ, հասնելու համար է՛լ ավելի բարերար արդյունքների։

Հանուն դասախոսական կազմի, շնորհակալության և երախտագիտության շերմ խոսք է ասում Հոգևոր Ճեմարանի դասախոս Ա. Հատիսյանը, շեշտելով, որ դասախոսական կազմի հանդեպ Վեհափառ Հայրապետի ցույց տված վստահությունն ու հայրական թելադրությունները է՛լ ավելի պարտավորեցնում են նրանց՝ իրենց նվիրյալ աշխատակցությունը բերելու Ճեմարանի ուսումնական-դաստիարակչական աշխատանքներին։

Վեհափառ Հայրապետը այս տարի ևս բարեհաճել է գլխավորել Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը։

Դասախոսական կազմի մեջ, Վեհափառ Հայրապետի թելադրությամբ, աշխարհական դասախոսների կողքին, ներգրավվել են նաև Մայր Աթոռի 6 երիտասարդ վարդապետ միաբաններ, հիմնականում ստանձնելով կրոնական, եկեղեցա-պատմական և հայագիտական առարկաների դասավանդումը։

Ուրախ և ցնծագին հնչում է Հոգևոր Ճեմարանում 1964—1965 ուսումնական տարվա առաջին դանգը։

Սեպտեմբերի 22-ին, երեքշաբթի, Հոգևոր Ճեմարանում սկսվում են կանոնավոր դասախոսությունները։

Գ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
(Անդամ Գեւազուն Հոգեւոր Խորհրդի)

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՍԵՌԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Միջնադարյան հայ բանաստեղծության մեջ շարականները բավական մեծ տեղ են գրավում։ Շարականներն իրենց սկզբնավորման շրջանից մինչև ԺԱ դարի վերջերը կոչվել են ճոգեաոր երգ։

Հոգեւոր երգերն իրենց արվեստով, ձեւով ու բովանդակությամբ տարբեր դարերում տարբեր են եղել։ Սրանք մեզ մոտ ծագել են Ե դարում և աստիճանաբար զարգանալով, տարածվել և մտել են ժամակարգության մեջ։

Մեր հոգեւոր երգի առաջին հեղինակները համարվում են Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը։

Ս. Սահակի և Ս. Մեսրոպի նախաձեռնությամբ, գրերի գյուտից հետո, Հայաստանում առաջացավ ազգային կրոնական գրական մի մեծ շարժում։ Նորաստեղծ հայկական գրական լեզուն հանգիսացավ լավագույն միջոց՝ հայ ժողովրդի կյանքն ու հոգեկան աշխարհը դրսևորելու համար։

Ե դարը միայն թարգմանիչների դարը չէ։ Այս դարում ապրող ու գործող հեղինակներից շատերը միաժամանակ հոգեւոր երգի հեղինակներ են եղել։

Ինչպես շատ ուրիշ քրիստոնյա ազգերի, այնպես էլ մեզ մոտ քրիստոնեության սկզբնական շրջանում կրոնական պաշտամունքի համար առանձին տեղական, ազգային երգեր չկային։ Հոգեւոր երգերին այդ շրջանում նախորդել են սաղմոսների կանոնները։ Այդ սաղմոսներն սկզբում սոսկ ընթերցվում էին՝ թիվ ասվում, բայց հետզհետե հարմարվեցին եկեղեցական երաժշտության եղանակներին և սկսեցին երգվել։ Այս արարողությունը կոչվեց սաղմոսերգություն։

Որովհետև երգվող սաղմոսները շատ երկար էին ու միապաղաղ, այդ պատճառով ժամերգությունը անհետաքրքրական և ձանձրալի էր դառնում ժամավոր հավատացյալների համար։

Ժամանակի ընթացքում եկեղեցական հայրերը, նկատելով ժամերգության այս թերությունները, փորձեցին հոգեւոր երգերը հարմարեցնել Ազգային Եկեղեցու առանձնահատկություններին և հավատացյալների պահանջներին։

Քրիստոնյա բոլոր ժողովուրդների մոտ էլ հոգեւոր երգերի միջոցով արտահայտվում են ժամանակի մարդու պատկերացումներն ու երևակայությունը, կրոնական գաղափարներն ու հասկացողությունները։

Մեր բազմաթիվ ու բովանդակալից շարականները արտացոլում են ազգային, ժողովրդական կյանքը, հատկապես մեր հին հավատը, հեթանոսության շրջանի պատկերացումները՝ արևի, լուսնի, ամպի, արևելքի, բարության աղբյուրի, մի խոսքով՝ բնության,

տիեզերքի և տիեզերական մարմինների մասին։ Այդ են հաստատում մեր Արևագալի շարականների քնարական փոքրիկ բաստեղծությունները, ուր ամեն մի տողի միից երևում է լույսի և արևի պաշտամունքն ու փառաբանումը։ Այդպես են նաև «Մեծացուցէ» շարականները, որոնցում գովերգվում ու փառաբանվում է Տիրամայրը՝ բնությունից վերցված գեղեցիկ պատկերներով, մակդիրներով և համեմատություններով։

Մեր հոգևոր երգերի տեսակներն են՝

Երգեր, որոնք գլխավորապես կապված են եկեղեցական Տոնացույցի և Օրացույցի մեջ եղած տերունական տոների ու սրբերի անվան հետ, որոնք իրենց «կարգ»-ով կամ «սարքն» երգվում են այդ տոներին։ Հոգևոր երգերի մեջ այս տեսակն ամենաշատն է, որը հետագայում կոչվել է շարական։ Շարականների մեծ մասը բաղկացած է կամ երեք, կամ ինը տնից։ Բոլոր տներն էլ նույն եղանակով են երգվում։ Այս երգերի երեք տնից բաղկացած լինելու խորհուրդը Ս. Երրորդությունն է՝ Հայր, Որդի և Ս. Հոգի։ Իսկ միևնույն եղանակով երգվելու իմաստն էլ այն է, որ այդ երեքը կազմում են մի աստվածություն և մի անություն։

Մեր արևագալի գեղեցիկ շարականներից շատերի մեջ այս մասին երգվում է.

Երեք անձինք և մի բնութիւն,
Մի աստուածութիւն.
Զբեղ խոստովանիմք յաւէտ,
Սուրբ Երրորդութիւն[1]։

Ն. Շնորհալին իր նշանավոր «Ներբողեանք»-ի երկրորդ տունը սկսում է այսպես.

Երեքսրբեան մի տէրութիւն,
Միով բնութեամբ աստուածութիւն...։

Երգերի այնպիսի մի խումբ էլ կա, որը քիչ առնչություն ունի եկեղեցական արարողության կամ կանոնների հետ։ Այդ երգերը կոչվում են տաղեր։ Կոմիտասը այսպես է բնորոշում դրանց. «Տաղեր՝ սոցա բովանդակությունը պատկերացնում է պարզ կամ այլաբանորեն Քրիստոսի տնօրենություններն և սրբերի կյանքի ահատակության որևէ նշանավոր և ազդեցիկ բոպենն»[2]։

Հոգևոր երգի մի ուրիշ տեսակն էլ կոչվում է գանձ[3]։ Այս երգերը պարունակում են խնդրվածքներ, որոնք երգվել են եկեղեցում և եկեղեցուց դուրս. սրանք մեծ մասամբ արձակ գրվածքներ են։

Գրերի գյուտից և մեր ազգային գրականության հիմքը դնելուց հետո, ժամերգության մեջ ընդունված ու երգվող սաղմոսները հետզհետե փոխարինվում են նոր, փոքրիկ, ազգային հոգևոր երգերով, որի հետևանքով սաղմոսներն աստիճանաբար կրճատվում ու դուրս են մնում ժամերգությունից։ Ինչպես մատենագրությունը, համարյա այնպես էլ հայոց հոգևոր երգը Ե դարից սկսում է ազգայնանալ։ Սկզբում հորինվում են փոքրիկ, նոր երգեր, որոնք իբրև հավելված երգվում էին Ս. Գրքի օրհնություններից ու սաղմոսներից հետո։ Այս նոր, փոքրիկ հոգևոր երգերը սկզբնական շրջանում կոչվել են կցորդ և դեռ անկախ ու ինքնուրույն չեն եղել։ Այդպես են կոչվել այս երգերը, որովհետև երգվել են սաղմոսներից ու օրհնություններից հետո որպես կցորդ, այսինքն՝ նրանց կցված մի մաս։

«Այս նոր երգերը,— ասում է պրոֆ. Մ. Աբեղյանը,— իրենց նյութն առնում են Աստվածաշնչից, և սաղմոսների ու մարգարեական օրհնությունների քնարական տարրը որոշում է նրանց ոգին։ Դրանք հորինվում են նույնիսկ Ս. Գրքի բառերով։ Այդպես է եղել հոգևոր երգի ծագումն ու վիճակը Ընդհանուր եկեղեցու մեջ այն ժամանակ, երբ լինում է հայոց գրերի գյուտը և հիմք է դրվում մեր դրականության»[4]։

Ահա այս կցորդների հիմքի վրա է, որ ժամանակի ընթացքում ծնվում, աճում ու զարգանում են մեր ազգային շարականները։ Շարականների զարգանալուց ու ժամակարգության մեջ ընդունվելուց հետո, Հայոց եկեղեցու ժամերգությունը սկսում է ազգայնանալ։ Գաղարում է սաղմոսերգությունը, որի ութ կանոններին փոխարինում են ութ տեսակ շարականներ՝ ութ ձայնով[5]։

Շարականների կանոնները բաժանված են ութ խմբի՝ «Օրհնութիւն», «Հարց», «Մեծացուցէ», «Ողորմեա», «Տէր յերկնից», «Մանկունք», «Ճաշու» և «Համբարձիս»։

Մեր ժամերգության արարողությունները, բացի շարականների կանոններից, բաժանված են նաև օրերի ու ժամերի։ Այսպես՝

Կիրակի օրը նվիրված է գլխավորապես Քրիստոսի հարությանը.

Բշ. (երկուշաբթի) օրը պատկանում է արարչագործությանը և հրեշտակներին.

---

[1] Ժամագիրք, էջ 77։

[2] Ս. Սողոմոնյան, «Արարատ», 1894 հուլիս, էջ 223։

[3] Գանձ—գանձ, պարսկերեն նշանակում է կրոնական երգ։

[4] Մ. Աբեղյան, «Հայ հին գրականության պատմություն», գիրք Ա, էջ 475։

[5] Այդ ութ ձայներն են՝ ան (առաջին ձայն), ան (առաջին կողմ), բն (երկրորդ ձայն), բկ (ավագ կողմ), գն (երրորդ ձայն), գկ (վար ձայն), դն (չորրորդ ձայն) և դկ (վերջ ձայն)։

Գշ. (երեքշաբթի) օրը հատկացված է մարգարեներին.

Դշ. (չորեքշաբթի) օրը Աստվածածնի օրն է.

Եշ. (հինգշաբթի) օրը ի պատիվ առաքյալների.

Ուրբաթ օրը ի հիշատակ Քրիստոսի չարչարանքի, և Շաբաթը՝ ի պատիվ մարտիրոսների։

Հայոց Եկեղեցու արարողության ժամերն են՝ Գիշերային ժամ, Առավոտյան ժամ, Արևագալի ժամ, Ճաշու ժամ, Երեկոյան ժամ, Խաղաղական ժամ և Հանգստյան ժամ։

Ուրեմն, ամեն մի տոն կամ սովորական օր և արարողության ժամ, ըստ հայ եկեղեցական կանոնի, ունի համապատասխան շարական կամ շարականների շարք։

Վերոհիշյալ ութ տեսակի շարականները ամբողջությամբ վերցրած, Հայոց Եկեղեցու ժամակարգության մեջ կոչվում են նաև «պատկեր», «կանոն» կամ «կարգ», երբեմն էլ՝ «օրհնություն» կամ ուղղակի «երգ»։

Սկսած Ե դարից մինչև ԺԲ դարը, եկեղեցական նշանավոր հայրերը և մեր մատենագիրներն իրենց գործերում, երբ խոսել են շարականների մասին, պատկեր, կանոն կամ կարգ, օրհնություն և երգ բառերը գործածելիս միշտ նկատի են ունեցել մեր հոգևոր երգը, շարականները։ Այսպես է եղել մինչև ԺԲ դարը, մինչև շարական բառի գործածությունն ու տարածումը։

Այժմ ծանոթանանք մեր բանաստեղծների կողմից շարական բառի գործածության և նրան տրված տարբեր բացատրություններին։

«Շարականն իբրև անդրանիկ խորագիր,— գրում է բանաստեղծ Սահակ վարդապետ Ամատունին,— առաջին անգամ մեր Շարականի մեջ երևում է Հինանց[6] կրճատ ձևով մեկը մյուսի հետևից գրված վեց հատ «Գովեան»-ների վերա»[7]։

«Անունդ շարական,— գրում է Հ. Գ. Ավետիքյանը,— համարեալ էր երբեմն բարդ լինել ի բառիցն շար, և ական, ական այսինքն՝ քար աղնիւ, իբրև թէ շարական նշանակիցէ շար ականց պատուականաց, այլբանելով գվայելչութիւն երգոյն...»[8]։

Այս բացատրության դեմ հենց նույն տեղում առարկում է Հ. Գաբրիել Ավետիքյանը և տալիս է շարական բառի նշանակության մասին իր կարծիքը. «... Վասն որոյ ընտրելի է համարել ածանցեալ անուն մասնկամբն կան, ի բառէն շար, որ կամ իմանի սովորական բառն շարք, կարգ, և կամ յերբայականէ առեալ շիր կամ շիրան, որ առ նոսա երգ նշանակէ»[9]։

Հ. Գ. Ավետիքյանի այս բացատրությունից 35 տարի հետո, բանաստեղծ Մ. Էմինը իր «Шараканы богослужебные каноны и песни Армянской восточной церкви» գրքում գրում է. «Շարական բառի բացատրությունը մեր կողմից մանրամասնորեն տրված է մի ուրիշ տեղ... Այս բառի արմատն է շիր—երգ, որն ունի սեմական ծագում, հայոց լեզվի մեջ երևում է XII դարում՝ գործածվելով թե՛ որպես հատուկ, և թե՛ որպես ածական անուն»[10]։

Մոտ քսան տարի հետո, 1901 թվականին, հենվելով Հ. Գ. Ավետիքյանի և Էմինի բացատրությունների վրա, շարական բառի նշանակության մասին. Դ. Խաչիկոնցը «Լումա» ամսագրում գրում է. «Գալով «շարական» բառի նշանակության, մեր եկեղեցական մեկնիչները ավելի կհամարեն «Շարականը» բարդված շար և ական բառերե, այսինքն՝ աղնիվ քար, իբրև թե նշանակե «շարականաց պատուականաց», երգին վայելչությունն այլաբանելով։ Սակայն հայ լեզվի բարդության կանոնն ասոր դեմ կելլե, որովհետև ական իբրև աղնիվ քար նշանակիչ, սովորաբար նախադասվի բարդության մեջ, ինչպես ականակապ, ականագույն և այլն, իսկ ուրիշ բառ եթե նշանակե, բառն անփոփոխ կմնա, ուղղական, ինչպես «մեծական», «շարական» և այլն։ Ասոր համար նախամեծար է «Շարական» բառն ածանցված նամարիլ երբայական սեմական շիր կամ շիրա բառեն, որ «երգ» կնշանակե»[11]։

Որ շարական բառն երբայական շիր, կամ շիրա բառերից չի առաջացել, այլ զուտ հայկական բառ է՝ շար արմատից և ական վերջածանցից, Սահակ վարդապետ Ամատունին ցույց է տվել դեռևս 1894 թվականին «Արարատ» ամսագրում, «Շարականների ուսումնասիրություն» հոդվածում. «Գալով շարական բառիս բացատրության, նա կազմված է իսկ և իսկ «շար» բառից և ածանցված «ական» մասնիկով և կազմվել է շարական, որպիսին սովորական է մեր լեզվի մեջ. զորօրինակ՝ զոր—զորական, դաս-դաս կան, խումբ-խմբական և այլն և այլն»[12]։

---

[6] «Հինանց» նշանակում է հիանալի. Զատկից մինչև Հոգեգալստյան տոնը հիսուն օր է։ Այդ օրերին երգվող Շարության շարականները կոչվում են «Հինանց»։

[7] «Արարատ», 1894 հունիս, էջ 179.

[8] «Բացատրություն շարականաց», էջ Թ.

[9] Նույն տեղում.

[10] М. Эмин. „Шаракан". 1879, Москва, Предисловие VI—VII.

[11] «Լումա», 1901, գիրք Ա, էջ 215 (ընդգծումն իմն է—Գ. Հ.).

[12] «Արարատ», 1894 հուլիս, էջ 219.

մեջ մինչև ԺԲ դարը գոյություն չի ունեցել։ Եթե շարական բառը գոյություն ունենար, ասենք թե դեռևս Ե դարից, երբ նոր էր սկզբնավորվում մեր հին գրականությունն ու ազգային եկեղեցու ժամակարգությունը՝ թարգմանական և ինքնուրույն ձևերով, երբ Ս. Գրքի, սաղմոսների ազդեցությունն ավելի նկատելի և ուժեղ էր մեր նախնական ժամերգության ու ծիսակատարության վրա, էլի մի կերպ հնարավոր էր ենթադրել, որ շարական բառը գուցե եբրայական ծագում ունենար, մինչդեռ բառի ստուգաբանությունը ցույց է տալիս, որ նա հայկական բառարմատ է։ Բացի այդ ԺԲ դարում մենք արդեն ունեինք մեր ձևակերպված հարուստ գրական լեզուն ու գրականությունը։ Այդ ժամանակներում Հայոց եկեղեցին ոչ մի առնչություն չուներ եբրայական կամ սեմական գրականության ու լեզվի հետ և չէր կարող վերցնել հիշված շիր կամ շիրա բառարմատը ու դարձնել շարական բառաձևը, ինչպես կարծում են Հ. Գ. Ավետիքյանը, Էմինը և Խաչիկոնցը։ Իր «Հայոց լեզվի պատմության» 2-րդ գրքի ԺԴ գլխում լեզվաբան Հ. Աճառյանը, խոսելով եբրայական փոխառությունների մասին, ասում է. «Մեր մատենագրության պատմությունն ընդհանրապես ընդունում է, որ հայերեն Ս. Գիրքը նախ՝ ասորերենից և հետո՝ հունարենից է թարգմանված և ոչ թե եբրայեցերենից... Եվ եթե այսպես է, պետք է հետևցնել, որ մեր նախնիք իրենց ուսման ծրագրի մեջ չէին առած եբրայեցերենը. և հետևաբար եբրայեցերենը նաև զրական նանապարհով ուղղակի ազդեցություն չունի հայերենի վրա»[13]։

Թարգմանական շրջանում հայերենի մեջ Ս. Գրքի և եբրայական գրականության միջոցով մտած բառերի ընդհանուր գումարը պրոֆ. Աճառյանը հաշվում է 138, որոնցից շատ կործածական են՝ ալլելուիա. ամէն, բելիար, դաբիր, գեհեն, յոբելեան. յոբելեար. ռաբբի և այլն։ Այս բոլոր բառերն անցել են մեր լեզվի մեջ հավանաբար Ս. Գրքի թարգմանության ժամանակ, ուր ոչ մի հիշատակություն չկա «շիր» կամ «շիրա» բառերի եբրայական լինելու մասին։

Քանի որ թարգմանական շրջանում և հետագայում, մինչև ԺԲ դարը, ոչ մի հիշատակություն չկա այդ «շիր» կամ «շիրա» բառերի մասին, դրա համար էլ Մ. Էմինը ենթադրում է, որ այդ բառը անցել է հայերենին ԺԲ դարից։ Բայց այդպիսի փոխառում, այն էլ ԺԲ դարում, հնարավոր չէր։

«Եթե մեր նախնիքը հայերենին չէին սովորում,— եզրակացնում է Հ. Աճառյանը,— հավանական չէ, որ հաջորդ դարերում սովորեին։ Հունական փոխառությունների նման եբրայական բառերն էլ հայերենի լեզվի մեջ մարմին ստացած ձևեր չեն։ Նրանցից հազիվ 15 հատը սովորական լեզվի մեջ մտել են, որոնցից 6 հատը նաև արդի ժողովրդական լեզվի մեջ»[14]։

Ունենալով հայկական ծագում, շարական բառը մեր հին և արդի գրական լեզվի մեջ գործածվել է և գործածվում է սովորաբար երեք առումով։

Նախ՝ շարական ասելով հասկանում ենք մի գործ, եկեղեցական մի երգ, մի բանաստեղծություն, ինչպես ասենք՝ Ն. Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր» շարականը, Վահան Գողթնացուն նվիրված «Զարմանալի է ինձ» շարականը և այլն։

Ապա՝ շարական նշանակում է նաև երգերի շարք. օրինակ՝ ութ ձայն շարական, երկու կանոն շարական և այլն։

Եվ վերջապես՝ շարական նշանակում է դիրք, երգերի ժողովածու, մեր Շարական դիրքը, որը Շարակնոց էլ է կոչվում։

Այժմ քննենք այն հարցը, թե մեր բանաստեղծության մեջ ինչպե՞ս է բացատրվել այդ շարականների ծագումը, կազմությունը, տարածումն ու դասդրումը։

Հայկական շարականների ուսումնասիրության բնագավառում խոշոր աշխատանք է կատարել մեծ գիտնական Մ. Արեղյանը։ Դիշտ է, նրանից տարիներ առաջ Մ. Էմինը (1879), Սահակ վարդապետ Ամատունին (1894), Դավիթ Խաչիկոնցը (1901), Ն. Տեր-Միքայելյանը (1905) մեր շարականների մասին գրել են արժեքավոր ուսումնասիրություններ, բայց դրանցից և ոչ մեկը չունի պրոֆ. Մ. Արեղյանի ուսումնասիրության խորությունն ու բազմակողմանիությունը։ Շարականների մասին Մ. Արեղյանի հոդվածաշարն առաջին անգամ լույս է տեսել 1912 թվականի «Արարատ» ամսագրի 7—12 համարներում։ Իր ուսումնասիրության մեջ, դժբախտաբար, Մ. Արեղյանը քննադատության չի ենթարկել ու հերքել Դ. Խաչիկոնցի և Ն. Տեր-Միքայելյանի սխալ տեսակետները մեր շարականների ծագման, սկզբնավորման վերաբերյալ։ Նա այդ չի արել ո՛չ 1912 թվականին և ոչ էլ իր «Հայոց հին գրականության պատմության» Ա գրքի «Հոգևոր երգ» գլխում, որը համարյա «Արարատ» ամսագրում լույս տեսած հոդվածաշարի ամբողջությունն է։

Որո՞նք են Դ. Խաչիկոնցի և Ն. Տեր-Միքայելյանի սխալ մեկնաբանությունները մեր

[13] Հ. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 2-րդ մաս, ԺԴ գլուխ, էջ 59, 61, 62 (ընդգծումն իմն է—Գ. Հ.)։

[14] Նույն տեղում, էջ 62 (ընդգծումն իմն է—Գ. Հ.)։

հոգևոր երգի կամ շարականների առաջացման ժամանակի մասին։ Քննենք դրանք։

Բանասեր Դ. Խաչկոնցը 1901 թվականին «Լուսա» ամսագրում «Հայոց կրոնական բանաստեղծությունը» իր հոդվածը այսպես է սկսում. «Մեր հին մատենագրությունը, շատ քիչ բացառությամբ, զուտ կրոնական է. և մեր նախնիքը ընդհանուր դիծերու մեջ բոլորովին կրոնական հասարակություն մէին իրենց եկեղեցիով։ Սա ինքզինքն իրև ազգային Հայ եկեղեցի շեշտել տվավ Զ դարու կիսուն։ Այնուհետև է, որ կուսնեաբ մեր տոմարն ու կրոնական բանաստեղծությունը»[18]։

Ուրեմն մեր հոգևոր երգը՝ շարականները սկսվում են վեցերորդ դարի երկրորդ կեսից կամ այնուհետև, ինչպես ասված է։ Ապա Դ. Խաչկոնցը գտնում է, որ Ս. Սահակը և Ս. Մեսրոպը շարականների և դրանց եղանակների առաջին հեղինակներ չէին կարող լինել։

Մեր շարականների սկզբնավորման ու ժամանակի վերաբերյալ հենց այսպիսի մի կարծիք էլ հայտնում է բանասեր Ն. Տեր-Միքայելյանը։ Հայկական շարականների վերաբերյալ գերմաներեն գրած իր ուսումնասիրության մեջ, հենվելով այն փաստի վրա, որ Հովհան Օձնեցին ժամակարգության միակերպության գործը ձեռնարկելիս իր դրվածքներից հատկապես «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» և մյուսների մեջ չի խոսում կցորդների կամ շարականների կարգավորման և միակերպության մասին, Ն. Տեր-Միքայելյանը եզրակացնում է, որ Օձնեցու ժամանակ, այսինքն Ը դարում, դեռ չեն եղել հոգևոր նոր երգեր, կամ սաղմոսների նմանողություններ»[19]։

Ուրեմն, ըստ Ն. Տեր-Միքայելյանի, մեր շարականներն սկսվում են Ը դարից հետո։

Այս երկու բանասերների վերոհիշյալ սխալ, չհիմնավորված տեսակետները հերքելու համար, խոսքը տանք մեր պատմագիրներին։

Հազկերտի հրամանի համաձայն, քրիստոնյա ազգերի ներկայացուցիչները երբ Ե դարում իրենց այրուձիով հավաքվում են Պարսկաստան և արքունիքի առաջ լսում են Հազկերտի բերանից հավատափոխության մասին, թե «Հարցէք, քննեցէք, տեսէք, թող որ լաւն է, ընտրեալ կալցուք», այստեղ քրիստոնյա ամբոխը, ասում է Եղիշեն, «սկսան այնուհետև բարձր բարբառով սաղմոսիք և երգք հոգևորք և մեծապայծառ վարդապետութեամբ յայտ յանդիման մեծի բանակին պաշտօն ցուցանել և աներկիւղ առանց զանգիտելոյ, ո ոք և երթայր առ նոսա ուսուցանէին կամակար...»[17]։

Այս մեջբերումը ցույց է տալիս, որ մեր եկեղեցում Ե դարում, բացի սաղմոսերգությունից, արդեն գոյություն են ունեցել հոգևոր երգերը, այսինքն շարականները։

Ղազար Փարպեցին պատմում է, որ Ս. Սահակի կողմից Աստվածաշունչը թարգմանվելուց և դպրոցներ բաց անելուց հետո մաքդկանց բազմությունը, «... որք շահեալք ի հոգևոր օգտի՝ ընթանային խնդալիցք ի հաղորդմանէ մեծի խորհրդոյն, արձակեալք իւրաքանչիւր ի տունս, մեծամեծք և տղայք, սաղմոսելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս, ի հրապարակս և ի փողոցս և առանձինն»[18]։

Կցորդը, ինչպես արդեն ասված է, նշանակում է հոգևոր երգ՝ շարական։ Ուրեմն ի Փարպեցու վկայությամբ հաստատվում է, որ մենք Ե դարում ունեցել ենք հոգևոր երգ՝ տարբեր սաղմոսերգությունից, որովհետև ասված է «սաղմոսելով և կցորդս ասելով»։

Կիրակոս Գանձակեցին, Պապ և Աթանագինես եղբայրների անվալել և արատավոր կենցաղի մասին խոսելիս, թե ինչպես նրանք եկեղեցին ու առաքինի գործերը թողած, ուտելով, հարբելով և անառակ կանանց հետ էին ժամանակ անցկացնում, պատմում է. «Իսկ նոքա թողեալ զգործ եկեղեցւոյ, ուտելոյ և ըմպելոյ պարապեալք և փոխանակ սաղմոսից և երգոց հոգևորաց, գուսանօք վարձակօք և բողիւք շատանային»[19]։

Դարձեալ Կ. Գանձակեցին, թվելով Ե դարի մեր թարգմանիչների և մատենագիրների բազմաբեղուն գրական գործունեությունը, խոսելով հատկապես բազմատեսակ հոգևոր երգերի մասին, գրում է. «Ներբին և երգս շարականաց բազդր և գեղեցիկ եղանակաւ / մեծ խորհրդով Մեսրոպեանն Քրիստոսի և Քառասնօրեայ գալստեանն ի Տաճարն, Մկրտութեանն և Եկատերութեանն ի Բեթանիա և յԵրուսաղէմ, Մեծի շաբաթուն շարշարանաց և Յարութեանն, Համբարձմանն և Հոգւոյ գալստեանն, Խաչի և Եկեղեցւոյ, և այլ տոնից տէրունականաց, և սրբոց ամենեցուն, ապաշխարութեան՝ Ե ամենայն ննջեցելոց, պէսպէսս և զանազանս և անթիւս, որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցի Հայաստանեայց...»[20]։

---

[18] «Լուսա», 1901, գիրք Ա, էջ 209 (ընդգծումն իմն է—Գ. Հ.)։

[19] N. Ter-Mikelian, „Die Armenische Hymnarium", Leipzig, 1907, էջ 61։

[17] Եղիշէ, «Պատմութիւն Վարդանանց», Թիֆլիս, 1913, էջ 23։

[18] Ղ. Փարպեցի, «Պատմութիւն Հայոց», գրվագ Ա, Թիֆլիս, էջ 35—36։

[19] Կ. Գանձակեցի, «Պատմութիւն», Թիֆլիս, 1909, էջ 23։

[20] Նույն տեղում, էջ 32։

Այստեղ արդեն ոչ միայն Ե դարում հոգևոր երգերի գոյությունն է հաստատվում, այլև այն, որ հայկական հոգևոր երգը այդ ժամանակ բավականին զարգացած է եղել և այդ դարում արդեն ժամակարգության մեջ ընդունված են եղել վերևում հիշված տոների համանվագոր շարականները։

Հենց ինքը Հովհան Օձնեցին, որի գործերի հիման վրա հիմնվելով Ն. Տեր-Միքայելյանը փորձել է ժխտել մեր շարականների գոյությունը մինչև Ը դարը, իր գրվածքներով հերքում է Տիրայելյանի տեսակետը։ Այսպես, օրինակ, այլոց նկեղեցին միշտ էլ Քրիստոսի Ծննդյան և Մկրտության տոները միասին, միևնույն օրն է կատարում՝ հունվարի 6-ին։ Սակայն Օձնեցու ժամանակ պատահում էր, որ ոմանք Ծննդյան տոնը կատարում էին, բայց Հայաստանյաց՝ այսինքն Մկրտության տոնը աչքաթող էին անում։ Այդպիսի կարգազանցներից զգուշացնելով ու դժգոհելով իր «Ճառնարանութեան» մեջ, այդ առթիվ Օձնեցին ասում է. «Էր՞ ազգաւ ի կցուրդս գեղեցկանուագս մկրտութեան բանից յորիենեցին երանելիքն մեր վարդապետք»[21]։

Այստեղ հասկանալի է, որ Օձնեցին ներբանելի վարդապետքս ասելով ակնարկում է Ե դարի գրողներին ու թարգմանիչներին։ Հովհան Օձնեցու խոսքն այստեղ վերաբերում է Քրիստոսի Ծննդյան և Մկրտության տոների շարականներին, որոնք մեր հոգևոր երգերի մեջ ամենահինն են և վերագրվում են Ս. Սահակին, Ս. Մեսրոպին ու Մ. Խորենացուն։

Թվում է, թե վերևում բերված փաստերը արդեն բավական են ցույց տալու, որ Դ. Խաչիկոնցի և Ն. Տեր-Միքայելյանի տեսակետները մեր շարականների առաջացման ժամանակի վերաբերյալ անհիմն են ու սխալ։

Մեր, ինչպես ընդհանուր հին գրականության, այնպես էլ հոգևոր երգի անդրանիկ հեղինակներն ու բանաստեղծները հանդիսանում են Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը՝ իրենց աշակերտներով։ Նրանք էին, որ իրենց գրչով առաջին անգամ հայ ժողովրդի համար հորինեցին դիր ու գրականություն, հայացված եկեղեցի և եկեղեցական երաժշտություն ու բանաստեղծություն։ Պարզ է ուրեմն, որ Ե դարում մեր ազգային գրականության հետ մեկտեղ հիմնվել ու զարգացել է նաև հոգևոր երգը, շարականը։

Սահակ-Մեսրոպյան շրջանի պատվավոր գործը շարունակեցին և զարգացրին, ավելի ինքնուրույն ու ազգային դարձրին նրանց աշակերտները, այնպես որ սկսվելով և արագ զարգանալով Ե դարում, հետագա դարերին հանձնվեց հոգևոր բանաստեղծության մի պատկառելի ճյուղ՝ շարականների տեսակը։

Այսքանը շարականների առաջացման և ժամանակի մասին։

(Շարունակելի)

[21] Յովհան Օձնեցի, «Ճառնարանութիւն», էջ 12։

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ*

Բ

«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ԱՅԼ ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր հին գրականությունը հարուստ է խոսքի զանազան շրջաբանություններով, բայց Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը այդ կողմից յուրահատուկ դիրք է գրավում։ Հին գրական երկերի մեջ խոսքի ոճաբանական շրջաբանությունները ընդհանուր բնույթ ունեն, այսինքն չեն մշակված, չեն անհատականացված, այլ ուղղակի բնական խոսքը օժտված է դրանցով։ Եթե կան նույնիսկ անհատականացման օրինակներ, դրանք գերազանցապես արված են հունարենի հռետորական օրենքների հիման վրա և գերազանցապես ընդօրինակումներ են։

Նարեկացին բնական խոսքի շրջաբանությունները մշակում և գործադրում է հատուկ նպատակով։ Նա ջանում է իր խոսքը ազդեցիկ և խորիմաստ դարձնել, ազդել լսողի մտքի ու զգացումների վրա։ Ամեն ոճաբանական առանձնահատկություն այստեղ ունի որոշակի նպատակադրում։ Դրանք կամ փոխառություն են մեր հին գրականության մյուս երկերից կամ Աստվածաշնչից, որի ազդեցությունը ուժեղ է նրա վրա, կամ ուղղակի հենց Նարեկացու անհատական ստեղծագործության արդյունքն են։ Նրա ստեղծագործած շրջաբանությունները քանակով ու որակով միանգամայն բարձր են ընդօրինակումների համեմատությամբ։ Նա ստեղծում է թարմ շարույթներ, հին բառերը օժտում է նոր նշանակություններով, հետևում է բազմազանության ու պեսպիսության սկզբունքին, հղանում է անսպասելի պատկերներ, հակադրություններ և այլն։ Հենց այս նոր բառերի կամ քիչ գործածված բառերի կիրառումը խոսքն օժտում է նրբությամբ և վեհությամբ։

Մեր հոդվածաշարի այս մասում պետք է զբաղվենք Նարեկացու ոճաբանական ինքնուրույն շրջաբանությունների քննությամբ, բայց մինչև դրանց անցնելը ուզում ենք մի քանի խոսք ասել այն մասին, թե ի՞նչպես է Նարեկացին օգտագործել իրենից առաջ եղած գրականության ոճական միջոցները։ Այստեղ պետք է առանձնապես նշենք Աստվածաշնչի դերը, որի առաջին տողից սկսած մինչև վերջինը ծանոթ է Նարեկացուն։ Նրա ամեն մի էջը համարյա հիշեցնում է Աստվածաշնչի բառապաշարն ու դարձվածները, նյութը, հատուկ անունները, նրա մեջ հիշատակված դիպվածները և պատմությունները։ Նա չի բացատրում Աստվածաշնչի առասպելի կամ լեգենդի ծագումը, այլ որոշ ակնարկով հիշում է և անցնում, ուստի մեծ մասամբ մեզ անծանոթ պատումները մնում են անհասկա-

---

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Է-ից և Ը—Թ-ից։

ալի։ Օրինակ՝ «Ահա արդարև երդս կատարերդութեան չնարահար պոռնկի, յածեալ և ոգեալ քաջ հնչեցուցեալ ողբս ոգորմելիս և կիսեցուցիչս, ըստ առակաւոր բանին Եսայեայ, որ ի պատգամին Տիւրոսի» (ԼԹ)։ Ընդգծված մասն անհասկանալի է, նյութի անծանոթ լինելու պատճառով։ Վերջին մասում, այսինքն՝ «որ ի պատգամին Տիւրոսի», այլը պակասում է և առաջանում է զեղչում (էլիպս). իսկ զեղչումը նպաստավոր է այն համանակ, երբ խոսքի նյութը ծանոթ է, երբ ողջմնակի գործողություններով հիշեցվում են այց թողած անդամները, կամ պահվում են մտքի մեջ, և երբ նրանք արտահայտում են լգացումներ ու հույզեր, կամ խոսքն այնպես դասավորվում, որ այդ զեղչված մասերը միշտ բացահայտվում են։ Իսկ այստեղ այդ բոլոր հանգամանքները բացակայում են, խոսքը զրկվում է ընդհանրական արժեքից, դառնալով միայն որոշ դասի սեփականություն։ Հետաքրքրականն այն է, որ մի Թարգմանիչ վերևի նախադասությունը մեկնել է այսպես. «ինչպես Եսային կրսե առակով Տյուրոսի մասին գրած պատգամին մեջ։ «Որ ի պատգամին Տիւրոսի» նշանակում է՝ «որ Տյուրոսի պատգամի մեջ», այսինքն՝ «որ ասված է Տյուրոսի պատգամի մեջ», կամ՝ «որ ասել է Եսային Տյուրոսի պատգամի մեջ», քանի որ Եսայու մարգարեության ԺԳ գլուխը, որտեղից բերված է այդ խոսքը, կոչվում է «Պատգամ Տիւրոսի» (տե՛ս Աստվածաշունչ, տպ. Պոլիս, 1895)։ Կամ՝ «իբրև զհաւ վայրենի սրացայ, ըստ Ովսէեան բանին առ Եփրեմ, ի նախնին իմ սովորութիւն»։ Նախադասության կազմությունը անկանոն է, որովհետև մտածողությունը չի համապատասխանում ձևին. ճիշտ կլիներ, եթե այս նախադասությունը թարգմանեինք՝ «իբրև մի վայրի թռչուն սրացա դեպի Եփրեմը» (կամ Եփրեմի մոտ)։ Բայց այն ժամանակ «ի նախնին իմ սովորութիւն» կապակցությունը կմնար նախադասությունից դուրս և կդառնար ավելորդ ու անհասկանալի։ Իհարկե այսպես չէ այս նախադասության միտքը։ «առ Եփրեմ» նշանակում է՝ «Եփրեմի վերաբերյալ, Եփրեմի մասին», բայց, որպեսզի վերջին կապակցությունը այդ իմաստը ունենար, պետք է գործածվեր մի ասացական բայ։ Այստեղ հարկավոր էր ասել բայը. գոնե պետք է լիներ «ըստ Ովսէեան բանին՝ ասացեալ առ Եփրեմ», բայց բանաստեղծը այդ ասացական բայը բաց է թողել, իսկ «առ Եփրեմ» կապակցությունը ենթարկել է գոյականին՝ այսինքն բան գոյականը ընդունելով ի նախդիր, միաժամանակ իբրև բայ առել է վերաբերության անուղղակի խնդիր, որ ակնհայտ լեզվական թերություն է՝ և առաջացել է զեղչումից (էլիպսից)։ Սակայն միտքը անհասկանալի է դեռևս, քանի որ սրացայ բայը հեշտությամբ առ Եփրեմ կապակցությունը դեպի իրեն է ձգում, որպես մատուցման անուղղակի խնդիր։ Այս դեպքում գոնե պետք է արտահայտվեր որևէ հարաբերական բառով. «Ըստ Ովսէեան բանին, որ առ Եփրեմ»։ Մի խոսքով՝ այստեղ միայն պետք է դուշակենք նախադասության միտքը, իմանանք, թե Աստվածաշնչում ո՞րտեղ և ի՞նչ է ասված Եփրեմի վերաբերյալ, հակառակ դեպքում նախադասությունը մնում է իրեն փակ դուռ։

Լեզվական այս տեսակ թերությունների մասին առանձին խոսել ենք, այժմ տեսնենք, թե ի՞նչ ընդհանուր արտահայտություններ, պատկերներ է օգտագործել Նարեկացին Աստվածաշնչից և այլ երկերից, և ո՞րն է ինքը ստեղծագործել։

Նարեկացին իր վերցրած նյութը որոշակի ոճավորման է ենթարկում, դրանցով ստեղծում է նմանություններ ու պատկերներ և շատ հաճախ խստացնում է նրանց արտահայտությունը։ Դրանք նյութ են ծառայում միայն բանաստեղծի համար, որպեսզի նա ստեղծի փոխաբերական արտահայտություններ, պատկերներ, համեմատություններ։ Շատ հաճախ նա աստվածաշնչական ամբողջ շրջասությունները արտահայտում է մի բառով, որ ինքն է կազմում. օրինակ՝ Երեմիայի մարգարեության հետևյալ սովորական նկարագրական արտահայտությունը. «եւ զնացի յափն Եփրատ դետոյ, փորեցի և առի զսփածանելին ի տեղւոջէն, ուր թաղեցի զնա անդ. և ահա ապականեալ էր սփածանելին, և ահա չէր ինչ իմիք պիտանացուս» (ԺԳ 7)։ Նարեկացին մշակել է այսպես. «իբրև զհանդերձս ինչ ապարահից (տպագիր՝ ապահարահից) զաղրացայ. որպէս թրծեալ ման խեցեղէն փշրեցայ անարծարծելիս»։ Համեմատի՛ր. «եւ կործանումն նորա եղիցի իբրև զբեկումն խեցեղէն անօթոյ բրտի, մանր խորտակելոյ, զի մի՛ ոք դտանիցէ առնուլ սակաւ մի ջուրս» (Եսայի Լ 14)։ Նախ փոփոխության են ենթարկվել որոշ բառեր, շարույթներ, օրինակ. սփածանելի բառը, որ նշանակում է մեջքը կապելու շոր, հին բառ է, առավել Աստվածաշնչի մեջ գործածված. նա փոխել է ընդհանուր բառով, բայց և նկարագրական ձևով, առանձին նախադասություններով արտահայտված սփածանելի բառի հատկանիշները բացահայտել է մի խիստ ու անպատշաճ մակդիրով. «Իբրև զհանդերձս ինչ ապարահից»։ Երկրորդ նախադասության մեջ աստվածաշնչական նմանությունը շատ ավելի թույլ է ու անհամապատասխան. կործանումը չի կարելի նմանեցնել կոտրված անոթի հետ.

ֆիզիկական նմանության տեսակետից դրանք անհամատեղելի են. կործանումը կարող է նմանվել անկման հետ և ոչ անկման հետևանքով առաջացած երևույթի հետ. այս պարզունակ նմանությունը նարեկացին փոխել է ավելի ճիշտ և որոշակի արտահայտված նմանությամբ. «որպէս թրծեալ աման խեցեղէն փշրեցայ անարծարծելիս», որով ոչ միայն ստացվել է իրական պատկեր, այլև Աստվածաշնչի ոգի. «մի՛ ոք գտանիցէ ի նմանէ, որով նուր բառնայցէ կամ որով մարթիցէ տոնուլ սակաւ մի ջուր», ամբողջ տասնհինգ բառից բաղկացած շրջասությունը, որ միայն մի բառի արժեք ունի, նա արտահայտել է արծարծել բառով, որը նարեկացու ժամանակ արդեն ընդարձակ գործածություն ուներ՝ նորոգել և կամ բորբոքել (կրակը) նշանակություններով։

Վերցնենք ուրիշ օրինակներ. «Զարտաքնայարդար բաժակս անմաքուր, զբռեալ որմս գարշունակ, զսին պարծանօք պաճուճեալս, զլոյսս ի մոայլ շրջեալ, զգերանակիր ակնս թշուառացեալ, զչահս փառաց շիջեալս» (Ի է), Համեմատի՛ր. «Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի սրբէք զարտաքին զրաժակին և զսկաւառակին, և ի ներքոյ լի են յափշտակութեամբ և անխառնութեամբ» (Մատթ. ԻԳ 25). «Հարկանելոց է զքեզ Աստուած, որմ բռեալ (Գործք ԻԳ 3), «Քանզի մեծարանս սնոտեաց բարբառեալս» (Բ Պետր. Բ 18). «Իսկ արդ եթէ լոյսդ, որ ի քեզ է, խաւար է, խաւարն որչափ նա» (Մատթ. Զ 23). «Թող հանից զշիղդ յականէ քումմէ և ահաւադիկ ի քում ականդ գերան կայ» (Մատթ. է 4),

«Պակասեալ աւուրցս ի հեծութենէ, և ընթացք ամացս ի հառաչմանէ, ըստ նուագարանաց երգողին, իբրև ասուի ի ցեցոյ և փայտ ի յորդանէ, ըստ իմաստնոյն բանի ի խիթմանէ սրտիս ճայեցայ, իբրև զոստայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտան գտայ. իբր զամպ սուսուտեալ և զցօղ վաղորդայնի սպառեցայ (Նարեկ ԻԱ). համեմատիր. «Իբրև ցեց ճանդերձի և որդն փայտի, նոյնպէս տրտմութիւն վնասակար է սրտի առն» (Առակ Իե 20). «Մաշեցեր որպէս սարդի ոստայն զանձն նորա» (Սազմ. ՀԼ 12), «Վասն այնորիկ եղիցին իբրև զամպ առաւստու և իբրև զցօղ վաղորդայնոյ որ անցանէ (Ովսէէ ԺԳ 3),

«Մաքրութեան ծաղիկ ոչ ունիմ, և ոչ իւղ ողորմութեան, և դիշերոյն մոայլ աննշոյլ. ի նիրհումն մահու ննջեալ եմ, և տագնապ կոչողին փողոյ ստիպէ. զզարդ հարսանեացն կրկին մերկացայ, և զձէթ վարուցն վերստին լթի և դուռն մտին հարսանեաց աւասիկ փակիս» (Նարեկ ԿԸ), Ցնայած շրջումների պատճառով երբեմն որոշ մտքեր մեզ չեն հասնում, առաջանում են առանձին բառերի անջատումներ ընդհանուր կառուցվածքի մեջ բայց փոխվելով ավանդական ձևերը. փոխվում է և հնչերանգությունը. բառերը ստանում են ուժեղ արտահայտություն, մանում են այնպիսի անսպասելի հարաբերությունների մեջ, կամ դրսևորում են այնպիսի կապեր, որ մենք երբեք այդ բառերի նկատմամբ չէինք նկատել սովորական կիրառություններ. ի՛ ոչ մի դեպքում։ Հենց այս պատճառով էլ այդ բառերը ձեռք են բերում իմաստային նրբություններ, նոր և թարմ ձևերի մեջ. խոսքն ստանում է առանձին նրբերանգներ, հուզարտահայտչական գունավորումներ։ Համեմատի՛ր նաև հետևյալը Երդ Երգոցի հետ. «Ընդ Սողոմոնի օծելոյ որգեղրեցելոյ Աստուծոյ երգեմ բերանով հարսին երկնաւոր փեսայիդ բարեբան գոհաբանութիւն, համբուրեալ ի յիղձս մտաց զհոտ իւղոց քոց քան զամենայն խունկս... զհետ քո ի հետ իւղոց քոց ընթացուք. լուացեալ զերեսս ջուրրք կենաց, որ ի վեր է քան զերկին ողոյս այսորիկ և օծեալ զզլուխ անախտական իւղովդ երկնայնով (ՂԳ 11)։ «Զի բարի են ստինք քո քան զգինի, և հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս։ Եւ անոյշ հեղեալ է անուն քո. վասն այսորիկ օրիորդք սիրեցին զքեզ. և ձգեցին զքեզ. զհետ հոտոյ իւղոց քոց ընթացուք մեք» (Երգ Ա 1—3)։ «Օծ զզլուխ քո և լուա զերեսս քոս» (Մատթ. Զ 17),

Այսպիսով համարձակորեն նարեկացին աստվածաշնչական մեկնական, բացատրական երկրորդական նախադասություններ ընդարձակված և ցրված նախադասությունները, որոնք ակնհայտորեն անմշակվածության և ժողովրդական դեռ չկազմակերպված, չամբողջացած խոսքի բնույթ են կրում, ձուլում է մի ամբողջության մեջ. մի բառով կամ մի համարձակ արտահայտությամբ։ Երբեմն փոխում է ոչ միայն աստվաշնչական խոսքի ձևը, բառերը, նրանց կազմությունը, շարահյուսական կառուցվածքը, այլև փոխաբերական պատկերի իմաստը, նոր նշանակություն տալով նրան։ Օրինակ՝ «զի՞ սրբէք զարտաքին զրաժակին և զսկաւառակին, և ի ներքոյ լի են յափշտակութեամբ և անխառնութեամբ». ամբողջ բարդ համադասական նախադասությունը արտահայտել է մի կապակցությամբ. «զարտաքնայարդար բաժակս անմաքուրս». ինչո՞վ են տարբերվում սրանք. Նարեկացին խոսքի սեղմությունը հասցրել է վերջին կատարելության. Աստվածաշնչի անորոշ ու խառը վերացական պատկերը թանձրացական է դարձրել։ Աստվածաշնչական պատկերի սկզբի մասում փոխաբերական նմանությունը ճշմարիտ է. այս-

...ոքն՝ փարիսեցիները և դպիրները իրենց բառաքինը մաքրում են, հակառակը պետք է ...ներ, իսկ ներքուստ լիքն են կեղտոտությամբ։ Բայց նախադասության երկրորդ մասում վերանում է փոխարերական նմանությունը և թուլանում է հակադրությունը, քանի որ այդ մասում արդեն բաժակը չէ, որ ...անդես է գալիս, այլ մարդը. որովհետև ...աժակի մեջ չի կարող լինել «լափշտակությունն և անխառնութիւն»։ Այսպիսով ստացվում է շլացված համեմատություն և տրամաբանորեն սխալ հակադրություն, մանավանդ որ անխառնութիւն բառն էլ այն իմաստը չունի հայերեն, որով այստեղ գործ է ածվել, և նույնիսկ չի հիշեցնում դուլզն շափով, ...բացասական նշանակություն, այլ ...ենդհակառակն ավելի դրական շանակություն ունի (մաքրություն, զտություն)։ այդ բառը ...աղմված է հունարեն ἀκρασία բառի ճիշտ ...նական թարգմանությունը տալու համար, որը նշանակում է անժուժկալություն, անզգաստություն, անչափավորություն, որտեղ ա ...ֆիտական ան մասնիկն է, իսկ κρασία ...նշանակում է խառնուրդ, խառնելը։ Եվ այդ ...ամրոդչ անորոշության դիմաց ունենք սեղմ, փոխարերական նմանության տեսակետից ...ճիշտ, իսկ հակադրությունը տրամաբանորեն ...պատճառաբանված կապակցություն, որտեղ ...հանաստեղծը ստեղծել է նաև հայերենի համար միանգամայն նոր բառ իսկական բարդությամբ (արտաբնայարդար)։

Նարեկացին, օգտագործելով աստվածաշնչական լեզվական նյութը, այնպես չի վերարտադրում մեծ մասամբ, որպեսզի մենք ...ան առնենք շակերտների մեջ, կամ բացատրելի դեպքերում նա դարձնում է անուղղակի խոսքեր այս կամ այն շաղկապներով, կամ փոխում է այս կամ այն ձևով նոր բառեր ավելացնելով և հները դուրս գցելով։ Օրինակ՝ «Զիա՞րդ իբր ոչ կռապաշտեալ անապատկառապէս պերճացայց ունայն պանծանօք ասել ընդ Դաւթի՝ «մինչ մոռացեալ իցէ մեր զանուն Աստուծոյ, կամ ոգեալ զձեռս ի մատեանս օտար աստուածոց»։ Ընդգծված նախադասությունները բերված են Սաղմոսի ԽԳ գլխից, որտեղ գրված է այսպես. «եթէ մոռացա՞լ իցէ մեր զանուն Աստուծոյ մերոյ, կամ ոգեա՞լ իցէ զձեռս մեր յաստուածս օտարս»։ Կամ՝ «իբր յիմարս յարս և վատթարս ասել ժարհիմ՝ թէ բերան իմ պատմեսցէ զիմաստութիւն, և սիրտս զհանճար՝ (Նարեկ Կ). իսկ Սաղմոսի մեջ. «բերան իմ խոսեսցի զիմաստութիւն և խորհուրդ սրտի իմոյ զհանճար (ԽԸ 4)։ Առած նյութը լեզվական մշակման է ենթարկված։ Միջանկյալ հիշենք, որ այդ անհամապատասխանությունները կարող են մասամբ առաջացած լինել նաև նրանից, որ Նարեկացու ձեռքի տակ գուցե եղել է Աստվածաշնչի հին թարգմանությունը, կամ հունարենը, քանի որ ժողովրդի՝ «ողորմութեան գարձուցանէ զմեզս մեծամեծս», Նարեկացու մոտ գտնում ենք՝ «բժշկութիւն դադարեցուցանէ զմեզս մեծամեծս», որ համապատասխան է եբրայական բնագրին և հունարեն թարգմանությանը (Ժողովող ժ 4, Նարեկ ԻԷ 4)։ Նարեկացու վրա Աստվածաշնչի ազդեցությունը ամենուրեք երևում է, բայց թե՛ պատկերավորման և թե՛ լեզվական կառուցվածքի ու մշակման կողմից Նարեկացին իր ինքնուրույնությունը պահում է։ Ինչպես ասվեց, հաճախակի անդրադարձումը դեպի Աստվածաշունչը Նարեկացու թե՛ լեզվական ու թե՛ գեղարվեստական խոսքի հիմնական թերություններից մեկն է. այդ հաճախակի անդրադարձումը գեղարվեստական երկը օժտում է ակնարկներով, ծածկում է առասպելա-միթական շղարշով։ Ահա՝ մի օրինակ աստվածաշնչական առասպելաբանությունից, որ վերաբերում է ողջ Մերձավոր Արևելքի անցյալին, նրա մշակույթի պատմությանը. «Քանզի որ ի մեզս դարշութեան խոնարհեսցի, առաջի կայ նորին կառուցեալ առեալ ի պաշտոն յօսնականացն (տպագիր յանականացն) ախտարծարծիցն պոռնկապատիր պատկերացն կերպարան Աստարտայ և Քամոսայ և Մեղքովմայ արուարձանի և Թարահատայ թարմատարի, ընդ զաղրոտեացն կանացեաց իշանդամիցն պատկառանք, անվերարկու ծանակութիւնք» (Նարեկ Կ)։ Համեմատի՛ր. «Եւ գնաց Սողոմոն զհետ Աստարտայ դարշելոյ Սիդոնացւոց և զհետ Մեղքոմայ դարշելոյ որդւոցն Ամոնայ» (Գ Թագ. ԺԱ 5—7)։ Կամ թե այնպիսի նմանություններ, ինչպես՝ «Պատժակիցս կործանեցելոյն Սոդոմայ, ըմբերանեալ դատախազս Նինուէի, անարի բարբարոս քան զտիկինն հարաւային, վատթարագոյնս քան զՔանան, յամառեցեալս քան զԱմաղեկ, անբժշկական քաղաք դրօշելոց, նշմար մնացեալ ապստամբութեան հինն Իսրայէլի, յիշատակարան պահեալ ուխտազանցութեանն Յուդայ։ Կըշտամբեալք գեր քան զՇուր, տարամերժեալս քան զՇայդան, խորթաբարոյս քան զԳայիլիա, աններելիս քան զանհաւանն Կափառնայում, պարսաւեցեալս իբր զԲորազին, բամբասեցեալս ընդ Բեթսայիթայ, անպակեշտ ծաղկեցեալ ալիքս Եփրեմի» (Նարեկ Բ)։ Բոլոր նմանություններն ու համեմատությունները մեզ համար մնում են անհասկանալի և իջեցնում են երկի գեղարվեստական արժեքը։ Նույնիսկ եթե Աստվածաշնչի համապատասխան գլուխներն էլ կարդանք, դարձեալ դրանք մեզ համար մնալու են անհասկանալի, մինչև որ մեր ձեռքի տակ չունե-

նանք մասնագիտական աստվածաշնչական բառարաններ՝ հատուկ անունների ու միթոլոգիայի։

Ինչպես այլ առիթով ասել ենք, Նարեկացու վրա ազդեցություն են թողել նաև գրական այլ երկեր. մենք նկատի ունենք միայն լեզվական ազդեցությունը, այն է՝ որոշ պատկերների փոխառություններ, արտահայտությունների օգտագործում, շարահյուսական ձևերի ընտրություն և այլն։ Համեմատի՛ր, իբրև օրինակ, հետևյալ պատկերը Ագաթանգեղոսի նույնանման մի պատկերի հետ. «Եւ ընդ լալով սերմանել բանիս ի նախընթաց լուս աստիճանաց՝ օթևանացս պատրաստութեան ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոյն, դարձայց բերկրեցեալ լրութեամբ քաւութեան պտղոյն երանութեան որայիցն՝ բարութեան» (Նարեկ Ի). այս հատվածը համեմատել ենք Սաղմոսի ՃԻԵ գլխի նման մի արտահայտության հետ, բայց սա ավելի նման է Ագաթանգեղոսի «Այլ յորժամ որայն ի հունձս եկեալ մատուցէ զատորութեանն բերրի զպտուղ սերմանողացն՝ ընդ նմին և ղցնծութիւն բերկրութեան ուրախութեանց ամենայնի բերէ» (Ագաթ. 104) հատվածին, թե՛ ըստ բովանդակության, թե՛ շարույթների ընտրության ու կառուցման. հնարավոր է նաև, որ Ագաթանգեղոսը օգտագործած լինի Սաղմոսի պատկերը։ Ամենից ավելի ուժեղ է որոշ հատվածներում խորենացու «Ողբ»-ի առկայությունը, որի մասին խոսել ենք։ Հիշենք այստեղ նաև Եղիշեին, որի «Տիկնայք փափկասունք» հատվածի շարահյուսական ձևերը իրենց համադասական կապակցություններով, և շաղկապի յուրահատուկ գործածությամբ ու արտահայտչական զարգացած ձևերով այն հիմնական ատաղձն են, որի դասական օրինակով Նարեկացին ստեղծեց շարահյուսական ձևերի բազմազանություն։ Ահա մի օրինակ Եղիշեից. «Ոչ ոք ումեք ջուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտսերք աւագաց դաստառակս մատուցանէին։ Զեղան առաջի սուրբ սկտեղք, և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն». կամ՝ «կործանեցան բարձրագահք տաճարք նոցա. և խանգարեցան սպասք երախանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա և տապալեալ աւերեցան ամուրք ապաստանի նոցա...»։ Համեմատի՛ր. «Շաւիղն յուսոյն կուրացաւ, շնորհին ծածկոյթ յինէն մերկացաւ, փառացն վայելչութիւն սուսերացաւ. բոց զեհենին ինձ բորբոքեցաւ...» (Նարեկ ԻԴ)։

Բանաստեղծության կողմից հաճախ հիշատակվել է Եփրեմ Ասորու «Գիրք աղօթից» երկի ազդեցությունը Նարեկացու վրա, որ երբեմն էլ Նարեկացու «Ողբերգութեան» հետ հրատարակվել է։ Ահա՝ Եփրեմից մի հատված. «Ինձ լքելոյս ողորմեա, ինձ եղծելոյս օգնեա, ինձ խաւարելոյս ճառագայթեա, ինձ մոլորելոյս առաջնորդեա, որ լի եմ մեղօք անթիւ յանցանօք. և ի յորձանս անօրէնութեան տարուբերեալ ծփիմ։ Մի՛ դատեր և մի դատապարտեր զիս, Տէր, ըստ անբաւ զազիր գործոց իմոց. և մի՛ կացուցես զիս ընդ այլսն, որք զայրացուցին զքեզ։ Այլ ընդ փառաւորեալսն փառաւորեա և ընդ պսակելոցն պսակեա և ընդ բերկրելոցն ուրախացո։ Փրկեա զիս, Տէր, ի գաղտնածիգ նետից սատանայի, որ բոլոր մեքենայիւք պատեալ պաշարէ զիս։ Աւար առեալ զմիտս իմ վարէ ի գերութիւն՝ ցանկութեան մեղաց առնելով ծաղր և այպն կատականաց թշնամեացս» (տե՛ս Գյուտ եպիսկոպոս, «Արևելյան Անապատականը և Նարեկը», Երուսաղէմ, 1937 թ., էջ 134—135)։

Այժմ անցնենք Նարեկացու բանաստեղծական խոսքի միջոցների քննության։ Ամենից առաջ պետք է նշել, որ Նարեկացու լեզվի հիմնական շրջադարձություններից մեկը հակադրությունն է կամ անտիթեզը։ Բանաստեղծը ստեղծում է սովորական երևույթների հակադրություններ, որպեսզի զգացումներն ու մտքերը ավելի ցայտուն և բացահայտ դրսևորվեն. ամբողջ «Մատեան ողբերգութեան»-ը հիմնված է Աստուծո և մարդու հակադրության սկզբունքի վրա. մի կողմը կանգնած է Աստված իր բարիքներով և փառքով, իսկ մի կողմում մարդը՝ մեղքերով ու չարիքներով՝ դատապարտվելու արժանի հավիտենական անարգանքին։ Ահա այս երկու հակադիր կերպարների հիման վրա, Նարեկացին ստեղծում է լեզվական հակադրությունները։ Նարեկացին ամեն կերպ աշխատում է ազդել զգացումների վրա և գերել ընթերցողներին։ Իսկ զգացումները ավելի ցայտուն են դրսևորվում երևույթների հակադրությամբ. որքան հակադիր առարկաների մեջ հակադրությունը ուժեղ է, այնքան այդ առարկաները մեծ տպավորություն են գործում մեր մտքերի և զգացումների վրա։ Նարեկացու ոճի հակադրությունները պայմանավորված են հեղինակի ներքին հակադիր տրամադրություններով ու ապրումներով։ Ժամանակի իրականությունը բանաստեղծի հոգու մեջ ներկայանում էր բեկումներով։ Հասարակական կյանքից դժգոհ, հավատի մեջ խորացած բանաստեղծը կասկածում էր ապագա թողության հույսի նկատմամբ. ճգնավորական խստակեցության զուգընթաց՝ նրա մեջ խոսում է բնական մարդը իր բարդ ապրումներով, կրքերով ու ցանկություններով։ Ինչքան էլ նա ուզում է մտքով ու հոգով առաքինի մնալ, սակայն իրական բնախոսական մարդը միշտ գլուխ է բարձրացնում։

ամեն անգամ հիշեցնում նրան իր ներկայությունը, որի դեմ հաճախ բանաստեղծը բողոքում է, բայց որի ճիրաններից չի ազատվում։ Այս հոգեբանական հակասությունը պատճառ էր դառնում հեղինակի կասածը իրականության նկատմամբ։ Նա խոստապես զգում էր աշխատավոր մարդու հորատական տառապանքը, բայց ելք չէր գտնում։ Աշխարհակական չարիքները, զժգոհությունը անդհանուր կյանքից, անարդարությունները, նրան դարձրել էին մի մեծ տառապող հոգի՝ լի խոր հակասությամբ, մենակ ու անօգնական։ Այն հանկարծակի դիմումները Աստուծուն, ներումն հայցելը Նրանից, առաջացել են նրա Աստուծո ստեղծած կյանքի նկատմամբ ունեցած զժգոհությունից։ Զժգոհությունն ու կասկածը նրա գործած մեղքերի հանցանքներն են. եթե նա մի օր չի հաշտացել Աստուծո և նրա օրենքների դեմ, ապա ինչի՞ են պետք այդ հոգեմբմունջ աղոթքներն ու պաղատանքները։ Աստվածաշնչական պատումների հանցավոր մարդկանց փոխարերական պատկերավորումները ոչոկ միջոցներ են, որպեսզի նա իր մտքերն արտահայտի։ Այնպիսի մի հանճարեղ մարդ, ինչպիսին Գրիգոր Նարեկացին էր, որ ամբողջ Աստվածաշունչը գրեթե անգիր գիտեր, չէր կարող չնկատել նրա միամիտ հեքիաթները, նրա իրար տրամաբանորեն հակասող առասպելների ընդհանուր էությունը։ Բայց նա այդ դարաշրջանում չկարողացավ լրիվ կողմնորոշվել, չկարողացավ կասկածները զարգացնել ու հասցնել հասարակարգի բացասման. ընդհակառակը, նա զոյաց իր հանցանքների համար, դատապարտեց իր մտավոր թռիչքները և սկսեց ներում հայցել։ Նրան պակասում էր գիտությունը իր իսկական առումով։ Նա անշուշտ ծանոթ կարող էր լինել հունական մի շարք փիլիսոփաների՝ տիեզերքի և նրա մի շարք երևույթների մասին եղած ճշմարիտ բացատրություններին, բայց դրանք միայն կարող էին նրա մեջ կասկած առաջացնել և ոչ հիմնական տեսակետ ստեղծել քրիստոնեական կրոնի ժխտման համար։ Բանականության ուժը այնքան զորեղ չէր, որ կարողանար պատրանաթափ անել նրան։

Մինչև այժմ Նարեկացու բոլոր ուսումնասիրողները պաշտամունքի բարձր աստիճանին հասած նրա ժողովրդականությունը բացատրել են նրա սրբանվեր ճգնավորի, մաքուր վանականի, բարեպաշտ քրիստոնյայի աստվածային վարքի պատճառով։ Նարեկացու պաշտամունքն ու նրա ժողովրդականությունը հիմնականում կապված են նրա բանաստեղծական խոսքի մեծ վարպետ լինելու հետ։ Նա իր ժամանակ ժողովրդականություն է վայելել, քանի որ եղել է տաղանդավոր քնարերգակ բանաստեղծ, և ո՞վ կարող է ասել, որ նրա բանաստեղծությունները ժամանակին բերնե-բերան չէին արտասանվել առանց գրի առնվելու, կամ եթե գրի են առնվել, հետագայում չեն ոչնչացվել «անպատշաճ» լինելու պատճառով. ո՞վ կարող է ասել, որ այսօրվա մեր շատ տաղերի, որոնց հեղինակները վիճելի են մինչև այժմ էլ, մի մասը որոշ փոփոխություններով Նարեկացունը չեն եղել։

Նարեկացին, իբրև մարդ, իր բարդ փոփոխական ապրումներով, մտածողության հակասականությամբ կապված է իր դարաշրջանի հետ ու դեռ առեղծված է մեզ համար։ Նրա հակասականությունը, հոգու բեկումները, տառապանքները ամենից լավ արտահայտվել են լեզվի ու ոճի մեջ։ Այստեղ մենք գտնում ենք իրոք ապստամբող մարդու հակասական տրամադրությունները, բարդ ապրումները՝ զարմանալիորեն բարդ ձևերի մեջ։ Իրականության հակասությունները արտահայտվում են խոսքի հակադիր ձևերով, որոնք հասցված են արտահայտչական կատարելության. օրինակ՝ «Եւ ի մերկութեանս գրկի՝ փուշս ընդ շուշանաց ժողովեցիս» (4)։ Հոգեբանական բարդ ապրումները արտահայտված են իրական առարկաների հակադրությամբ։ Շուշանի և փշի հակադրությունը ցնցող է լրիվությամբ և բացարձակ կատարելությամբ, քանի որ այս դեպքում իրար հետ հակադրվում են բազմաթիվ հատկանիշներ։ Շատ անգամ բանաստեղծները խավարը հակադրում են լույսին. Նարեկացու մոտ նույնպես բազմիցս կրկնվում է այդ հակադրությունը, բայց չնայած լույսի ու խավարի հակադրականության, չի ստացվում այն, ինչ որ մեր բերած հակադրության մեջ կա։ Այստեղ առաջանում են բազմաթիվ զգացումներ. քնքշությունը, նրբությունը՝ կոշտ ու կոպտության դեմ. անսահման հաճույքն ու բուրմունքը՝ ծակող ցավի դեմ, սպիտակ, աչքերը պայծառացնող գույնը անգունության դեմ, բարությունը չարության դեմ և այլն և այլն։ Եվ այս ամբողջը կապվում է մարդու զանազան զգացումների, մտքի, բազմազան տպավորությունների հետ։ Այստեղ արդեն բավականաչափ ուժեղ կլինեն հակադրությունը մերկ գրկի ու հավաքված փշի միջև, բայց և շուշանի հակադրությունը մտքերի ու զգացումների անսահման հեռանկարներ է բացանում։ Նարեկացու գրքի բոլոր գլուխների կառուցվածքը հիմնված է հակադրության վրա։ Սկզբում տրվում են Աստուծո բարեմասնությունները, ապա դրան հակադրվում են հեղինակի սեփական մեղքերն ու հանցանքները, և հետո, այլ հակադրական շաղկապով նորից հիշելով Աստուծո առավելու-

թյունները, նա օգնություն է հայցում. «Այսմ զօրեաս առ ելիցն հնար. նայեա ի բնութեանս ամենապատառ խակութիւն և պարգևեա բժշկութիւն վիրացս։ Մեջընդմեջ առաջ բերելով փոփոխակի հակադրություններ, երրորդ մասում արդ ընդհանրացնող շաղկապով եզրափակվում են նախորդ երկու հակադիր հատվածները. եթե այդպես է, ուրեմն դու պետք է որ դթաս և պետք է ընդունես իմ խոստովանությունները։ «Արդ՝ տես ի քոյդ մեծութիւն, նայեցեալ ի յիմս փոքրութիւն, ընկալ զսակաւ խոստովանութիւնս անհամար մեղացս։ Մեծ մասամբ նկատելի է եռամասնյա կառուցվածք. սկզբում հաճախ տրվում է հիմնական թեման, այն է՝ խոսակցի արժանիքները. երկրորդ մասում այդ հատկությունները նա զարգացնում է շեշտակի հակադրություններով, իսկ երրորդ մասում տարբեր ձևերով կրկնում է առաջինը՝ ստեղծելով օղակային կառուցվածք։

Բերած հատվածը կազմված է խոսքի երկու ամբողջական եզրերից, որոնք որպես և այսպես մակբայներով նմանեցվում են, հավասարեցվում իրար, բայց խոսքի յուրաքանչյուր եզրում գտնվում են իրար հակադիր երևույթներ, որով ստացվում է իրենց մեջ իրար հակադիր տարբեր մասերի մի բարդ ամբողջություն։ Զնական հակադրություն գոյություն չունի. կա միայն իմաստային հակադրություն կամ բնական հակադրություն, որովհետև միշտ մտքով մենք լույսը հակադրում ենք խավարին, ցավը՝ առողջությանը և այլն։

Իսկական հակադրությունը այն է, երբ խոսքի տարբեր եզրերն են իրար հակադրվում, որպեսզի նկարագրվող երևույթները առավել ցայտուն հանդես գան իրենց բոլոր կողմերով, նրբություններով, մանավանդ, երբ դա կազմվում է որևէ հակադրական բառով։ Օրինակ՝ «Մի ընդհարկանիր խստութեամբ մեծդ ընդ փոքուս, լոյսդ՝ ընդ սորնականիս, բնութեամբ բարիդ՝ ընդ ի բնէ չարիս, ողկոյզդ օրհնութեան՝ ընդ պտղոյս անիծից, քաղբրութիւնդ իսկապէս՝ ընդ համայն դառնութեանս, փառատրեալդ անփոփոխ՝ ընդ ամենեին անարգիս, կենացդ նշխար՝ ընդ կաւոյս զանգուածոյ, Տէր տէրանց՝ ընդ տղմիս երկրայնոյ, աննուազ լիութիւնդ՝ ընդ չքաւոր ստրկիս, անկապուտ ճոխութիւնդ՝ ընդ անպատսպար տառապելոյս, անկարօտ բարութիւնդ՝ ընդ ամենաթշուառ աղքատիս» (ԺԷ)։ Այստեղ հակադրությունը առավել արդյունավետ է շնորհիվ խոսքի համաչափ կառուցվածքի. բովանդակությամբ բոլորովին հակադիր արդյունքները հանդես են գալիս միևնույն ձևով, նախադասության անդամների համաչափ դասավորությամբ։

Համաչափ մասերի հակադրության լավագույն օրինակ կարող է ծառայել նաև հետևյալ կտորը. «Եւ ահա խառնեալ զանմաքուս բան ընդ նախագրեալ երջանկացն փառատրական աղերսարկութիւն, որ վասն իմ դոչեն քեզ հաճութիւն, և ես ընդ նոսին իբր դառնութիւն եղեալ ընդ քաղցու. կամ տատասկ ընդ ողորկութեան, տգեղութիւն ընդ վայելչութեան, և տիղմ ընդ գեղեցկութեան մարգարտի, կամ հող ընդ յատակութեան ոսկւոյ, և կամ քարինս անարգս ընդ պայծառութեան արծաթոյ, բացասութիւն ընդ ճշմարտութեան, կամ աւազ ինչ ատամնառու ընդ կակղութեան դանգուածոյ հացի» (ՁԲ)։

Հակադրության ամենամաքուր ձևը հակադիր կրկնությունն է, որն ուղեկցվում է համաչափությամբ. երկու հակադիր նախադասությունները միմյանց հաստատում են. «Թագաւոր արդար կանգնէ զաշխարհ, և այր անօրէն կործանէ»։ Այսպիսի եռադարձ կրկնությամբ հարուստ են Սողոմոնի առակները. «Իմաստուն թուի անձին իւրում այր մեծատուն, և աղքատն հանճարեղ ստգտանէ զնա։ Այր անզգամ փորէ զհակառակութիւն, և այր հեզ դադարեցոյց զմեզսս»։

Հակադրության այս ձևը ավելի թույլ է, որովհետև կրում է առածային խոսքի բնույթ և զուրկ է ներքին հայցից ու թափից. հակադրությունը հանկարծակիություն և անսպասելիություն չի առաջացնում, քանի որ, երբ ասվում է՝ «Լաւ է աղքատ, որ գնայ ճշմարտութեամբ», հաջորդ նախադասությունը արդեն մտքում կազմվում է, այլևս նրա կարիքը չի զգացվում։ Նարեկացու քնարական զեղումներով առլցուն ոճին այդպիսի սառը առածային հակադրությունները, որոնք ունեն չոր, մակագրական բնույթ, չէին կարող հարմարվել։ Նարեկացին փնտրում է խոսքի սուր հակադրություններ, որոնք անսպասելի և հանկարծակի լինեն. որովհետև զգացումների հակասականությունը հնարավոր է միայն խոսքի այլ տիպի հակադրությամբ արտահայտել, այսինքն հակադրությունը ստեղծվում է ոչ թե տարբեր առարկաների ու երևույթների միջև, այլ հակադրության միևնույն անձի տարբեր վիճակների միջև և այդ ամբողջը համարյա միաժամանակ է հանդես գալիս։ Ստեղծվում է մի տեսակ օքսյումորոն, որտեղ հակադիր հատկանիշները հայտնվում են միևնույն անձի կամ երևույթի միջև։ «Որ մինչդեռ արթունս եմ, նիրհեմ. մինչդեռ գգաստ երևիմ, թմբրիմ. ի խաղաղանալս իմում, ամբոխիմ. մինչդեռ արշաւեմս, առ ի յետոյսն հակամիտեմ, ծաղկիմ, և ոչ պտղաբերիմ. ասեմ, և ոչ առնեմ, մտանեմ ի բոյնն աղաւնի, և անտուստ ագռաւ ելանեմ. գամ սակաւ մի սպիտակ, և. սրանամ դառնամ

նային սնացեալ. ի յոտս հաստատիմ, և ի գիտս տատանիմ. դասիմ ի պարս հեզոց, և ընդ այսս կաքաւեմ։ Այսօր մաքուր հոգեկիր, և վազիւն մոլի խելագար. ի յելս արեւուն հաստատ երեիմ, և ընդ երեկս ունայն դեգերիմ...» (ՀԱ)։

Ահա բանաստեղծի ապրած իրական կյանքի հակասությունը լեզվական ինչ ձևերով է արտահայտվում. բավական է միայն հենց այս կտորը, որպեսզի ապացուցվի մեր ասածը, թե միջնադարի մեր բանաստեղծը կասկածում էր այն բոլորի համար, որին նա իր կյանքն էր զոհում բոլորանվեր։ Նրա բարդ ապրումներն ու հոգեկան հակասությունները, որոնք առաջանում էին նրա ապրած դասաշրջանի հասարակական հարաբերությունների հետևանքով, և որ ամենից խոր անդրադառնում էին նրա անհատական հոգում, առաջ էին բերում ոճի այն բազմազանությունը, որ մենք նկատում ենք։ Ամեն քայլափոխում նա փնտռում է ոճական արտահայտչական նոր միջոցներ, որպեսզի կարողանա ցայտուն կերպով արտահայտել հոգեկան բազմապիսի ապրումները, ամեն մի ոճական հնարի մեջ նա հանդես է բերում իր անհատականությունը՝ բոլոր տարբերիչ գծերով։

Ինչպես որ նրա ոճը հարուստ է հակադրություններով, այնպես էլ հարուստ է փոխաբերություններով ու համեմատություններով։ Գեղարվեստական խոսքի այս միջոցները նարեկացին օգտագործել է ամենալայն չափերով։ Հայոց հին գրականությունը չի ունեցել գեղարվեստական երկեր, որպեսզի նրանց միջոցով մշակվեին գեղարվեստական խոսքի բազմազան ձևերը։ Նարեկացու առջևն էր միայն Աստվածաշունչը իր պարզունակ ոճական միջոցներով և մեր պատմական ու կրոնական գրականական երկերը, որոնց մեջ մշակված չէին ոճական այնպիսի արտահայտություններ ու ձևեր, որ քնարական խորությամբ դրսևորեին հոգեկան բարդ ապրումներ, որոնք անհատական լինելով հանդերձ, դառնային համամարդկային։ Այդ բարդ հոգեկան փլվածքների համար հարկավոր էր ստեղծել հատուկ ոճական միջոցներ, մշակել այդ միջոցները այնպիսի վարպետությամբ, որ նրանք իրականության երևույթները արտահայտեին իրենց բոլոր նրբություններով, թանձրությամբ և միաժամանակ լինեին հուզիչ։ Նարեկացու ապրած իրականությունը նրան դարձրել է նյարդային, տատանվող, կասկածոտ, նրա մեջ գոյություն չունի հավասարակշռված զգացում. հաճախ այդ զգացումները հասնում են դերագրգռվածության սահմաններին և երբեմն բոլորովին մաքում են. երբեմն նա ապրում է բարդ մղձավանջ, դուրս է գալիս բնական մարդու սահմաններից, տարվում է երազական տեսիլներով, մտալլկումներով և ապա հանգստանում է, ազատվում է այդ տեսլական ցնորքներից և այս բոլոր բեկբեկումները նա արտահայտում է տարբեր լեզվական ու ոճական միջոցներով։

Զարմանալին այն է, որ այս մարդը նյութի այդ ամբողջ վերացականությունը արտահայտում է իրական պատկերներով։ Հոգեկան ամենաբարդ երևույթները նա խտացնում է իրական առարկաներով. օրինակ՝ իր փոթորիկներով լի կյանքը պատկերավոր զուգահեռի միջոցով նմանեցնում է ծովին, որը լի է ծփանքներով, իսկ իր անկումը համեմատում է նավաբեկման հետ։ Բանաստեղծական այսպիսի պատկեր աննախընթաց է մեր գրականության մեջ։ Միայն Սայաթ-Նովան է օգտագործել այդպիսի մի պատկեր, «Աշխարը ծով դու մեջը նավ, ման իս գալիս լանգ իս անում»։ Պատկերավորման չափազանցության արվեստը, փոխաբերական նրբությունները իրենց արտահայտությամբ ստեղծում են տպավորությունների բազմաթիվ շարքեր. «Այն գի ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն. յորում կոհակոք բազմոք անթիւ դիմեցման տատանեալ հոգիս ի յայսմ աշխարհի մարմնոյս շինուածով իբր ի նաւակի... որ և առ իմս հոգևորական խորտակումն զուգաձայնել ոչ է սխալական։ Քանզի մինչդեռ չունէի յանհոգութեան անտարակոյս վստահութեամբ, դոյզն կասկած արկածից ի միտ բերելով՝ առ խորոց փոքր միջոցին, որ ի մէջ հանգստեանն և աշխատութեանն, իբր այն թէ հասեալ իցէ ձմեռն յամարայնի բքարեր հողմով ժամանեալ երեքալեանն դիմակցութեամբ՝ ամբոխեաց զհանդարտութիւնն։ Ուստի նաւն ի բախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ. թեոցն ձեռնարկութիւն քայքայեցաւ, կայմն ամբարձման ի կայից իրոց խլեցաւ, առագաստին թոչնարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ...»։ Շարունակության մեջ նա թվարկում է նավի բոլոր մասերի անունները ամենայն մանրամասնությամբ, որոնք անշուշտ մտքով նմանեցնում է մարդու մարմնի այս կամ այն մասի հետ. այդ անուններից մի քանիսը Նարեկացին միայն ինքն է գործածել, որոնք Նարեկացու միջոցով մտել են մեր լեզվի մեջ։

(Շարունակելի)

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԹԱՆԱՀԱՏԻ ՎԱՆՔԸ ԿԱՄ ՂԱՐԱՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Թանահատի վանքը գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանում, Վերնաշեն (Բաշքենդ) գյուղից երեք կիլոմետրաչափ դեպի արևելք, փոքրիկ ձորակի ձախ ափին, պատմական Հայաստանի Սյունյաց նահանգի Վայոց ձոր գավառում։ Վերնաշենը հնում կոչվել է Սարկողովք կամ կրճատ՝ Սրկողունք, որ ասել է, թե այստեղ խաղողն ու զանազան մրգերը սարի մեծությամբ կողովներով են հաշվել։ Դա ինքնին վկայություն է այն բանի, որ Վերնաշենում հնումն էլ խիստ զարգացած են եղել խաղողագործությունն ու պտղաբուծությունը։

Պոռշյանները ԺԳ դարում ժառանգելով Վայոց ձոր գավառի այդ մասը, Սրկողունքը դարձնում են իրենց նստավայրն ու վարչական կենտրոնը, այնտեղ կառուցում են իրենց համար իշխանական ապարանք, մեծ եկեղեցի, որով ավելի զարգանում և բարգավաճում է գյուղը, դառնալով Հայաստանի խոշոր ու նշանավոր բնակավայրերից մեկը։

Թե ե՞րբ է հիմնադրվել Թանահատի վանքը, ստույգ հայտնի չէ։ Ժ դարի պատմիչ Մովսես Կաղանկայտվացին, խոսելով Ստեփանոս Սյունեցու մասին, տեղեկացնում է, որ նա Հռոմից, ուր գնացել էր ուսումը շարունակելու, վերադառնալով Հայաստան, Սյունյաց Բարգեն և Քուրդո իշխանների խնդրանքով ձեռնադրվում է եպիսկոպոս և միտրոպոլիտ Սյունյաց և մի տարի անց սպանվում է Մոզ ավանում, որից հետո նրա մարմինը բերում նախ ամփոփում են Արկայաղ գյուղի սենյակում, ապա տանում և թաղում են Թանահատի վանքում. «Եւ ի Բարգենէ և ի Քուրդոյէ խնդրոյ լինի ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց։ Եւ մի ամ կալեալ զեպիսկոպոսութիւնն սպանեալ լինի ի Մոզն գաւառի։ Ասեն, թէ ի պիղծ կանանց եղև մահ նորա. զորոյ զմարմինն առեալ բերին ի յԱրկազեան սենեակն և անտի փոխեցին ի Թանատայ վանս ի հանգիստ»[1]։

Այդ նույն Ստեփանոս Սյունեցու մասին, կապված Թանահատի վանքին, ավելի հանգամանորեն է պատմում ԺԳ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը։ Օրբելյանի վկայությամբ Ստեփանոս Սյունեցին Դվին մայրաքաղաքից էր, քաղաքի ավագ երեցի որդին։ Մանկությունից Ստեփանոս Սյունեցին մեծ ձգտում է ունենում ուսման, ուստի որոշ ժամանակ Մաքինյաց վանքում ուսանելուց հետո, գնում է Կոստանդնուպոլիս ուսումը շարունակելու։ Վերադառնալով հայրենիք, ձեռնադրվում է Սյունյաց եպիսկոպոս և մի տարի եպիսկոպոսություն անելուց հետո, մեռնում է եղերական մահով, սպանվելով մի կնոջից Մոզ ավանում։ Հետո, խոսելով նրա թաղման հանգամանքների մասին, Օրբելյանն ավելացնում է. «Ապա յառաւօտուն իմացեալ պաշտօնէիցն՝ բաղում ողբով բարձին զնշխարս սրբոյն, տանէին ի սուրբ մենարանն ի լեառնն կոչեցեալ Սիօն, որ պայ-

[1] Մովսեսի Կաղանկայտուացւոյ «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860 թ., էջ 256։

...հառանայր հգնաւոր ապամբք յայնմ ժամանակի քան զՍինեայն և զՍկիւթայն յԵգիպտոս։ Զոր լուեալ Արկաղան գեօղն՝ տէրամբն իւրեանց ելին ընդ յառաջ, և հաւանեցուցին զսպասաւորսն հանգուցանել ի սենեակն որ զանուն սրբոյն Քրիստափորի՝ անյաղթ զօրավարին շինեալ էր. զոր տարեալ անդէն հանգուցին ի սենեկինս։

Ապա, պատմելով Ստեփանոս Սյունեցու մահից անմիջապես հետո տեղի ունեցած մեծ Երկրաշարժի մասին, Ստեփանոսի թաղման առթիվ Օրբելյանը շարունակում է. «Իսկ յետ 40 աւուր պատուհասին դադարեցաւ բարկութիւնն Աստուծոյ ի վերուստ, և ժողովեալ մնացորդք դաւառին կոչեցին զկաթողիկոսն, և առնեն ժողով վանականաց, և բաղում աւուրս ցայգապաշտօն կատարեալ փոխեցին զղնշխարս սրբոյն ի միարանակեաց վանսն Թանահատի վանից...։ Եւ շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի, զոր յետոյ յ728 թուականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբեթայարկ զեղեցիկ յօրինուածովք, և եդին զտապան սրբոյն ի հիմն նորա։ Եւ էր կատարումն Սրբոյն Ստեփանոսի ի թուականութեանն Հայոց 184, ի հրոտից ի 15 և յուլիսի 21»[2]։

Ստեփանոս Օրբելյանի վերը մեջբերված տեղեկությունից, որի համաձայն Ստեփանոս Սյունեցու մահը տեղի է ունենում 735 թվականին, միաժամանակ պարզվում է, որ նրա դին երկար չի պահվում Արկազ գյուղի Քրիստափոր զորավարի անվան կառուցած սենյակում։ Ստորերկրյա ցնցումները, որոնք շարունակվում են շուրջ 40 օր, դադարելուց հետո և, մի քանի օր էլ ցայգապաշտոն կատարելուց հետո, Ստեփանոսի տապանը Արկազից տանում և ամփոփում են Թանահատի վանքում, կառուցելով նրա գերեզմանի վրա հատուկ մատուռ։ Դրանից էլ որոշակի պարզ է դառնում, որ Թանահատի վանքը 735 թվականին արդեն գոյություն ուներ։

Առանձնապես հետաքրքրական են մենաստանը Թանահատ անունով կոչելու և նրա հիմնադրման ճիշտ ժամանակի, ինչպես և նրա հոչակավոր լինելու մասին նույն Օրբելյանի հաղորդած տեղեկությունները, որոնք անհրաժեշտ ենք գտնում մեջ բերել ամբողջությամբ. «Յայնմ ժամանակի պայծառագոյնայր սուրբ և երկնահրաշ գերափառ և հռչակեալ ուխտն Թանահատի վանից, որ կայ ի վերոյ Սիւնեաց յատորոտ լերինն ի բարձրավանդակի միոջ ի մէջ անտառին։ Եւ էին սահմանաւորք, մշտապաշտօնք հեռացեալք յամենայն փափուկ կերակրոց, միայն աշտուհ հացի և լոկ ջրով վճարէին զպէտս իւրեանց, և զայն յաւուրն մի անգամ ընդ երեկս. լոիկք, հնգաշարժ, որք իբր կանթեղունս անշէջս կախեալք լինէին յաղօթս զցայդ և զցերեկ. և պաշտօն իւրեանց երբէք ոչ խափանէին զցայդ և զցերեկ։ Եւ բաց ի սպասաւորացն ընդ դրունս վանիցն ոչ ոք ելանէր արտաքս. և թէպէտ բաղում անգամ հարկեցան իշխանացն և յեպիսկոպոսաց Սիւնեաց՝ ոչ առին յանձն ի կիւրակէքն ի թան կամ ի պանիր կամ յիւղ խթիլ, այլ բանջարօք և ընդով շատանային. վասն որոյ Թանահատք կոչեցան։ Եւ ի գլխաւոր տօնսն ի ձիթոյ ճաշակէին և ոսկաւ բաժակօք. և դայս ծանոյց մեզ պատմութիւնն երանելւոյն Մաշտոցի որ ի Սեան։ Բայց դատաք յիւրոց արձանագրութեանցն եթէ 400 ամաւ յառաջ շինեցաւ եկեղեցին քան զՀայ թուականն, յիշխանացն Սիւնեաց յանուն Սրբոյ նախավկային Ստեփաննոսի։ Եւ էր եղեալ հայր վանիցն որոյ անուն Մխիթար...»[3]։

Թանահատի վանք.— Ընդհանուր տեսքը արևմուտքից։

Ինչպես տեսնում ենք, ըստ Օրբելյանի Թանահատի վանքը պետք է հիմնադրված լինի

---

2 «Պատմութիւն նահանգին Սիսականայ, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910 թ., գլ. ԼԱ, էջ 131—144։

3 Նույն տեղում, էջ 160։

151 թվականին, որովհետև հեթանոսության շրջանում, ինչպես հայտնի է, հայերը իրենց սեփական, ազգային թվականությունը սահմանեցին 551 թվականին Դվինի եկեղեցական համաժողովում։

Բացի այն, որ Օրբելյանը Թանահատի վանքը դասում է Հայաստանի նշանավոր ու հռչակաւոր մենաստանների շարքը, ինչպես այդ մասին նշվեց վերևում, միաժամանակ նա Թանահատի վանքը համարում է Սյունյաց աշխարհի գլխավորագույն մենաստաններից մեկը. այդ առթիվ նա գրում է. «...Ի Վայոց ձորոյ կողմանն Խոտակերից վանք, որ Քարկոփ կոչի...։ Ապա Հերմոնի վանք. Թանատէի վանք յորում կա նշխարք Սրբոյն Ստեփաննոսի. Գնգալի վանք։ ... Ահա այս ամենայն վանեար յականէ և յանուանէ ի գլխաւորագունիցն, յորոց բազումք ամայի և Թափուր են ի շինութեանց, և սակաւքն ի լուսաւորութեան այժմ, որք են Թուով 30. բայց այլ ևս բազումք կային զորս ոչ Թուեցաքս[4]։

Սակայն, չնայած այն բանին, որ Թանահատի վանքը եղել է Հայաստանի նշանավոր և Սյունիքի գլխավորագույն մենաստաններից մեկը, այնուամենայնիվ նրա մասին մատենագրական աղբյուրներում մինչև ԺԳ դարը, եթե նկատի չունենանք պատմիչ Մովսես Կաղանկայտվացուն, ոչ մի հիշատակություն չկա։ Ստեփանոս Օրբելյանի այն նշումը, թե «այս ամենայն վանեար յականէ և յանուանէ ի գլխաւորագունիցն, յորոց բազումք ամայի և Թափուրք են ի շինութեանցն», ամենայն հավանականությամբ պետք է վերաբերի նաև Թանահատի վանքին։

Թե ե՞րբ է տեղի ունեցել վանքի ավերումն ու ամայացումը, ստույգ հայտնի չէ, սակայն որոշակի պարզ է, որ վանքը վերականգնվել ու վերահաստատվել է ԺԳ դարի վերջին քառորդի սկզբներին, այսինքն Պռոշյանների տիրապետության շրջանում, երբ 1279 թվականին կառուցվում է Ս. Ստեփանոս նախավկայի անվան եկեղեցին, ինչպես այդ մասին տեղեկացնում է Ստեփանոս Օրբելյանը, որի մասին նշվեց վերևում։

Տեղում պահպանված սրբատաշ քարակիր շարվածքների մի շարք մնացորդները նույնպես հաստատում են, որ վանքը մինչև ԺԳ դարը, այսինքն մինչև Ս. Ստեփանոս նախավկայի անվան եկեղեցու կառուցումը, եղել է ավերակ վիճակում։

ԺԳ դարից հետո էլ Թանահատի վանքի մասին տեղեկությունները խպառ բացակայում են։ Թե ո՞րքան ժամանակ է նա գոյություն ունեցել և թե ինչպիսի՞ն է եղել նրա առօրյան իր գոյության ընթացքում, որոշակի պարզ չէ. հայտնի չէ նաև, թե ե՞րբ է դադարել որպես մենաստան գոյություն ունենալուց։

Վանքի վրա փորագրված արձանագրություններն էլ, որոնք բավականին մեծ թիվ են կազմում և գլխավորապես նվիրատվական բովանդակություն ունեն, ԺԴ դարից այն կողմ չեն անցնում, ուստի ի վիճակի չեն որևէ լրիվով լույս սփռելու նրա անցյալ պատմության վրա։ Չնայած այդ արձանագրություններից երկուսն ունեն ԺԶ դարին վերաբերող թվականություն, սակայն դրանք տապանագրություն լինելու պատճառով, չեն կարող երաշխիք ծառայել այն բանի, թե ԺԶ դարում վանքը եղել է կանգուն և շեն վիճակում, որովհետև թաղումներ այնտեղ կարող էին տեղի ունենալ նաև վանքի ավերակ վիճակում եղած ժամանակ։

Ավելի ուշ, ԺԹ դարի առաջին քառորդում, վանքին կից ադրբեջանական փոքրիկ գյուղ է հիմնադրվում և, շնորհիվ այն բանի, որ վանքը կառուցված է եղել սև գույնի քարերով, ուստի թե՛ վանքը և թե՛ նոր հիմնադրված գյուղը նոր բնակիչները կոչում են Ղարա վանք (Սև վանք)։

Բ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Թանահատի վանքը բաղկացած է երկու եկեղեցուց և գերեզմանատնից. կից նկատելի են այլ կառուցվածքների հետքեր։

Գլխավոր եկեղեցին մատենագրական աղբյուրներում և արձանագրությունների մեջ կոչվում է Ս. Ստեփանոս նախակվայի անունով։ Դա գմբեթավոր, միջին բարձրությամբ մի կառուցվածք է, որի հատակագիծը արտաքուստ ուղիղ քառանկյունի է, իսկ ներսից, շնորհիվ անկյուններում տեղադրված խորանների, ստացել է խաչաձև տեսք՝ ուղղանկյուն խաչթևերով։ Արևելյան խաչթևում տեղադրված է կիսակլոր աբսիդը՝ ցածրադիր բեմով։

Խաչթևերը միացնող անկյուններից ձգվում են գլանաձև բներ և դրանց համապատասխան խարիսխներ ու խոյակներ ունեցող կիսասյուներ, որոնք միանալով կամարներով, իրենց վրա են կրում գմբեթը։ Վերջինիս թմբուկը ներսից կլոր է, իսկ արտաքուստ 12 կողանի. վեղարը վերջանում է սուր ծայրով և թմբուկի վրա է նայում սուր եռանկյունաձև հավելվածներով, որոնք համընկնում են թմբուկի կողերի հետ։ Թմբուկի կողերը վերի մասերում զարդարված են զանազան կենդանիների ու թռչունների բարձրաքանդակներով։

Արևելյան կողմի խորանները, որոնք դասավորված են աբսիդի երկու կողքերին, երկ-

[4] Օրբէլեան, էջ 339—340։

հարկանի են. վերի հարկի խորանների մուտքերը բացվում են արտիդի մեջ՝ իրար դիմաց, ուր բարձրանում են հինգ աստիճան ունեցող քարե սանդուղքներով, իսկ ստորին հարկի խորանների մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ հարավային ու հյուսիսային խաչքների մեջ։ Արևմտյան կողմի խորանների մուտքերը բացվում են այդ կողմի խաչքի մեջ՝ իրար դիմաց։ Բոլոր խորաններն էլ արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքր արտիդներ։

Միակ մուտքն արևմտյան կողմից է՝ կիսակլոր մակատակալ քարով և ուղղանկյուն գծավոր շրջանակով։ Յուրաքանչյուր մակատից բացվում է մեկական երկար ու նեղ լուսամուտ՝ ուղղանկյուն գծավոր շրջանակով։ Նման չորս հատ լուսամուտներ էլ բացվում են գմբեթի թմբուկի մեջ. մեկական փոքր լուսամուտներ էլ բացվում են արևելյան կողմի խորանների արևելյան պատերից և մի փոքր կլոր լուսանցք էլ հարավ-արևմտյան անկյան խորանի հարավային պատի մեջ։

Արտաքուստ, յուրաքանչյուր պատի մեջ կան երկուական եռանկյունաձև խորշեր։ Հարավային պատի վրա քանդակված է արևի ժամացույց և Թոչունների բարձրաքանդակ՝ մայր հավիկը իր ձագերի հետ. իսկ այդ նույն պատի վրա, լուսամուտից վերև, քանդակված է Պռոշյան իշխանների տոհմանիշը՝ թևատարած արծիվը խոյը ճանկերում բռնած։

Գմբեթի թմբուկի առանձին կողերի վրա եղած բարձրաքանդակները պատկերում են առյուծն ու վագրը կռվելիս, եղան գլուխ և այլն։

Ամբողջ շենքը կառուցված է մուգ կապտագույն բազալտի սրբատաշ քարերով. կրաշաղախի միացությամբ։ Ծածկը թաղակապ է՝ երկթեք տանիքով, որը պատած է սալաքարերով։ Կանգուն վիճակում է՝ մասնակի քանդումներով, քանդված են պատերի վերի քարաշարերը քիվերի հետ միասին, հարավային և արևելյան ճակատների վերի մասերը, արևելյան կողմի վերին հարկի խորանների ծածկը, հարավ-արևմտյան անկյան խորանի տանիքը, թափված են տանիքի սալաքարերը, քայքայված է սալահատակը, քանդված է գմբեթի վեղարի տանիքի մասը, ուր երևում են վեղարի մեջ դրված գանազան մեծությամբ կարմրագույն ներկերով ներկած կավե ամաններ։

Նկարագրվող եկեղեցին արձանագրությունների մեջ կոչվում է Ս. Նշան կամ Վարագա Ս. Նշան, գտնվում է Ս. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային կողմում՝ նրան կից։ Սրա կառուցման ժամանակը որոշ չէ, սակայն պարզ կերպով նկատվում է, որ այն կառուցված է

Թանաատի վանք.— Ս. Ստեփանոս եկեղեցու հարավային ճակատը՝ արևի ժամացույցի և Պռոշյանների տոհմանիշի քանդակներով։

Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցումից՝ այսինքն 1279 թվականից հետո։

Ս. Ստեփանոս եկեղեցու վրա փորագրված 1310 թվականը ունեցող արձանագրության համաձայն (արձանագրություն Ա), ոմն Հասիկ կառուցում է ասարանոցը և նվիրում Վարագա Ս. Նշանին և Ս. Ստեփանոսին։ Դրանից որոշակի պարզ է դառնում, որ 1310 թվականին արդեն գոյություն ուներ այդ եկեղեցին։ Հետևապես Ս. Նշան եկեղեցին պետք է կառուցված լինի 1279—1310 թվականների ժամանակամիջոցում։

Ուղիղ քառանկյունի հատակագիծ ունեցող փոքրիկ կառուցվածք է։ Ծածկը եղել է թաղակապ։ Հարավային կողմից առանձին պատ չի ունեցել, ուստի ծածկի թաղը հենվել է Ս. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային պատին կից կառուցված որմասյուների ու դրանց միացնող որմակամարների վրա։ Եկեղեցու հյուսիսային պատը ներսից նույնպես ունի երկու որմասյուներ, որոնք դարձյալ միանում են որմակամարներով։ Միաժամանակ այդ երկու պատերի որմասյուները միանում են առանձին կամարներով՝ գոտկելով ծած-

կի թաղը, իսկ պատերի վրա առաջացնում են կամարակապ խոր ու մեծ խորշեր։

Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ քարով ու պարակալով։ Ճակատակալ քարը պատած է հարթաքանդակներով, ուր պատկերված է որսի տեսարան՝ ընդարձակ դաշտավայր լի զանազան վայրի կենդանիներով, թռչուններով ու գազաններով, կենտրոնում մի հեծյալ որսկան, որը նիզակը խրում է առյուծի թե վագրի բերանը։ Մուտքի շրջանակի կողերը միացնող կամարը զարդարված է շթաքարաձև (ստալակտիտ) քանդակներով։

Շարված է նույն մուգ կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախի միացությամբ։ Ավերակ վիճակում է. քանդված են արևելյան մասը, կանգուն մնացած պատերի վերի մասերը. մնում է ծածկի կենտրոնի մասը՝ մի կամարով։ Քանդված մասերը թափված են շենքի ներսը, որի պատճառով հուշարձանի ներսի էությունը պարզ չէ։

Եկեղեցիներին կից նկատելի են սրբատաշ մեծ քարերով շարված պատերի հետքեր, որոնց ինչ լինելը, առանց հատուկ պեղումների, հնարավոր չի պարզել։

Վանքի շուրջը կան մի քանի դերեզմաններ, որոնց տապանաքարերը թաղված են գետնի մեջ և մի քանի խաչքար-մահարձաններ, որոնցից ոմանք ունեն տապանագրություններ։

Փոքրիկ գերեզմանատունը գտնվում է վանքից քիչ դեպի հարավ, Արկազի Ս. Խաչ տաճող ճանապարհի եզրին, փոքրիկ բարձունքի վրա, ուր կան նաև մի քանի քանդակազարդ խաչքարեր, որոնք համարյա բոլորն էլ տեղահան են արված. ոմանք ունեն տապանագրություններ։

Գ. ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արձանագրությունները մեջ ենք բերում վերծանված ձևով, պահպանելով տողերի շարահյուսության կարգը։ Մեջբերումը կատարում ենք ըստ հուշարձանների, նախ արտաքին երեսին փորագրվածները, ապա ներսի կողմում փորագրվածները։ Մի քանի արձանագրություններ խիստ հոդմահարված ու եղծված լինելու պատճառով հնարավոր չի եղել ընդօրինակել, ուստի մեջ ենք բերում այլ աղբյուրներից՝ մատնանշելով աղբյուրը։

Ա. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԻՆ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

1 Կամաւ Աստուծոյ ես Հաս-
2 իկ շինեցի զԱստ-
3 ուծոյ եւ տվի Վարագ-
4 ա Սուրբ Նշանիս եւ Սուրբ Ստ-
5 եփանոսի։ Վարդապետ եւ միաբանիս
6 տվին։Գ։ ժամ Քառասն-
7 ից տաւնին։ Կատարիչ-
8 ին աւրհնին յԱստուծոյ. թվիս ՉԿ (1310)։

Բ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ

1 Ես Շանգամանի-
2 ն կանկ[ենե]ցի խ-
3 աչս Միխ-
4 իթար-
5 ի Դաւր-
6 ոսին.
7 ով կարդ-
8 էմ ի
9 թվ. ՌԺԴ (1565)։

Գ. ՆՈՒՅՆ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

1 Կամաւ կենարարին եւ կուսածին անմահ թագաւորին, յաշխարհակալ Աղուանին, իշխանութեան հոշաբին, ողորմութեամբն Պապաբին, Հասանայ [ես] էաչո բէկս՝ թոռն Խասայ շահի, որդի Մխիթարայ, տվի զմեր ձեռատունկ այգին զ-
2 Գայլարենց ճող՝ տվի Սուրբ Ստեփանոսի. միաբանեմ սահմանեցին։Ը։ ժամ, ։Գ։ Հասանայ, ։Ե։ Սարգսի՝ իմ աղբէրացն ճոգոյն։ Ի թվ. ՉԼ (1281). կատարիչ աւրհնին յԱստուծոյ։

Դ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կամաւն Աստուծոյ ես Սահեարս ու Թանվլբէս միաբանեցամ Սուրբ Ստեփանոսիս
2 եւ տվամ Արեւի ճողն Հովվենց ճողովն. միաբանիս տվին։Ե։ աւր ժամ Վարագա խաչի տաւնին Կատվճատին Աւագին էլ տվամ։

Ե. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կամաւն Աստուծոյ ես Թեիկս միա-
2 բանեցա սուրբ ուխտիս եւ տվի
3 ընձա. միաբանիս տվին
4 ։Բ։ ժամ Թեկդի տաւնին.
5 կատարիչին աւրհնին։

Զ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄՈՒՄ.

1 Կամաւն Աստուծոյ ես Սիմիաւնս տվի
2 զմեր ճայրենի էզին պարոն-
3 ացն՝ ողորմութեամբ էաչո,
4 Մամախաթունին՝ Սուրբ Ստե-
5 փանոսի եւ Սուրբ Նշանիս
6 Մխիթարա ճոգոյն. միաբ-
7 անին սահմանեցին։Գ։ ժամ Տեառ-

8 ընդառաջիե՝ :Բ: Մխիթարա
9 :Ա: ինձ. ի թվիս :Զ:Ծ:Ը: (1309):

Է. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ԱՐԵՎԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԻՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կամաւ Աստուծոյ ես Սեբաս միաբանե-
ցայ
2 սուրբ եկեղեցիս եւ տվի :Ի: դեկան եւ
միայրանք սան-
3 մանեցին :Ա: աւր ժամ Նաւայարին. կա-
տարիչք աւրհնին:

Ը. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կամաւն Աստուծոյ ես Պե-
2 առոս յիմ հալ-
3 ալ արդեանց տուի
4 ծախս զանգիս. մի-
5 աբանքս սահմանեց-
6 ին :Բ: ժամ երեւման խա-
7 չին: Կատարիչ աւրհնին:

Թ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ. ԱՐԵՎԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄՈՒՄ.

1 Կամաւ Աստուծոյ ես Աբեւնատ միաբա-
նեցա Սուրբ Ստեփան-
2 ոսի եւ տվի :Ի: դեկան եկեղեցոյս եւ
միաբանք սահման-
3 եցին :Ա: աւր ժամ խաչգիւտիս: Կատա-
ռիչք աւրհնին յԱստուծոյ:

Ժ. ՆՈՒՅՆ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԻՆ. ՄՈՒՏՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ, ԱՐՏԱՔՈՒՍՑ.

1 Յանուն Աստուծոյ ես Բուրայիս, թոռնս
Սամադալին. որդիս

ԺԱ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ. ՆԱԽՈՐԴՑ ՆԵՐՔԵՎ. ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ.

1 Յանուն Աստուծոյ ես Սարգիս որ տվի
Թանատի վանից Սուրբ Ստեփանոսի գՀաս-
2 իտնայ վարին ճողն անցանիք. միաբանք
տվին ինձ գՅայտնուքեան :ե: աւր :Ի: խո-
ռան. Ով խափանէ :ՅԺԸ: ճայրապետացն ն-
3 զովեալ եղիցի:

ԺՌ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ. ՆԱԽՈՐԴՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Պէ-
նարի. որդի Սմբ-
2 ատա. թոռն Լիպարտի տէր Փանծաքա-
դին եւ
3 ամուսին իմ Սուսա միաբանեցաք Սուրբ
Ստեփանոսիս
4 եւ տուաք ի մեր հալալ հայրենեաց որ ի
5 Փանծաքադին զՄազմանենց եւ զԱ.ան.ենց
6 էգին մեր հոգոյ բաժինն. էփրեմ վարդա-
պետն [եւ] միաբան-

Թանատի վանք.— Ս. Նշան եկեղեցու մուտքը.

7 ին սահմանեցին մեզ Աստուածածնի տո-
նին
8 :Զ: պատարագ. եւ ով որ մեր հոգոյ
տուած վախմ-
9 իս ճակատակ կայ :ՅԺԸ: ճայրապետացն
10 նզովեալ եղիցի :ՉԼԷ: (1348):

ԺԴ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ. ՆԱԽՈՐԴԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ.

1 Կամաւ Աստուծոյ ես Ուրան որ-
2 դի Վհարշաճ Ուռեցի,
3 Տէր Իկենա, միաբան Սուրբ Ստեփ-
4 անոսի Ետու հալալ հայրենեաց
5 որ ինձ բաժին էր հասել
6 գեալիքը Դալանին ճող-
7 երէն իր Դ հատովն եւ Յաւր-
8 ովն. վարդապետն եւ միաբանքն
9 սահմանեցին ինձ :Բ:
10 ժամ Սուրբ Նշանին տաւ-
11 նին՝ կատարի: Թվի ՉՁԵ (1336):

ԺԴ. ՆՈՒՅՆԻ ՄՈՒՏՔԻ ՀԱԿԱՏԱԿԱԼ ՔԱՐԻ ՎՐԱ. ԱՐՏԱՔՈՒՍՑ.

1 Թվ. ՉԾԶ (1307)
2 Կամաւ Աստուծոյ ես Թաներս դուստր

3 Ուրանա, ամուսին Հասանա ասպարա-
պե-
4 տին Հայոց՝ որդոյն Պռոշա եռու ընծա ի
ճա-
5 լալ ընշից իմոց հայրենի տան մեր Թա-
նատի վանաց
6 առաջի Վարագա Սուրբ Նշանիս, Սուրբ
Հարապետիս միաբան. եւ
7 սահմանեցին :Դ: պատարագ ինձ Աւագ
հինգշաբաթ աւր Հա-
8 գոյն գալստեանն, :Բ: Փոխման Աստուա-
ծածնին: Կատարիչք-
9 ն աւրենին:

ԺԵ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՄՈՒՏՔԻ ԿԱՄԱՐԱՔԱՐԻ ՎՐԱ.

1 Կամաւ Աստուծոյ ես Աւագխաթունս ա-
մուսին Վաղթանկա՝ որդ-
2 ոյ Խալաշանի տվի :Ճ: դեկան Սուրբ
Ստեփանոսիս [եւ] Վարագա
3 Սուրբ Նշանիս. վարդապետս [եւ] միա-
բանիս սահմանեցին :Դ: աւր պատար-
4 ագ՝ :Բ: Մառագարդին, :Բ: Զատկին. կա-
տարիչքն աւրենն-
5 ին :Թվ: ՉԿԲ (1313). խափանողն դատի:

ԺԶ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՄՈՒՏՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ.

1 [Կամաւ անմահ] թագաւորին եւ խաչե-
ցեալոյն Աստուծոյ, ի յարե-
2 [այու]թեան մեծին եւ բարեպաշտին
Ապաղայ դանին [եւ ի
3 տէրութեան] Հայկազնեայ տոնմիս եւ
սեռիս Թորգոմեայ,
4 ի կաթողիկոսութեան Տեառն Յակոբայ եւ
յարիակոն եւ քաջատոհմ յիշ-
5 խանութեան Պռոշայ եւ որդոյն Պապա-
ին, Հասանա, մանկան էշոյ, շինեցաւ
6 սուրբ եկեղեցիս բնակարան փառացն
Աստուծոյ եւ յարկ Սրբոյն Ստեփանոսի, յեր-
կար կենդան-
7 ութիւն պարոնացն. եւ սահմանեցաք
փոխարէն :Գ: աւր ամէն եկեղեցիս անաւ-
գել զՔրիստոս
8 [պատարագել] մեծ պարոնին մեռոյ
Պռոշայ: Կատարիչք գրոյս աւրենին յԱստու-
ծոյ:
9 Մեք պարոնայքս եւ միաբանքս արձա-
նագրեցաք որ ով նակառակ կայ այսմ կտա-
կիս դատի
10 յԱստուծոյ եւ յամենայն սրբոց. ամէն:

ԺԷ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կամաւ Աստուծոյ ես Թաւրինայ միայ-
բանեցայ սուրբ ուխտիս, տուի
2 յիմ նալալ ընշից ընծայ ի Սուրբ Ստե-
փանոս. միաբանքս
3 սահմանեցին :Ա: աւր պատարագ Սուրբ
Խաչին: Կատարիչքն աւրենին յԱստուծոյ:

ԺԸ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կամաւ Աստուծոյ ամենակալին ես Անի՝
որդի Խալթին եւ ամուսին
2 իմ Սախոխ եւ Տուրատփայէս միաբանե-
ցաք Սուրբ Նշանիս եւ
3 Սուրբ Ստեփանոսիս Եւ տվիք զմեր գնած
իգին Խատոբալէգայ թոի մե-
4 ծաքար. միաբանքս խոստացան :Դ: պա-
տարագ ինձ, .Ա. Սախոխին, .Ա. Լսունկանն...:

ԺԹ. ՆՈՒՅՆ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ՄՈՒՏՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ, ՆԵՐՍԻՑ.

1 Ես Աւքսալիտա :Ի: դի-
2 կան տվի եկեղեցոյս.
3 :Բ: ժամ Սուրբ Սարգսին. կա-
4 տարիչքն աւրենին:

Ի. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՄՈՒՏՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ.

1 Կամաւ ամենակալին Աստուծոյ
2 ես Ջուլս, թոռն Ամիր Հասանայ, որ-
3 դի էաչո եւ կենակիցն իմ Խոնաղչէն
4 տվամ զԱւգասկնա ջրաղացն Սուրբ Ստե-
փանոսի
5 գերեզմանս. վարդապետ [եւ] միաբանքս
սահմանեցին :Գ:
6 աւր պատարագ Սուրբ Խաչին
7 տաւնին, :Բ: իմ աղբաւրն Խո-
8 ռնասադին, :Ա: էլխաթլոյ:
9 Կատարիչք աւրենին, խափանողք դատին
յԱստուծոյ: .

ԻԱ. ՆՈՒՅՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԼՈՒՍԱՄՈՒՏԻՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կամաւն Աստուծոյ ես Թանվլրքս, դուստր
Միսի-
2 քարա, թոռն Խալաշանի տվի :Ա: վեց-
կի իմ
3 գերեզմանատունս. միաբանքս սահմա-
նեցին
4 :Դ: ժամ Սանդխտոն տաւնին, :Բ: ինձ, :Բ:
5 իմ մաւր: Կատարիչք աւրենին Աստու-
ծոյ:

ԻԲ. ՆՈՒՅՆԻ ՆԵՐՍՈՒՄ, ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԽՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԿԱՄԱՐԻ ՎՐԱ.

Որ աղաւթէ յայսմ քաւարանիս՝ Սանակ
յաղաւթս յիշեցէք:

ԺԹ. ԱՌԱՔԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՔԵԼԻ ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵԱՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՄԱՐ.

1 Եւ Ամիրլանս ոմի զեռխս մասուսոս
2 ալալ արգիանց եւ ազատաւարք սուրբ
3 ոչխս խաստացան :Թ: ար
4 գասարաց Դաւթի եւ
5 Մակարա տաս-
6 ցին. կատարիչ-
7 ք ստանին:

ԺԱ. ԱՌԱՔԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՔԵԼԻ ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵԱՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԻՇՈՂԱՑ, ՀԱՐԱՎ

1 Կանգնեցաւ խա-
2 չս քարեղեան Պե-
3 տրոսի եւ Թեոդոս
4 իրաց:

ԺԲ. ԱՌԱՔԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՔԵԼԻ ՀԻՇՈՂ ԱՐՔԵԱՊԻՍԿՈՊՈՍԻ.

1 Յաճուռ Առաւեալ ես Դեպս :Ես: զնչաւ
2 մի
3 մասուսոս՝ յիշատակ ինձ եւ ծ-
3 ողոց իմոց:

ԺԳ. ԱՌԱՔ ԱՌԱՔԵԼԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՅՍ ԱՐՔԵԱՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐՔԵԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ.

1 Կանգուն Առաւեալ ես Թարգիչ իմ
2 գասանցի արարանիսկոպոս ե-
3 ա. Մանկարանցին :Պարզ
4 ակրն ձաղ Սուրբ Աստուա-
5 ած ակն. վերանոր նորոգ-
6 ին :Թ: տան մեր Սուրբ Աստուածածնի
7 առանց՝ :Ա: եարիցին :Ա: ին:

ԺԴ. ԱՌԱՔ ՏԵՂԱՆ. ԱՆԱՐԱՊԵԼ ԱՐՔԱՆ.

1 Կանգնեցաւ:
2 խաչս քարեղեան
3 ասպարիզ
4 ն. իւր ելեալ-
5 ցին՝ Անգրանիկ.
6 Թվ: ՌԿԾ-ին (1354):

ԺԵ. Ի. ԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՔԵԼԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊԻ ԱՐԱՐ ԹԱՆԱՐԻ ՎՐԱ.

Այս է ծանիցիս Սարգիս քանանայի որ սարանամ ի Տէր զանիցաս. յաւուրս յիշելոյ. Թվ. ՌԾ (1356):

ԺԶ. Ի. ԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՔԵԼԻՆ ՊԱՏԻՎՈՅՆ ՀԱՄԱՐՅՈՆ ՏԱՆ ՇԱՆԱՐ ՄԻ ՊԱՏԱՐԻ ՎՐԱ.

1 Յանուն
2 Առաւեալ ես
3 Խաչուն.
4 գասար
5 Հալանի
6 խաչ :Ես:
7 զնչաւ ա-
8 ոչ սարք էկն-
9 զնցիս ի-
10 արգելցին:

Լ. ԱՌԱՔ ՏԵՂԱՆ. ՄԻ ԱՐԱ ՊԱՏԱՐԻ ՎՐԱ.

1 Կանգուն Առաւեալ ես Ազարէս...
2 մեն ոչի էղբարանի զԳարասանարս
3 Ներսիսարքենց ճաղերն Սուրբ Նշանիս վա-
4 ճաց արարան բոլի զնոլի եւ զի...

ԼԱ. ԱՌԱՔԱՆ ԱՐԱՐՈՅՆԱՆ ԳԱՅՍ ՏԱՆ ՇԱՆԱՐ ՄԻ ՊԱՏԱՐԻ ՎՐԱ

1 Կանգուն Առաւեալ ես Ուստար եւ ամուսին իմ Գասա-
2 ճին վիրարանցաւ Սուրբ Աստուածածնի եւ ամբար ի
3 ճաղալ բանից մեզ ճաղ բաժին. վարդա-
4 վիրարանի ասիմանցին Տարզարարին :Ա: գասարաց. :Դ:
5 :Ես [ես] :Ա: Գանցիցին. կատարիչն տանին յԱառաւեալ:

ԼԲ. ԱՌԱՔ ՏԵՂԱՆ. ՄԻ ԱՐԱ ՊԱՏԱՐԻ ՎՐԱ.

1 Կանգուն Առաւեալ այս մեր...
2 Սանգասա. Փանարգալա...
3 Առաւեալ ակամ զկանգա...
4 ա ճաղ գրան գաղա[գն ի Սուրբ Աստ-]
5 ուած. գրեցին :Ե: ար գա[սարաց]...

ԼԳ. ԱՌԱՔ ՏԵՂԱՆ. ԱՆԱՐԱՊԵԼ ԱՐԱ ՄԻ ԱՌԱՔԵԼԻՆ ՊԱՏԱՐԻ ՎՐԱ.

Թվ. ՉԽԲ (1306). Կանգուն Առաւեալ ես Սարգիս կանգնեցի զխաչս քարեղեան ինձ եւ ծնողաց իմոց:

ԼԴ. ԱՌԱՔ ՏԵՂԱՆ. ՄԻ ԱՐԱ ՊԱՏԱՐԻ ՎՐԱ.

1 ...ի գարոյ գա...
2 ...ոչի ար ազարա...
3 ...ար մեռ կա...
4 ...Թանան զանի Սուրբ Ս[տեփանոս]...
5 ... Սուրբ Սարգսի ստանին...

ԼԵ. ՎԵՐՋՆԻՍ ԿԻՑ ՄԻ ԱՅԼ ԲԵԿՈՐԻ ՎՐԱ.

1 ... ցոց այս ո...
2 ... պա ի նմարեմ...
3 ... ա տակա ձոր...
4 ... [Ստե]փանոսի տ...
5 ... սուրեան...

ԼԶ. ՆԱԵՈՐԴԻՆ ԿԻՑ ՄԻ ԱՅԼ ԲԵԿՈՐԻ ՎՐԱ.

1 [Կամաւ Աստուծոյ] ես Վարճամշան Ուռեցի...
2 ... ցայ Թանատի վանաց եւ տ[վի]...
3 ... տափոյ ճոգն Սուրբ Ստեփանոսիս Խարդապետ եւ
4 միաբանեմս] սահմանեցին :Գ: աւր պատարագ Համբարձման տաւնին...
5 ... յ. կատարիչք աւրհնին Աստուծոյ, խափանիչք դատին
6 յԱստուծոյ:

ԼԷ. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԻՆ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

«Կամաւն Աստուծոյ ես Մտինանա տուի զմեր հայրենիքն պարոնացն ողորմութեամբ էաչոյ Մարիամ Խաթունին Սուրբ Ստեփանոսի և Սուրբ Նշանիս Մխիթարայ ճոգոյն. միաբանքս սահմանեցին :Դ: ժամ Տեառնընդառաջին, :Բ: Մխիթարայ, մէկն ինձ. ի թվիս ՉԺԸ»[8]:

ԼԸ. ՆՈՒՅՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄԻ ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ԵՌՈՐՋԸ.

«Կամաւն Աստուծոյ ես Ասլան ափայս և իմ որդիքս միաբանեցաք Սուրբ Ստեփանոսիս և տվաք :Ճ: դեկան ընձայ, վարդապետք և միաբանք սահմանեցին զշաբաթն Զատկին: Կատարիչք օրհնին յԱստուծոյ. թվին ՉՀԵ (1326)»[9]:

[8] Սարգիս արհեպիսկոպոս Ջալալեանց, «Ժամանակագրութիւն ի Մեծն Հայաստանն, մասն Բ, Տփխիս, 1856 թ., էջ 208։

[9] Նույն տեղում, էջ 211։

ՎԱՆՔԻՑ ՀԱՐԱՎ ԳՏՆՎՈՂ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՏԱՊԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[7].

ԼԲ.

Թուի .ՈԿԷ. (1218). կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն հաչատոյ անյաղթ փիլիսոփայի տարաժամ փոխեցաւ յիշեցէք ի Քս.

Ե.

Թվ. ՈՂ. (1241). Աստուած ողորմի Գորգայ և Գրիգորոյ.

ԵԱ.

Ի թվ. ՉԱ. (1252). Մեք Սարգիս և Սիմեոն կանգնեցաք զխաչս ի բարեխաւսու...

ԵԲ. Ս. ՍՏՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԿՅԱՆ ՍՏՈՐԻՆ ԵՌԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՎԵՐԵՎՈՒՄ.

«Կամաւն Աստուծոյ ես Մկրտիչ ծառա Աստուծոյ ետու յիմ հալալ արդեանց եւ սպասաւորք սուրբ ուխտիս խոստացան .Բ. աւր ժամ Սուրբ Յակոբա տաւնին. կատարիչք աւրհնին յԱստուծոյ»[8]:

ԵԳ. ՆՈՒՅՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

«Սուրբ խաչս բարեխաւս է Մուշեղի»[9]:

ԵԴ. ՆՈՐԻՑ ՎԱՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ.

Ես Մանուէլ քահանայ կանգնեցի զխաչս բարեխաւս հարազատ եղբաւր իմոյ հաչատուր. յաղաւթս յիշեցէք. թվ. ՉԻԶ (1277):

[7] Գարեգին արհեպիսկոպոս Հովսեփյան, «Խաղբակյանք կամ Զաքարյանք Հայոց պատմության մեջ», Գ, Նյու-Յորք, 1942/3։

[8] «Նյութեր Կովկասի հնագիտության», գիրք XIII, Մոսկվա, 1916 թ., էջ 127 (տեքստը ռուսերեն, արձանագրությունները հայերեն լեզուներով)։

[9] Նույն տեղում, էջ 133։

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Դվինի պեղումները.— Պատմական Հայաստանի այս հռչակավոր մայրաքաղաքի պեղումները երկար տարիների պատմություն ունեն: Այդ աշխատանքը անխոնջ հետաքրքրությամբ և ձեռնհասորեն վարում է հնագետ-պատմաբան պրոֆ. Կարո Ղաֆադարյանը: Պեղման աշխատանքների հայտնի տարվա ծրագիրը գործադրության մեջ դրվեց հունիսի սկզբներից և բավականին արդյունավետ եղավ:

Քաղաքի միջնաբերդում հայտնաբերվեցին հեթանոսական ժամանակներից մնացած 2 ատրուշաններ, մեկ հատ ուղղեղ սկուտեղ՝ կենտրոնում թագավորական պատկերով, մեկ հատ եղերին պարթևական գրերով:

Արշավանքները պարզել է, որ Դվինն ունեցել է ապակու գործարան. գտնված են թրծման հնոցներ և ապակու հումք: Դվինն ունեցել է նաև հախճապակու արտադրություն: Հայտնաբերված են շուրջ 400 կտոր ապակյա և հախճապակյա իրեր:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում վերջերս հայտնաբերված հեթանոսական արձանների բեկորներ, հյուսնաղային գործածության իրեր, կշռաքարեր և այլն: Պեղումները շարունակվելու են մինչև ուշ աշուն:

Ուսումնասիրություն Կիլիկյան մանրանկարչության մասին.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել Լևոն Ավարյանի «Կիլիկիայի XII—XIII դարերի մանրանկարչությունը» նոր և հետաքրքրական աշխատությունը:

Տայով Կիլիկյան մանրանկարչության զարգացման պատկերը, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ այդ մանրանկարչությունը զարգացել ու կատարելագործվել է բուն Հայաստանի մանրանկարչական արվեստի հիման վրա, կրելով նաև Բյուզանդիոնի և մասամբ Արևելքի ազդեցությունը:

Առանձին գլուխ է նվիրված մանրանկարչության հռչակավոր վարպետ Թորոս Ռոսլինի աշխատությունների վերլուծման: Հեղինակը այն տեսակետն է հայտնում, որ Ռոսլինին վերագրվող մանրանկարչական առանձին գլուխ-գործոցներ ամենայն հավանականությամբ պատկանելիս են եղել տարբեր, սակայն անանուն հեղինակների, որովհետև այդ գործերը տարբերվում են Ռոսլինի գործերից իրենց ոճով և կատարողական վարպետության տեսակետից չեն փիջում վերջինին:

Արժեքավոր այս գիրքը նշանակալից ավանդ է հայ մանրանկարչության պատմության ուսումնասիրման գործում:

Նոր աշխատություն Հայաստանի պատմության վերաբերյալ.— Հայաստանի պետական հրատարակությունը լույս է ընծայել Լ. Բաբայանի աշխատությունը՝ «Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում»: Հետաքրքրական և արժեքավոր այս գիրքը նվիրված է Հայաստանի և հայ ժողովրդի պատմության ամենաքիչ ուսումնասիրված մի շրջանին՝ մոնղոլական տիրապետության շրջանին:

Հեղինակը հանգամանորեն տվել է մոնղոլական արշավանքների պատկերը, նվաճողների վարած հարկային և տնտեսական քաղաքականությունը և դրա հետևանքով երկրի տնտեսության ու արտադրական ուժերի անկման տխուր պատկերը:

Ավելի քան 600 էջից բաղկացած այս աշխատությունը գալիս է կզալիորեն լրացնելու այդ շրջանի մեր պատմության բացը և լույս սփռելու մեր ժողովրդի ամենամռայլ շրջանի վրա:

Արժեքավոր աշխատություն հայ և վրաց ժողովուրդների մշակութային կապերի մասին.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը լույս է ընծայել հայտնի պատմաբան և բանասեր, հանգուցյալ դոկտոր-պրոֆեսոր Լևոն Մելիքսեթ-Բեկի «Հայ գրողները և Վրաստանը» աշխատության առաջին հատորը:

Արժեքավոր այս աշխատությունը շատ նոր տեղեկություններ է տալիս հայ և վրաց ժողովուրդների գրական ու մշակութային կապերի մասին: Գրքի մեջ ցույց է տրված, որ հայ և վրաց գրողները, պատմագիրներն ու

մշակույթի գործիչները սերտորեն շփվել և հարաբերության մեջ են եղել սկսած Ե դարից: Այդ կապերն առավել պարզացել են ԺԹ դարում: Խոսելով ԺԹ դարի մեր գրողների ու հասարակական գործիչների գործունեության մասին, հեղինակը հետաքրքրական նորություններ է ասում հայ և վրաց ժողովուրդների մշակութային կապերի և համագործակցության վերաբերյալ: Գրքում ցույց են տրված յուրաքանչյուր հայ հեղինակի մասին եղած վրացերեն գրականությունը և նրանից կատարված թարգմանությունները:

Պրոֆ.-դոկտ. Լ. Մելիքսեթ-Բեկը հետաքրքրական փաստեր ու նորություններ է հաղորդել նաև հայ և վրաց լեզուների փոխադրեցության մասին:

Հրաչյա Աճառյանի անվամբ.— Հայաստանի Մինիստրների սովետի որոշմամբ, գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտը կոչվել է հայ ականավոր գիտնական, լեզվաբան Հրաչյա Հակոբի Աճառյանի անվամբ:

Հանգուցյալ գիտնականին այս պատիվը տրված է նկատի ունենալով նրա բացառիկ ծառայությունները հայագիտության և հայ լեզվաբանության զարգացման գործում, ինչպես նաև նրա բազմամյա բեղմնավոր մանկավարժական գործունեությունը:

Հովհաննես Թումանյանի գրական ժառանգությունը.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը լույս է ընծայել մի ստվարածավալ գիրք, նվիրված Հովհաննես Թումանյանի գրական ժառանգության ուսումնասիրությանը: Հատորը կոչվում է «Թումանյան: Ուսումնասիրություններ, հրապարակումներ»: Նախատեսված է այս խորագրով հրատարակել մի քանի հատորներ, որոնք ամբողջովին պիտի պարփակեն մեծանուն գրողի գրական ժառանգությունը:

Առաջին հատորում զետեղված են մի շարք չհրատարակված գեղարվեստական երկերի տարբերակներ ու սևագրություններ, նամակներ, ելույթներ, ինչպես նաև մեր մի շարք գրականագետների ուսումնասիրությունները Հովհաննես Թումանյանի մասին: Մեծ արժեք և հետաքրքրություն են ներկայացնում անմահ հեղինակի նամակները և ելույթները:

Հատորը կազմել, ծանոթագրել ու խմբագրել են գրականագետներ Ա. Ինջիկյանը և Է. Ջրբաշյանը:

Ամերիկահայ գրող Ջավեն Սյուրմելյանը Հայաստանում.— Օգոստոսի սկզբներին, Սովետական Միության մեջ տուրիստական պտույտ կատարելու նպատակով, Երևան ժամանեց ամերիկահայ հայտնի գրող Ջավեն Սյուրմելյանը: Նա Երևանում մնաց 10 օր, արժանանալով Հայաստանի գրողների փության և սիրալիրության հետ մշակութային կապի ընկերության ջերմ ընդունելության: Ջավեն Սյուրմելյանը հյուր եղավ իր հարազատ քրոջ՝ Եվգինե Սարգսյանի մոտ, որին չէր տեսել 44 տարի:

Անվանի գրողը ծանոթացավ Հայաստանի մշակութային կյանքին, դիտեց Երևանը, ուր եղել էր 1920 թվականին մի քանի ամսով, այցելեց Սևան, Դիլիջան, Գեղարդ, Գառնի, Զվարթնոց: Ամենուրեք նա բացառիկ ջերմությամբ արտահայտվում էր Հայաստանից և նրա ժողովրդից ստացած իր սրտառուչ, լավ տպավորությունների մասին:

Ջավեն Սյուրմելյանը ջերմ սիրով ու ակնածանքով այցելություն տվեց Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին և սիրալիր զրույց ունեցավ Նրա հետ: Անվանի գրողը երկյուղած հավատով իր ուխտը կատարեց Մայր Տաճարում, եղավ թանգարանում, նոր Վեհարանում և լավագույն տպավորություններով հրաժեշտ առավ Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից:

Երևանի նոր հատակագիծը.— «Երևանհատակագիծ» ինստիտուտը շուտով կավարտի մայրաքաղաքի նոր հատակագիծը: Ըստ նախագծի, մոտ ապագայում քաղաքը կունենա 900 000 բնակիչ: Նրա գրված տարածությունը կընդարձակվի մեկ և կես անգամ գլխավորապես դեպի արևմուտք և հյուսիս: Բնակելի տարածությունը կեռապատկվի՝ ներկայիս 3 000 000-ից կհասնի մինչև 9 000 000 քառակուսի մետրի:

Նախատեսվում է քաղաքը բաժանել 9 վարչական շրջանների, յուրաքանչյուրը 70—150 000 բնակչությամբ: Նոր կառուցվելիք արդյունաբերական ձեռնարկություններին կից կստեղծվեն բնակելի թաղամասեր, որոնք իրար հետ կմիաձվեն նոր, լայնահուն մայրուղիներով: Հատուկ ուշադրություն է նվիրվելու քաղաքի կանաչապատմանը, գցվելու են նոր պուրակներ, պուրակներ, արհեստական անտառներ: Բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնելու է ոչ պակաս քան 20 քառակուսի մետր կանաչ տարածություն:

Հրազդանի աջ ափին, դեպի Էջմիածին տանող ճանապարհի շրջակայքում, ստեղծվելու է նոր կենտրոն իր հրապարակով և ճարտարապետական նոր կառույցներով:

Պետական խորհրդականներից կազմված հատուկ հանձնաժողովը քննության առավ Երևանի նոր հատակագիծը և մի շարք էական դիտողություններից հետո բարձր գնահատական տվեց կատարված նախագծային աշխատանքներին:

Պետական համալսարանի նոր շենքը.— Արդեն մի քանի տարի է, ինչ կառուցվում է Երևանի պետական համալսարանի նոր շենքը Այգեստան կոչված թաղամասում: Աբովյան փողոցի վրա գտնվող երեքհարկանի բավական մեծ շենքը վաղուց է, ինչ չէր բավարարում համալսարանի պահանջներին:

Նոր համալսարանը բաղկացած կլինի 8 խոշոր շենքերից, որտեղ կարող են սովորել 12 000 ուսանողներ: Հարակից օժանդակ շենքերով միասին, համալսարանը կներկայացնի ուսանողական մի մեծ թաղամաս պարտեզներով, ցայտաղբյուրներով, ջրավազաններով, մարզական հրապարակներով և դահլիճներով:

Նախատեսված շենքերից մի քանիսն արդեն կառուցված են և գործում են, ինչպես օրինակ բնագիտական ֆակուլտետի գեղեցիկ շենքը:

Ներկայիս հիմնական ուշադրությունը կենտրոնացված է գլխավոր, կենտրոնական հատվածի վրա, որը պետք է ավարտվի այս տարի: Ռեթորական այս շենքը կունենա շուրջ 13 000 քառակուսի մետր օգտագործելի տարածություն: Այստեղ են լինելու համալսարանի գրադարանը և ընթերցարանը, ուր միաժամանակ կարող են պարապել 600 հոգի: Դասախոսությունների մեծ դահլիճը կունենա 1000 տեղ: Մեկ ամբողջ հարկ հատկացվելու է գիտական լաբորատորիաների:

Հայաստանի բնակչությունը— Կենտրոնական վիճակագրական վարչության տվյալների համաձայն, առ 1-ը հուլիսի 1964 թվականի, Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թիվը կազմել է ավելի քան 2 100 000 մարդ:

Բնակարանային շինարարություն.— 1964 թվականի առաջին կիսամյակում, հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը), ամբողջ Հայաստանում օգտագործման է հանձնված 230 000 քառակուսի մետր նոր բնակելի տարածություն: Դա կազմում է շուրջ 5000 բնակարան, օժտված անհրաժեշտ հարմարություններով: Կիսամյակի ծրագիրը կատարված է 106 տոկոսով: Այդ բոլոր բնակարանները կառուցված են պետական միջոցներով:

Բացի այդ, հանրապետության քաղաքներում և գյուղերում նույն ժամանակամիջոցում կառուցված են մեծ քանակությամբ անձնական տներ բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների կողմից՝ ի հաշիվ իրենց գնայողությունների և պետությունից ստացված վարկերի:

Հետաքրքրական թվեր.— Անցյալ 1963—1964 ուսումնական տարում Հայաստանի բոլոր հանրակրթական դպրոցներում սովորողների ընդհանուր թիվը կազմել է 450 500 հոգի, կամ մոտ 40 000 ավելի, քան նախորդ ուսումնական տարում: Միջնակարգ դպրոցներն ավարտել են 7 000 հոգի, գրեթե 2 500-ով ավելի, քան նախորդ ուսումնական տարում:

Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում (տեխնիկումներ, ուսումնարաններ) սովորողների թիվը նույն ուսումնական տարում կազմել է 23 100 հոգի կամ 3 000-ով ավելի, քան նախորդ տարին: Այս տարի այդ հաստատություններն ավարտել են 3 900 հոգի:

Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների ընդհանուր թիվը կազմում էր 29 100 հոգի, կամ 3 200-ով ավելի, քան նախորդ տարին: 3 000 ուսանողներ այս տարի ավարտեցին բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Եվս մի նոր ջրմուղ Երևանի համար.— Վերջերս ավարտվեց Երևանի մեկ նոր ջրմուղի կառուցումը: Ջրմուղը սկիզբ է առնում Հրազդանի ձորում, Արզնի բուժավայրից ոչ հեռու գտնվող աղբյուրներից (ոչ հանքային) և ունի շուրջ 15 կիլոմետր երկարություն: Նոր ջրմուղը մեկ վայրկյանում տալիս է շուրջ 500 լիտր ջուր: Այդ քանակը առաջիկայում կհասցվի 620 լիտրի:

Ջրմուղը կառուցվել է Երևանի պոլիմինիլացետատ քիմիական գործարանի միջոցներով և հիմնականում բավարարելու է այդ հսկայական գործարանի կարիքները: Անկասկած ջրմուղից կօգտվի նաև քաղաքը, զգալիորեն ավելացնելով սպառվող ջրի քանակը:

Այս ջրմուղը թվով հինգերորդն է, որտեղով սնվում է մայրաքաղաքը:

Սփյուռքահայ ուսանողներ Երևանի ուսումնական հաստատություններում.— Սկսած 1957 թվականից, Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունվում են սփյուռքահայ երիտասարդներ: 1957 թվականին Երևանում սովորում էին ընդամենը 15 հոգի, մինչդեռ 1963—1964 ուսումնական տարում օտարերկրյա ուսանողների թիվը կազմել է 140 հոգի, շուրջ 15 տարբեր երկրներից:

Առաջիկա ուսումնական տարում Երևանում սովորելու համար կժամանեն ևս 70 պատանիներ ու աղջիկներ:

Սփյուռքահայ ուսանողները ընդունվում են գլխավորապես պետական համալսարանում, պոլիտեխնիկ և բժշկական ինստիտուտներում: Այս տարի նրանցից 6 հոգի ավարտեցին բժշկական ինստիտուտը և համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

Բացի սփյուռքահայ ուսանողներից, Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են նաև որոշ թվով օտարերկրացի ուսանողներ Միջին և Մերձավոր Արևելքի երկրներից: